հայր զորդի. և արար նմա ազգութիւն որպէս խոս-
տացաւ հարց մերոց առաջնոց՝ աբրահամու, և զա-
ւակի նորա յաւիտեան։

Զ. յսորիկ եղէն առաջին և գլխաւոր զրուցատու-
թիւք 'ի մէջ կուսին մարիամու և եղիսաբեթի. զը-
բոյդք արդարև ոնձայինք, բան որում վայել էր էր
կոցուն նոցա, որք այլ և այլ օրինակաւ ընդունարան
եղեն այ. եղիսաբեթ հոգւով ևեթ, իսկ մարիամ
հոգեպէս և մարմնապէս։ Զկաց յետ այսորիկ մա-
րիամ ընդ եղիսաբեթի ամիսս իրբև երիս. և ապա
դարձաւ 'ի տուն իւր 'ի Նազարեթ։

ԳԼ. ԼԹ.

Խոստանի Յովսեփ ընդ յղորդի խոսին Աբրահամ։ Լսոսեալ ի հրեշտակէն զխորհուրդն՝ գոհանայ ընդ Աբրահամ ի նազարէն։

*Խոսեցեալ զմայրն նոցա Աբրահամ՝ յոսկեփոս մինչև եկեալ առ միմեանս գոսաս յղացեալ ի հոգ. ևոյն ոգի ։ (մատթ. ա. 18։)

*Լս. եկաց մարիամ առ նմա իբրև ասիսս երթս՝ և դարձաւ ի տուն իւր ։ (զուկ. ա. 56։)

Որդ այն եռամեան ժամանակս ի յայտ եկն կուսական յղութիւն մարիամու. երևելի ազգ ամենեցուն։ Լայց ոչ տայր զարմանս ինչ. քանզի երկոսաբեմ գիտեր յուծային յայտանելիս լինել այնոր պատերազի յղութիւն՝ ի հոգւոյն ոգի. իսկ այլք ոչոց անծանեալ էր խորհուրդն, հասանելիս լինել պատգ օրինաւոր ամուսնանալիս մարիամու ընդ յովսեփայ։ Լոցց յովսեփ որ գիտէր զանձն անկցորդ ամենեւ ինչ ոչիսի յղութիւն, խառնիցաւ յոյժ։ Ալ իշխէր ի թիւր կասկածանս ինչ բերել զանձրաւ ապաւնոյ զանապատս հարսնի իւրմի, գիտելով զպանծալի հասանաւսի և զարքունի կուսին. բայց յայլմի կողմանէ, նշանն յայտնի յղաւ, որոյ խորհուրդն անյայտ էր նմի, թանէր բրանդաղանալ գնա ի ձախող դատաղութիւն։ Յայսպիսի հակառակ խորհրդոց յուզմանս ծփեալ, ոչ ասկաս ուուրս եկաց մնաց ի տատատանութիւն առանց ի մի կամ ի միս կողմն որոշելոյ զմիտս իւր. անհնարին թանէր նմա այնպիսի հրաշալի կուսի զիջանիլ ի թերեն ինչ մեղս անդամ, թանզ թէ յայնպիսի ծանանուն. բայց նոյնաբնակ անհնարին թանէր առանց կցորդութիւն առն՝ լինել յղութիւն։ վասն որոյ վարանեալ ի մտի, և ոչ կարէր երթալ դատանել, թէ

զուցէ կայցէ անդ զաղանի ինչ պատճառս, զոր ինքն ոչ գիտէ։

Լ՚զարթէն յանէկ էր այլ զարդարեալ ամենայն առաքինութիւնքն, զոր աւետարանին միով բառիւ յայտ առնէ, կոչելով զնա արդար։ * Լ՚չէ յանէկ այլ նոցա քանզի արդար էր։ ուր բառդ Լ՚զարդ, բաց ՚ի մնամուտ առաքինութենէ արդարութիւն՝ նշանակէ զարդութիւն հանրական, յորում պարփակին ամենայն առաքինութիւնքն։ Լ՚չ յիրարս՝ յայս իսկ գիտցուած զանազան առաքինութիւս յանձին երևեցոյց. զարատ կատանս, զանէր, զդիւթէն, զմնարարութիւն և զիսնիմութիւն։ Լ՚ամ՝ հաստատեալ ՚ի մտի իւրում ցիսոսիլ ինչ բնաւ ընդ ումեք, յորմէ մարթի իցէ միշտ ինչ հատանել կուսին։ * Լ՚և կամիր առակել զնա։ այսինքն յայտնի առնել, յատուանս զատուածոց հանելով, կամ ինքնին կշտամբելով, կամ զեթ արտաքին նշան ինն գժգոհութիւն ցուցանելով նմա։ մինչ զի հարցանել ինչ անգամ զանմանել ոչ իշխէր, առ՚ի չատ պատճառս ազգեցոյց կուռապան հանելու։ Լ՚ոկրատ՝ եդ ՚ի մտի պատճառատուր թողուլ զնա մեկնել յիւրմէ, և երթալ ՚ի տուն ծնողացն. այս է ասելն։ * Լ՚ստրհեցաւ լռելեայն արձակել զնա։ հեռանալով ՚ի նմանէ ամենիսին պատրուակս, զի ամենեքին անցեալ ինամոցն զիտաւորութիւնն իւր, և մի կարիցէ ոք յայտնանել առեղի կուսածատոց ինչ առնուլ զկալանն։ Լ՚թէ ասկարին ՚ի տունն զարարեալ էին, որպէս կարծէ կաղինոս, մարթի էր յանէկ թողուլ զկոյսն անդ առ երիտասարդն ազգական նոցա ընդ պատրուակաւ յոյսն թէն, որում ծանր էր յղի զոյն երկար և լեռնային Ճանապարհ հետի կատարել։ և ինքն միայն գնանալ ՚ի տուն իւր մասն իւրոց առանին գործառնութեանց։ Լ՚սկ եթէ ՚ի նոգարանէն էին ՚ի տուն իւրեանց, թէև և չլինէր մարթի յղել զնա ՚ի տուն ծնողացն, կարէր ինքն յանէկ հեռանալ ՚ի տանէ իւրմէ, պատճառելով թէ կոչեցեալ է ուրեք ՚ի գործ արհեստին իւրոց։ Լ՚այ է լռելեայն արձակել. ապա թէ ոչ եթէ գիր ապահարզանի տուեալ էր նմա, և այնպէս արձա-

կենալ, որպէս թէ զժառանգն կայցէ ընդ ինքն և ընդ հարսն իւր, ոչ փոքր կասկած առեալ էր այլոց, և բացեալ զբերանս ամենեցուն խօսել զանպատեհս զանարատս կուսին, զոր ինքն ոչ կամէր։ Մանաւանդ սատ ի մեջ բերին ի յայտառութիւն ըրիգեատայի, թէ յոմանէ յառաջագոյն տեղեակ էր խորհրդոյն, զոր կոյսն մարիամ յայտնեալ էր նմա. և թէ առաջիկայ գոսա, յորժամ եղիսաբեթ յաղջատեղին՝ մայրն տան իւրոյ կոչեաց զկոյսն։ Ա ասն որոյ այն որոշումն յոմանէ փոյ հեռանալ ի կուսէն՝ ոչ էր վասն թիւր ինչ կասկածանաց, այլ առ խորին խնամարհութեան հոգւոյ իւրոյ, անարժան հանդիսելով զանձն բնակել ի միասին ընդ այնպիսի գերարհրաշ մարդ և որդւոյ։ Բայց աւետարանիչն այլագոյ վկայէ. որում չէ արժան բռնական մեկնութիւն տալ առ անասելոյ այնպիսի առանձնական յայտնութեանց։

Յոմանէ այսպիսի խորհրդով՝ մինչդեռ ի նեղջիոյ ընկղմէր, երևեցաւ նմա հրեշտակն տան՝ թէ, սկսա յերարգի, բայց այնպիսի նշանաբ, զի ոչ եթող նմա տեղի երկուսանաց ի իրական երևումն իւր. և բաղալերեաց զնա ի բնկնել առանաւ կամ պարել առ իւր զկինն իւր զմարիամ կոյս, քանզի մանուկն յղացեալ յարամայեն նորա՝ զորձ է սուրբ հոգւոյն սրբոյ ծնցի մարիամ կուսութիւն զմիածին իւր զյիսուս։ և դու սուրբ կոչեացես զնա Յիսուս, որ թարգմանի փրկիչ. զնա զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց։ Ասելով փրկեսցէ ի մեղաց, ասայ խմանալ թէ մանուկն է միանգամայն աստ և մարդ. զի թէ չլինէր մարդ, չկարէր ծնանիլ ի մարդ և թէ չէր աստ, չկարէր փրկել ի մեղաց։ Ա. ասաց հրեշտակն, թէ Նա փրկեսցէ զժողովուրդն խորհրդոյն, այլ զժողովուրդ իւր. քանզի ամենայն հաւատացեալք յորմէ ազգէ և խղճի՝ ժողովուրդ Աստի Նոյնի էին։ Նասել աւետարանչին ասասնոր * Ինչպէս եկեալ առ միմեանս։ և թէ * Ա. դիտեր զնա մինչև ծնանի զորդին իւր զանդրանիկ։ չէ մարթի որպէս կանխանշանակեցաք՝ հիանալ զանանիկ թէ զկնի ծնանելոյն դիտաց զնա։ Ա զի ասկերերան զՏանաւանն խնա-

տասիրեալ տասի՛ ի մեծէ առ փոքր ձեռնարկելով։ Զի թէ կոյս էր մարիամ յառաջ քան զծնունդն, և՛ ի ծնունդեան, և ապա առաւել կոյս էր զկնի ծնունդեան. որ գիրն ցայն յայտնէ ասա, զոր առաւել դժուարին էր հաւատալ. և որպէս ոչ զոյր օրինակ յաշխարհի, լինել մայրն՝ միանգամայն և կոյս. և եթող զայն, զոր դիւրին էր խնդասիրելոյ. թէ որ մայրն եղեալ էր, անմարթ էր նմա զկնի լինել մայրն լակոյ մարգարէութեան որոյ եկեղեցի՝ որ լուսաւորեալ ի հոգւոյն՝ ասէ՝ միշտ անեղիկոյս կալաւ, թէ գերամարդաբար կատարեալ մարիամաւ ոչ երբէք արատացաւ նաև զկնի ծնունդեան ուծարգելոյն իւրոյ։ Զարքին և յասել զրոց վասն մեզ գրոցդ, * Զի մեզ գրոցդ զատեր սատանայ ոչ եղև որդի մինչև ցոր մահուան իւրոյ։ (Ը. Թագ. Ը. 23.) ասէնայն որ քաջ խմեսոյ թէ և ապառաւել ոչ եղև զկնի մահուան։ Զի՛ ի ծն. (Ը. 7.) * Զի անդրէն, ոչ զարձաւ ազգաւն մինչև ցցամարիլ ջրոյն յերկրի։ խմի՛, և ապառաւել ոչ զարձաւ յետ ցամաքելոյն։ Զայս ոմ խասից լի է ի՝ որ գիրս. և զիՀՆ ասեմ ի՝ որ գիրս, ուր և ի հասարակ խօսս մարգկան յոմանս էն նմանեսի ձեր բանից. որպէս և յայտ է։

Զոգ զարթուցեալ յամենփայ ի քնոյ, արար որպէս հրամայեաց նմա հրեշտակն տեռ, * և առ յինքն զկինն իւր։ Զայս բառս բան կարծեալ կարելոյ, որ գնել թէ յամենփ և մարիամ էին յանժամ ի տունն զարարիայ, բան գրոյն և բան բնական տեսութեան մեկնին այսպէս։ Յամենփ որ յառաջ քան զգայանալն թէ հրեշտակին եղեալ էր ի մեռ գառնալ ի տուն իւր և թողուլ անդ զմարիամ. յետ յայտնալն թէ հրեշտակին, առ և զմարիամ զկինն իւր, և ած զնա ընդ իւր ի նազարէթ։ Զակ որք գնեն զայս ասմնայն եղեալ ի նազարէթ, զբառդ * առ յինքն զկինն իւր։, մեկնեն պահեալ առ իւր։ Թող զոր ասանք յառաջնոց խնդացան, թէ ցայն վայր էր խաւեցեալ ելեթ, և ապա պատկեցաւ, և էառ ի տունն իւր։

Զի՝ որ համարին թէ կոյսն մարիամ եկաց ընդ եղիսաբեթի ի տունն զարարիայ մինչև ցծնունդ յամ-

հանեալ. զի ոչ վասն այլ ինչ պատճառի ասէն այս-
չափ երկար յամենայն անդ, եթէ ոչ՝ ի տեսանել զԳ-
կարապետն իւրում ՅԾորդանայն. մինչդեռ ի՝ ի
ապաստարել Եղիսաբեթի յայնմ կարգս ժամանա-
դակի. և ի իցէ կին ասէն յայնպիսի հարկաւոր պա-
տագայս ծնայր անդ, ապա և առաւել մանրիւամ՝, որ
լի էր սիրով ընկերին։ Լ.այլք ընդ հակառակն՝ իրա-
ւամբք անպատեհ համարին կուսական համեստութեան
և պարկեշտութեան կանանց հանդերձք կալ և ապաստա-
րել կնոջ ծնանելոյն. այն ապաստարութիւն առա-
ւել յանկարծ է կանանց՝ որք ընդ այն փոքր ան-
ցեալ էին. և զիարն փոքրիւ թէ զիսրդ արժան իցէ
ծառայել յայնպիսում հարկաւոր ժամանակի։ Լ.և
և անգէպ էր ասէն առանձնասիրութեան կալ
անդ յայնպիսում ժամանակի, յորում՝ ի պատ-
հառս ծնանելոյն յանձինսն էլ և մեծ բազմութեան.
ամենեք ի ապաստարութիւն, կենաց ի խնդակցութիւն.
թող զայն՝ զի ի պատմել առաւարանելն մեծի զպա-
տագայս ծնանելոյն յայնմանէ, բնաւ ոչ յիշել զմա-
րիամ՝. յորմէ երբեմն ոչ էր նստանդ։ Լ.այս անպատ-
հառ և ուղղակի բան գրոյն խմանալ պարտ է զբան
առաւարանելն. որ յետ պատմելոյ զդարձ մարիամայն
ի տուն իւր՝ ապա սկսանի պատմել զծնունդն յայ-
հանեալ։

ԳԼ. ԺԸ.

Ոնոնդ յանձնեալ գրոցն. և ուսանելիս որ էին ի ձեռն
շրջան նորա։

Լ.Եղիսաբեթի լցան ժամանակք ծնանելոյ.
և ծնաւ որդի։ (զուկ. ա. 57. մինչև
ցվերջ գլխոյն։)

Լ.Ոչ որ սրանչելիօք արար յայտնալ Եղիսաբեթի
ի ծերութեան իւրում՝, և սրանչելիօք յառաջ քան
զժամանակն պարզ և հաց մանկանն զարարար ընդ-

ոչ կամեցաւ նոր աթանչելոյ կանխել կամ յապաղել զՏնաւնդն, քան զառ յիւրմի սահմանեալ ինքնաբեր ժամանակ մարդկոյին Տնեղեան։ Այս է ասելն, և եղիսաբեթի լցան ժամանակք Տնտնելոյ։ և Տնաւ արդի։ Ապաշաւելի հնչեցաւ լուր աթանչելի Տնընդեանն 'ի ջրշակայ սահմանս։ և զի զաբարիա և եղիսաբեթ ընդհանրապէս սիրելի էին, հաստատակայ եղև խնդութիւն ընդ այնպիսի բարեբաստութիւն եղեալ 'ի Տերանէ։ Ամենեքեան խնդային, զի մեծ ազգաբաստութիւն իւր ընդ եղիսաբեթի։ և կաւարեցաւ կանխատացութիւն հրեշտակին, թէ * բազումք 'ի Տնեղեան նոցա խնդասցին։ Այսպէս զի պի այնմ, որ զիտակ սիրելի ընծայեցուցանել զանձն։ իւրաքանչիւր իրրև իւր հատարի գլաջղութիւն սիրեցելոյն 'ի նմանել։ յանձի տեղի տրամանութիւն և գաւառութիւն նոսանանս, ուր անկեղծ սէրն ընտ զարբանն ցնծութիւն։ Հաստել և զայն, զի թէ խնդացիս, բազումք Տնեղեամբ նոցա խնդասցին, յայտ առնել զգաղաշան կարապետին՝ որ որպէս արտաքսակ զուշակ եղև. Ծագման արեգականն արդարութիւն։

Հաւաք ումեքրարդի ազգատոհմի նոցա և բարեկամք նկին թլփատել զմանուկն։ Ամն թլփատութիւն ոչ գոյր յարենս սահմանեալ որոշ տեղի. ուստի որք ասին թէ մանկունք երբայեցւոց 'ի Ժողովրդանոցս նոցա թլփատէին, կարծեմ թէ և ոչ մի օրէնսակ ունին յիմծայնին գրոց։ Հոգեմանելս թլփատեցաւ 'ի սուն. որ յայտ անտի է՝ զի 'ի թլփատութիւն նոցա յաւուր ութերորդի՝ անդ ներկայ էր և մարդն. ուր բան օրինաց հրամայեալ էր մեր Տնեղականին նոսին 'ի սուն տուրս երեսուն և երիս՝ յետ Տնընդեանն ուստեր. և տուրս վաթսուն յետ Տնտնելոյ զուսեր։ Ամենեքեան էր առ երբայեցիս 'ի Ժամանակի թլփատութիւն գնել անուն մանկանց. արդ բարեկամք և ազգականք զարարիայ կամէին կոչել զնա յանուն հօր իւրոյ՝ զարարիա. որպէս տարբերի իւրք անուն կոչեաց զմիանոր որդի իւր։ Ամարդ՝ որ սիրելի է, ցանկալի առնել և զանուն իւր. իսկ զարարիա այնչափ սիրելի էր, զի ամենեքին որք անդն կային,

կամիցին յանէժամանել զանուն նորա յորդին, մանաւանդ յետ սեռանելոյ զՀայրն Համբարեալ։ Բայց եղիսաբեթ մայր մանկանն Հակառակ եկաց այնմ 'ի զարմացումն ամենեցուն. ոչ ասէ, ոչ. այլ կուչացի յաւՀանելս։ Զատ իմն թուեցաւ ամենեցուն, զի մայրն պատուական ոչ թողաւ նորոգել 'ի մանուին նորածին զանուն ծերունի Հօրն. և առաւել նոր թուեցաւ, զի 'ի բովանդակ ազգատոհմին չիր ոչ զոյր որ անուն կուչացի յաւՀանիցէս։ Բայց սովորութեամբ պատի յամենայն ազգս առ 'ի յիշատակ նորոգել զանուն առաջնոյ. թող զի երբայեցիք 'ի Հնումն գնեին անուն 'ի նշանաւոր գիպուածոց։

Բայց թէ զիարդ եղիսաբեթ պնդէր, զի յաւՀանելս կուչացի, երևի կամ յանմիջական յայտնութենէն ոչ ուսեալ. և կամ թէ զարարիս Հաղորդեաց նմա զայտնութիւն եղեալ առ նա 'ի Հրեշտակէն, ոչ լեզուաւ, զի ոչ կարէր խօսիլ, այլ գրեաւ։ Բանզի կարի Հաւանելի է, թէ գրեալ իցէ զարարիայ զանցս, որք անցին ընդ նա 'ի տաճարն, և ցուցեալ եղիսաբեթի. վասն այնորիկ այնչափ պնդեաց նա զանուն իւր, մինչև Հարկ եղև նշանացի Հարցանել զՀայրն, թէ զինչ կամիցի կոչել զնա. իսկ նա խնդրեաց տախտակ, գրեաց, և ասէ. * յաւՀանիցէս է անուն զորա։ Եւ ահա զայգ ընդ կատարման գրոյն, վերջ եղև զատաժոյն որ սակս չընծայելոյ պատրաստական հաւատս բանից Հրեշտակին. զի նոքա ժամայն արձակեցան լեզուն. և առաջին բարբառն զոր արձակեաց, բան ասնոյ զայգ ընդ տալոյ զանուն որդւոյն, որ եղև ձայն բարբառոյ՝ քարոզ բանին ոչ, եղև օրհնել և գովել զնոյն։ Զարմացան ամենեքին սեռանելով, զի գրեր զանուն յաւՀանիցս. այլ առաւելապէս Հիացան 'ի սեռանել զանկարծ բացումն բերանոյ գրողին և 'ի լսել բարբառիլ մարգարէութեանս լեզուին, որ փոքր մի յառաջ չէր կարող բառ մի յօգել։ Բանզի լցեալ զարարիայ Հոգւովն Աստուծոյ, սկսաւ նա իմն ցնծութիւն, և մարգարէական գուշակութիւն օրհնել զնոյն և գոՀանալ զնմանէ։ Բայց ոչ սարսռ նիւթ գոՀութիւն իւրոյ զմանուկն պարգևեալ նմա 'ի

ՀՈՒՄ. այլ խորհուրդ նորա և սիրա ի բարձրագոյն խորհուրդս ամբարձին զնա, մինչև որպէս թէ մեռա ցեալ զլինել իւր հայրս, ոչ առ որդին իւր յուժգնեալս, այլ առ Աստուծոյ զոսաւորն բարբարս վա ռեալ սրտի իւրոյ ասելով, * Քրիստոսեալ տէր ասծ իս բոլորելի, զի յայց եղ մեզ, և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ։ Ա Երին լուսով լուսաւորեալ զոր ծերունւոյն, (Թող և զոր լուաւ արդեօք յերկնաբնակ թիւ ի խոյտալ մանկանն յորովայնի նորա) Ծանեաւ զկատարումն մարգեղութեան բանին սոյ. զոր և ար Ժամեացաւ ի տան իւրում ունել ընդ կոյս մեր նորա ամիսս իբրև երիս։ Լոյս զի հաւատայր սուրգութեան թէ փրկիչն, որ մնաց էր ի ծնանելոյ ունի փրկել զՀաւատացեալս իւր ի ծառայութենէ մեղայ, բստ ոնոյ մարգարէից իբրև եղեալ պատմէ՝ զոր ընդ Հաւ գի նելոյց էր։ Լոյցոյց մեծագոյն խնդութեան վասն այսր հաւատակաց բարութեան, բան վասն ամենայն իւրոց առանձին բարեաց. նմին իբրև յառաջ քան զգաշնեալ զնեալ վասն պարգևելոյ նոսա որդի՝ զաշնեալ զնեալն, զի եւ փրկիչ աշխարհի։ * Օրհ յայց եղ մեզ, և արար փրկութիւն ժողովրդեան իւրում։

Լոյս զի մի որ ի պարզամիտ լսողաց անտի մոլորեսցի, կարծելով թէ անուամբ փրկչի զորդին իւր կոչել Հանեալս կոչիցի, վաղվաղակի մեկնի զբան իւր՝ թէ վասն այլոյ խօսի, որ ի ցեղէ և ի տանէ դաւթի, յորմէ Հանգերձեալ էր ծնանիլ մեծախաղ։ Քրիստոսեալ նոր ասէ, զի յարոյց եզ ջիւր փրկութի՝ այսմիջոց զօրութեան փրկարար կամ զօրաւոր փրկագործ մեզ ի տան դաւթի ծառայի իւրոյ։ Հարկէս խօսեցաւ բերանով սրբոյ՝ որ յաւետնից մարգարէք նորա էին։ Լոյս այն՝ փրկութիւն տիեզերական և Հանրական ի թշնամեաց մերոց, և ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց։ Լոյս զի յայտնի լիցի, թէ թշնամիքն այն, զորոց զուգաբան ընդ մարգարէս խօսէր ինքն զարբրիա, ոչ են Հռոմայեցիք, կամ որ այլ եւս ինքնակոր ազգեր, այլ զեր, և մեզ։ և փրկութիւն զոր մեզ խօսէին, ոչ էր երկրաւոր և ժամանակաւոր, այլ յաւիտենական, յաւել՝ թէ այս փրկութիւն է զորմ

ազգումեմ՝ այլ հաղորդեալ և նախահայր յառաջագոյն վարեցանելոց. զոր ոչ ևս կարէին չարչարել ի թշնամեաց և յիշխանութենէ երևելոց. որպէս նոքա զարդեցան և առ յաղագս եկելոց, զոր անեալ զգոր ծագրութիւն ազգումեմ՝ յիշեցէն զուխտն որ և անեղծանելի, զոր ուխտեաց ընդ առ հայրն։ Լ. յն ուխտ էր երդումն՝ զոր երդուաւ ընդ աբրահամու տալ գիրկուն։ * Լ.ունել ազգումն ի ընդ հարս մեր, և յիշել (այսինքն յիշելով) զուխտն իւր որ։ Օ էր. դումն, զոր երդմամբ ուխտեաց աբրահամու հօր մերոյ տալ մեզ։ Լ.ա զի մի որ ի բանից ասասն առ. ցէ, ասա հեռաւութիւն, թէ կարիցէ վարել կենաց բան հաճոյից, և յեաց մնանել յերկինս լակ ի ձեռն արդեանց փրկչին, յարել զկնի՝ թէ փրկիչ առաւ մեզ, զի մի երկիցուք թէ թշնամիք մեր անարգանք զօրանայցեն ի վերայ մեր, երբ չիք մեր զօրութիւն յաղթելոց նոցա. զի տայ մեզ փրկիչն կարողութիւն յաղթել նոցա, միայն թէ մեք ի վար արկցուք զայն կարողութիւն. և փրկեալքս ի նմանել պարտականացուք զնա արդարութիւն և արդարութիւն, որ չիցէ լակ առ երեսս և առ այս մարդկան, այլ իցէ Աստուածն արդարութիւն և արդարութիւն առաջի նորա։ * Լ.ուանց երկիւղի, ի ձեռաց թշնամեաց մերոց փրկեալք. պարտեալ զնա արդարութիւն և արդարութիւն առաջի նորա։ և այս յա. ստնեալն ի կենաց մեր. զի մի լիցի մեզ երբեք զառ. նացուցանել զնոյն մեղք, և լինել նոցա թշնամի և ոչ առ վայրկեան մի ժամանակի. * զամենայն աւուրս կենաց մերոց։

Զնա այսպէս օրհնելոյ զնոյն և գոհանալոյ զնմա. նի, զանա տալոյ զնա՝ Լ.ոյ փրկիչ աշխարհի, զառնոյ առ արդեն իւր յուշանելոյ, և թէպէտ մնանակ էր նա ուխտեալ և եկեալ. սակայն ըստ կարծեաց կապլ. նասի՝ ընդունակ խնդանալոյ՝ առանց խօսելոյ. զի յայ. տանգի մոռն բացան միաբ նորա ի ժամանն ազգումեալ. լոյ կուսին մարիամու զմայրն նորա. և հաստատելի և ասէ՝ թէ այն պարգև յեաց ոչ բարձաւ ի նմանել։ Լ.ոյ՝ խօսելով զաբարիայ առ մնանէին՝ ասել. և զա. ամ մանակ եղիցիս մարգարէ բարձրելոյն. զի յա.

ուսքնացեալ քան զՀանդիսաւոր երևումն նորա, և քարոզութիւն բազմ պատրաստացեալ զՀանապարհ նորա։ Տացեալ ժողովրդեան զդիտութիւն փրկութեան՝ որ մնասու դուրս կայ ի թողութիւն մեղաց նոցա. Թողութիւն և փրկութիւն որ գայցէ մեզ ի գթոյ ողորմութեան այ մերոյ. յորմէ շարժեալ այց արար մեզ իբրև արեգակն ծագեալ ի բարձանց լուսաւորել զպտակի որք եղին ի խաւարի և ի սաստիս մահու. և ուղղել զգնացս մեր ի Հանապարհս խաղաղութեան. որպէս բազմիք զայս ամենայն նախատեսանէին և մարգարէք։

Մինչև ուրք անդ եին ի տանն զաբարիսայ, կային հիացեալ ընդ այնչափ սքանչելիս զոր տեսանէին, և զոր լսէին։ Մինչև տեսանէին ի վերայ մանկանն զառաւաւիրք, զամենազօր և զսիրազգաւն ձեռն այ. և մեծամեծս զուշակէին զմնանել, յաւելով զՀանդերձեալսն անտի զոր տեսանէին. և ասէին զարմացմամբ խօսելով ընդ միմեանս, Եթէ, այժմ այսչափ և այսպիսի է մանուկդ, զի՞նչ ապա լինելոց է յետոյ մեծացի։ Մինչև տարհիսն ի մանի զոր տեսին և զոր լուան. և պատմէին զիրսն սաստգութիւն որոց և պատարհիսն. որով և ծաւալեցաւ լուրն ոչ միայն ի մերձակայ տարմանս, այլ և յամենայն քաղաքս և յաւանս որք եին ընդ ամենայն լեռնակոյսն Հրէաստանի՝ խնամ յուգայաստանի։ Եւ եղև առ ի վերայ ամենեցուն որ լսէին զայս ամենայն. առ ասել զյարգսիան ներքին ասասուն խնն, որ ծառանի ի Հոգիս մեր ի տեսութիւն մեծամեծ գործելեաց. որպէս եղև ասա։ Կին միշտ ասելոյ յոյսցեալ և եղեալ մայր ի ծերութիւն իւրում։ Հանապարհ յանկարծ Հանդիպեցեալ։ Նուն եղեալ յուծային յայտնութիւն։ Ուծանն լեզուն Հոգի ի գլեն զանուն որդւոյն։ Հանկարծ զգնեալ նորա զՀոգի մոր գարձութիւն։ Եւ այս ամենայն իբրև ի միտ ժամանակի, և ի նմին ասեն եղեալ՝ եին գրանելիք, որք վաղվաղակի ոտեցան ի բերանս ամենեցուն Հանդերձ զարմացմամբ և խնդութիւն խառն ընդ գՀութիւն վերատաբելոյ առ ուծ արՀոգին պատկառանաք։

Ինքնայոյզ մանկութիւն կարապետութիւն յոր ըստ օրէնս մանկանն՝ արդեամբք հանձնառս գոսն զեղեցիկ սկզբնաւորութիւնն. զի յանձն մանկանն մարմնով, միշտ առաւելապէս ամենայն հոգւով. և էր յանապատս, մինչև եհաս ժամանակ կարգեալ 'ի նոնէ վասն երևելոյ ցանկելոյ նորս զանձն իւր որպէս արքայական մարգարէ, և լանելի առանելոյ զջերմ քարոզութիւն իւր խրատելոյ 'Լիկեփորս ասէ, թէ յոյժ անուն ա-թուատուն ամենեան տարեալ եղև 'ի մարդն յանապատս, և անդ մնաց և պարհեցաւ 'ի հրեշտակէ նոնս։ Կեղբենոս երկրաստան առաքէ զնոս յանապատս, ոյլք հնդանեան։ Լսակ թէ առ իսկ? եղև երթալ նորս յանապատս, նոքն պետրոս ազերբանդրայի, և ոյլք յետ նորս ասեն, թէ եղեալեթ փախոյց զմանուէն յանապատս յերեսաց որոյ մանկակատար հիւրոյնէ. զի թէպէտև կատարուն մանկանց եղև միոյն 'ի բեթղեհեմ և 'ի սահմանս նորա, այլ զի յերկրին յուգայ հաշակեալ էր հրաշալի ծնունդ յոյժանուս, բնաւորապէս երկիւղ լինելք ծնողացն, թէ մի արդեաք և 'ի խեղիր զաւակի իւրեանց եղցի, բռնատուն։ Լինելի ինչ հաւանական կարծիս քան զայդ ոչ որ գտանել, բաց յանտարակուսելի ճշմարտուէ, զի ուժ խարհրդով կարգաւորեաց զառաքաւն նորս յանապատս լինել և է պատճառաց, որպէս զի բան ժամանակին յանապատսն անսաի եկեալ, երբև մարգարէ և առաքեալ ոչ՝ ճշնոզական վարուք աւ-ժանահաւատ քարոզ միածնին։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Դ. ծննդեան Յն գլուխ ի խորհրդոյն Յովհաննու Աւետեաց։

ԳԼ. Ա.

Ծնունդ Տեառն հոգ Յն ՝Ի։

* Լա՛ւ եղև ընդ աւուրսն ընդ ամենայն և զգուանն յոգոստոս կայսրէ, աշխարհագրիլ զամենայն ընդ ամենայն տիեզերս, ՝Ի։
* Լա՛ւ Տեառ զոգին իւր զանդրանիկ, և պատեաց ՝Ի խանձարուրս ՝Ի։ (զուկ. բ. ։)

Զամենայն պատգամաւորքն առ Տեառնդ փրկչին սահմանեալք ՝Ի յաւիտենից յուծային խնամս մեր ՝Ի լինել ՝Ի սորին յայս երկիր, նոքա լրացեալ։ Ծնեալ էր յառաջնեմեաց կարապետ նորա, վկայեալ բազում նշանաւոր զանազանեալս յառաջ քան զծնունդն, և ՝Ի Տնդեան. յորոց ամենեքին կարելին Հանուցեալ զնա առ մեծ ինչ կարգեալ ՝Ի նոսին. զոր ինչ զի յնոցա յոգեաւոր մատամբ ցուցանիցի և ասիցի, ահա ասի է մեսիան խոստացեալ, մի որ էր կուսանայցի ՝Ի Հնոցանէ բանիցն նորա. այլ ամենեքին ընկալցին զվկայութիւն նորա իբրև պատգամ նոյ։

Գուսանքն Յոգաւորքն բարձեալ էր ՝Ի յուզոյն. և Հանելն Յոգովարդ երթայցուցայ էր նուա Ձեալ ընդ իշխանութիւն Հաստատեցուցայ, ունելով ՝Ի վերայ իւրեանց սատարողն Յոգաւոր զՀրեշտակն

սակաղնեայն կացուցեալ 'ի հռովմայ։ Հանրական խաղաղութիւն և հանգարտութիւն էր ոչ միայն 'ի Տիւրատան և յամենայն տարածմանս շուրջ գնալս, այլև յամենայն աշխարհ։ ուստի ընդ այլ մարգարէութիւնս որք կատարեցան, կատարեալ յայտժամ և մարգարէութիւնն Եսայեայ, որ ասէ. « Զուրեցէն զուռսերս իւրեանց 'ի խոփս, և զսուրս իւրեանց 'ի մանգաղս. և ոչ առնուցու ազգ յազգէ վերայ սուր. և ոչ ևս ուսանիցին տալ պատերազմ։ (Եսայ. Բ. Դ.) Այս հանրական խաղաղութիւն էր վերջին պատրաստութիւն առ Յիսուս մեսիային, առ որ այլ ինչ ոչ մնայր, բայց միայն կուսին մարիամու երթալ 'ի բեթղեհէմ. ուր ըստ պատգամաց մարգարէից սահմանեալ էր լինել կուսական Յիսուսդ ածարդ։

Յայնմ նախախնամութիւնն, որ ուղղէ և կարգէ զամենայն առ վախճանս կարի այլազանս, քան առ որս ուղղէն մարդիկ, կարգեաց զի օգստոս կայսր ընդ աւուրսն ընդ այնոսիկ, այսինքն ընդ այն ժամանակս՝ յորում Յիսուս յայտնեալս միլրտիս, հանդէպ հրաման աշխարհագիր առնել ընդ ամենայն տէրս տէրութեան հռովմայեցւոց. որով պատուիրէր ամենեցուն տալ գրել զանուանս իւրեանց բոլոր բնիկ քաղաքին, ցեղի և վիճակի 'ի ձեռն պաշտօնեից առանձին կարգելոց։ Ել վասն հոգաս կայսրն 'ի հերոդէս՝ զայս գործ նմա յանձնել, զի հակառակ էր նորա ազանձեանն շահասիրութեան այս գործ, որ զամենայն գլխահարկս և զայլ իրական տուրս իւրոց հնազանդելոց 'ի հռովմ առ կայսր գարձուցանել։ Յայտնի էր զի թագաւորքն ոչ վայրապար խնդրեն զիտել զթիւ հանդերց ժողովրդեան ընդ ձեռամբ իւրեանց եղելոց, այլ առ 'ի հանել զգլխահարկս. և զիտել թէ օրէնք մարդիկ կայցեն 'ի տերութեան իւրեանց, զորս մարթի իցէ կարգել 'ի զինուորութիւն 'ի ժամանակի պատերազմի։ և կամէր հերոդէս այնուհետև հանարել զամենայն ժողովուրդ իւր, և զամենայն հարկս և զտուրս որ 'ի թագաւորութենէն նորա անցանել՝ 'ի հռովմ՝ իբր բաշնալ 'ի նմանէ։

Ալ ասն այսորիկ այն պարտուն յանձնեսցու կիւրեղեղոյ, այն է, զուարթութիւն հաւատոյցն զատաւոր, յեր-կրին սասրուց իրրև փոխարարայ արեւելից։

Այս աշխարհապրութիւն ի նեղքս փակէր և զՀրեսաս-ասն, այսինքն զերկիրն յուզայ, զի այր իւրաքան-չիւր սասցն անձամբ զանուն իւր, ոչ ի քաղաքին՝ ուր բնակէր, կամ ուր ինքն ծնեալն էր, այլ ի քա-զաքն անդ՝ ուստի էր ծագումն ասն և ապրատանի իւրոյ. և զի կոյսն մարիամ և յովսէփ էին ի տա-նէ, զաւթի բեթղեհէմացւոյ, անդր եկին տալ զրել զանուն իւրեանց. և նոքին հնազանդութիւն խոստա-վանել զանձինս հպատակս հաւատոյցուց տէրութեան։ Այսպէս հրամանն երկրաւոր թագաւորին ած զամ-բիամ ծառայել անդ, ուր կամէր թէ ծնցի նա ինքն թագաւորն երկնաւոր։ Անմեղ պակասէին ոչ այլ բիւր եղանակք ածել ի բեթղեհէմ զնծանողքն ընդ ոծծարգելոյն. սակայն կամէ եղէն նոցա զոյս հրա-մանն ի զորձ արկանել, որպէս զի օրինակ փրկչին կանխեսցի, քան զվարդապետութիւնն՝ զոր յետոյ ա-ւանդեսոյ ի ձեռն առաքելոյն իւրոյ պօղոսի, հնա-զանդ լինել նաև իշխանաց և տերանց մարմնաւո-րաց՝ յիրս որ ոչն են հակառակ ոծծայնի հրամանաց։ * Այնինչն անձն որ ընդ իշխանութիւն իցէ՝ ի հնա-զանդութիւն կացցէ. քանզի ոչ ուստեր է իշխանու-թիւն, եթէ ոչ յոյ. և որ ինն՝ յոյ կարգեալ են։ Այսուհետև որ հակառակ կայ իշխանութեան, այ հրամանին հակառակ կայ. և որք հակառակն կան՝ անձանց դատաստանս ընդունին։ (հռով. ԺԳ. 1. 2.)

Իրրև եհաս ի բեթղեհէմ մարիամ ընդ յովսէ-փայ, լցան ինանանեայ ժամանակ յղութեան նորա. և ծնաւ զորդին իւր զյոյ, որ է անդրանիկ ամենայն արարածոց։ Ոչ ազեայ արեգակն արդարութեան որպէս լոյս արփիւռայլ ընդ բիւրեղ անապական։ Այ լոյս ընծայեցաւ աղայացեալն ոծծ ի կուսական արգանդէ՝ պահելով անխախտելի զմինչ կուսութիւն մնան, որպէս ունէր զմինչ յառնել և ի կոյս գերեզ-մանել, ինքեալ. կամ որպէս եմուտ ի վերնատունն

յետ յարութեան զրօքն փակելովք զքանդելաշարաշափանցութեամբ։ Ելեալն անդ պէտք ազնուականի։ զի առանց երկանց անցաւ և անեղծ անարատութիւն Ցեռ զորդին իւր։ զոր անդրանիկ կոչէ առաջնորդն, ոչ որպէս թէ յետ այնորիկ և զայլ որդի Ցեռաւ իցէ։ այլ թէ յառաջ քան զնա չեղև նմա այլ որդի։ ուստի և յն ի նորա նախածին և միածին միամիտ և միակ զաւակ, ոչ յառաջ և ոչ յետոյ ունելով զայլ որդի։ Ցիածային գիրս և միամիտ որդիք կոչին անդրանիկ։ ըստ այսմ յորժամ եհար ամ * զամենայն անդրանիկս յերկրին եգիպտացւոց ||, բոզուեալք ի մեռելոց անսի եին առաջնածին և միամիտ, և ի հրամայել զի ամենայն անդրանիկք ընծայեսցին նմա ի տաճարն, ոչ մեծին Ցեռգին Ցեռանիլ և զերկրորդ որդի, զի առաջինն անդրանիկ ասիցի։ այլ զնի քառատուն ուսուցն ընծայեին՝ առանց դիտելոյ թէ Ցեռանիցի և երկրորդ որդի։ Բայց պէտս այժմ ի մերոյս ժամանակի յորմէնս և ի կատարս անդրանիկ կոչին նաև միամիտ որդիք, որոց չեղև երբեք ոչ եղբայր և ոչ քոյր։ Բայց ի Ճանաբիս և բնական մեկնութիւն ուսուցանին։ վասն զի ի հաւատոց է թէ կայսն մանրիամ որպէս կոյս էր յառաջ քան զծնունդն և ի ծնեալն որդւոյն, նոյն օրինակ մնաց կոյս մնաց նաև զնի ծնեալ նոյն։

Հանդերձ այսու ամենայնիւ երևի թէ և այլ միտս կամի զուգաս մեզ ընծայեցուցանել անդրանիկ ասելով զնոյս։ զոր և մատթէաս ի կիր արկանէ յաւելն։ * մինչև Ցեռաւ զորդին իւր զանդրանիկ։ որով թուի թէ զայն ասենարկէն, զոր յառաջ և զնի զանամանութիւն յիածային գիրս կոչել զԲնդ անդրանիկ ամենայն արարածոց։ Պօղոս զրելով առ կորնթացիս։ (ա. 15.) ասէ զնոնի * ||ը ի պատկեր անտեսանելի՝ թէն ոչ անդրանիկ ամենայն արարածոց ||։ Բոլոր։ (ասեա. ա.) * Ի լրանալ անսի նորա մեր ամենայնքին առաջ։ || Բ։ յառակ։ (ը. 22.) * Ցեռ առաքաւ զիս ի սկիզբն Ճանապարհաց իւրոց ի գործս իւր։ յառաջ քան զյաւիտեանս հաստատեաց զիս։ Ի սկզբանէ յառաջ քան զերկիրս առանել, և նախ

բան զանգուածս զործել։ Մինչ պատրաստէր զերկինս ընդ նմա էր։ Եւ ես էի զոր սիրէր զամենայն պատրաստութեան արարածոց 'ի միտս իւր։ Եւ թէ զարդ Աստուծոյ է անդրանիկ ամենայն արարածոց, մեկնեալ Պօղոս 'ի Թուղթն որ առ Կողոսայեսս։ Զեռ ասելոյ թէ նա է անդրանիկ ամենայն արարածոց. յարէ անմիջապէս * Օր նոցա հաստատեցան ամենայն որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի. որ երևին, և որ ոչ երևին, եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք, ամենայն ինչ նոցա և 'ի նոցն հաստատեցաւ։ Եւ նա է յառաջ քան զամենայն. և ամենայն ինչ նոցա ունկաց բանեղակ. և նա է զլուխ մարմնոյ եկեղեցւոյ. որ է սկիզբն՝ անդրանիկ 'ի մեռելոց. զի եղիցի ինքն յամենայնի յառաջագոյն։ Օր 'ի նմա հաճեցաւ ամենայն լրումն ծածութեան բնակել. և նոցա հաշտեցուցանել զամենայն 'ի նոցն, արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի և որ ինչ յերկինս։ (կողոս. ա. ։ 16։) Որ խօսի զանն բանին մարմնացելոյ 'ի փրկութիւն մեր. որպէս և կանխաասացեալ էր, * Որով ունիմք զփրկութիւն արեամբն նորա, և զթողութիւն մեղաց մարմնով նորա։ Եւ կոչէ զնա առաջնեայն անդրանիկ ամենայն արարածոց երևելեաց և անտեսելեաց, հրեշտակաց և մարդկան. զի ամենեքեան եղեն 'ի նմա և 'ի նմանէ. և ինքն է յառաջ քան զամենայն. և ամենեքեան կան զանն նորա. և ինքն է զլուխ մարմնոյ եկեղեցւոյ, և է սկիզբն փրկութեան. առաջին նախաաւշմանեալ որ ունի զառաջին տեղին 'ի վերայ ամենեցուն։ Եւ թէ հաճեցաւ ամենայն լրումն ընդարձակ և փառաց. և 'ի ձեռն արեան նորա հնազոյ 'ի վերայ խաչին՝ հաշտեցի աշխարհս ամենայն. և 'ի նմանէ և յարդեանց արեան նորա ունիցին զթողութիւն այսինքն զնորոգութիւն զփրկութիւն յանէնից ամենայն խնացական և բանաւոր արարածք որ յերկինս, և որ յերկրի։

Այլ է ուրեմն 'ի բանից առաքելոյն, թէ Աստ

ոչն մեր կոչի անդրանիկ, ել որպէս թէ մարդկու-
թիւն նորա եղեալ իցէ յաշխարհի յառաջ քան
զայլ ամենայն արարածս, այն՝ որ յետ բազում դա-
բաց աշխարհի ծնաւ ի յերկրի. և ոչ լոկ վասն գէ-
բազանցութեան նորա ի վերայ ամենայն արարածոց.
զի ինչպէս իսկ յայտ է թէ ոչ ինչ արարած կարէ
հաւասարիլ արարչի մարդացելոյ. այլ զի առաջին
է ի կարգի արդիւնական պատճառի. քան զայլ
զայլ ամենայն արարածս՝ զոր կամեցաւ առնել նոցա,
վասն արդեանց Վանի կամեցաւ. նոյնպէս առաջին է
և ի գծի կարգմանն. քան զայլ զայլ ամենայն ստա-
բածք կամեցեալք յոչ՝ կարգեալ են ի փառս և ի
գերազանցութիւն Վանի։ Լայտարար ինչ յիշատակեալ
յաղագս անդրանկութեան Վանի նոն մերոյ, զորմի ա-
նիս տեսանել ընդարձակ ի մեկն. Լաղաս. դարձ-
ցուք անդրէն ի կարգ աւետարանական պատմու-
թեան։

Իրրև ծնաւ մանուկն յս, մարիամ մայրն նոր պա-
տեաց զնա ի խանձարուրս։ Վասն զի ոչ ունէր՝ յորժամ եկ ի նազարէթեայ, եթէ մերձ է ծնանել
զորդին։ Վասն զի քան մարգարէական պատգա-
մաց ի բեթղեհեմ հանդերձեալ էր ծնանիլ ուսորդին իւր։ Վասն այսորիկ մայրենի նախատաւս խնա-
մարարքն առնեալ էր ընդ իւր զկարեւոր հանդերձս
ի պատել զմանուկն ի ցրտաշունչ ձմերայնի եղա-
նակի։ Լ՝ զի յայրի անասնոց ծնաւ, ուր ոչ զայլ
այլ ինչ յարմարաւոր տեղի ի հանգիստ նորածին
մանկանն, բայց միայն մուր, անդ հարկեցաւ հան-
գուցանել զնա ի վերայ խառոյ։ Վնեծ էր մայրենի
մարմնոյ սրտին մարիամա ինքեալ ի ման և յայգի
թագաւորաց՝ տեսանել զմանուկն զիւր որդի զերկնից
թագաւորն եղեալ ի մուր անբանից։ Վանոյի
բազմաց մարդկան որ եկեալ ժողովեալ էին յայ-
ժամ անդ ի բեթղեհեմ ի պատճառս աշխարհա-
գրեաց, և ազգատոհ կուսին և յոսեփու, չեռուն
նոցա գտանել ուրեք զեթ փոքրիկ սենեակ մի, և
ոչ իսկ ի հասարակաց իջևանի։ Վարիքը, և փարեակ-
ցիք, և մեզաւորքն և մեծատունքն աշխարհի փարիկա-

նային յապաքանս մեծաշէնս, իսկ ոՏՏ եղիցից և եր-
կրի՝ հիմիւ յանդուսք այրի՝ ի մուրբ՝ ի մէջ անբան
անասնոց։ Ի՞նչ այսպէս անդասին՝ ի սկզբանէ ծնն-
դեան իւրոյ կամք եղեն՝ ոՏ մերոյ իւրազ օրինակաւ
ուսուցանել մեզ արհամարհել զմեծութիւն և զհան-
գիստս աշխարհի։ և սիրել զաղքատութիւն և զնշոս-
կրութիւն։ զոր՝ ի մերոյ ոՏտի իբրև յանթոռոյ վար-
դապետութիւն քարոզիր։

Ի՞ս մերազ՝ որ մանկանն Հոգի սովորութիւն է նկա-
րել եղն և եշ։ այս սովորութիւն ոչ է լոկ ինքնասահման
իմն գիւտ նկարչաց, այլ աստուածութիւն հիմնեալ՝ ի
բանն Աստուծոյ, զոր ասէ (՝ի գլ։ ՈՒ։ հատոր 3։)
* Ոչ անեան եղն զատացիչ իւր։ և եշ զմուրբ ՈՏՏ
իւրոյ։ Ասաւ՝ որ զբիզոզ նշանացի՝ ի Ճառն ծնդն-
դեան Ի՞նչ ասէ։ * Ի բնակութիւն անբանից ծանոյն
բանն, զի եղն ծանիցէ զատացիչն իւր, և եշ զմուրբ
ՈՏՏ իւրոյ։ ապա՝ ի մէջ եղին և իշոյ՝ ի մուրն երկ-
ցուն՝ որ է։

ԳԼ։ ԲՈ։

Հովիւ՝ ասէր՝ ի հրեշտակէ՝ փա՞ ոչ երիզոփոխ Հոգի։
Ի՞ Բնակարանի նոր։

* Ի՞ս հովիւք էին՝ ի տեղւոջն յայնմիկ բացօթեայզք։
և այլն։
* Ի՞ս իբրև լցան աւուրքն ութ թլփատել զնա, ՈՏ։
(զուկ։ Ը։ 8։ 21։)

Ի՞ զիշերին յայնմիկ՝ յորում՝ ծնաւ Ոչ, էին
անդ՝ ի դաշտս բեթղեհեմի հովիւք, որ պահէին
զպահպանութիւն զիշերոյ հօտից իւրեանց։ Ի՞ս ահա
յանկարծակի լոյս մեծ ծագեաց զնոքօք։ և տեսին
զհրեշտակ՝ ՈՏՏ մօտ իջեալ առ նոսա։ Ի՞ս յեղակարծ
փոփոխութիւն զիշերային մթութիւն՝ ի մեծապայծառ
լոյս աստուծեան, և հրաշափառ երևումն հրեշտա-

կին՝ երկիւղ մեծ և սասանումն սրտի 'ի նոսա։ Յա-
մենայն 'ի որ գիրս գրեալ ուրեք գասանելոյ, թէ
երևեալ իցէ ումեք հրեշտակ լուսապայծառ փա-
ռաւք. իսկ առ հովիւսն երկնաւոր պատգամաւորեալն
երևեցոյց զգայլն աչաց գնդանակ ծագմանն լուսոյն ապ-
նորիկ, * որ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ
գալոց է յաշխարհս։ 'Ի մէջ պայծառաւորեան լու-
սոյն երևէր զուարթագոյնն և բերկրալից երեսք հրեշ-
տակին. որ քաղցրութիւն քաջալերեալ գնասս, ասէ.
մի երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ու-
բախութիւն մեծ ծագեալ 'ի միխիթարութիւն ամենայն
ժողովրդեան։ Օ՛ի յայսմ գիշերի մեռաւ 'ի քաղաքի
դաւթի Տէր՝ որ է փրկիչ, նոյն և Քրիստոս տէր։ այս
ծառայ, բոլորից ազգն 'ի փրկութիւն հասարակաց. վասն
որոյ իրաւունքս են զի և խնդութիւնն լիցի հասարա-
կաց։ Զ՚ի կարծիցիք՝ թէ չկայցէ ինչ փոյթ և զձեզ
վասն լինելոյ ձեր ազգատ և անուշն. այս փրկիչ
ծառայ և վասն ձեր։ Զ՚այս սատ ձեզ նշանակ առ 'ի
գտանացանել զնա յայլոց նորածին մանկանց. զի
գտանիցիք զնա պատեալ 'ի խանձարուրս, և եգեալ
'ի մսուր։

Երբև կատարեաց հրեշտակն զբան աւետեաց
իւրոց, ահա յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ-
այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որք հրեշ-
տակային քաղցրաբարբառ եղանակաւ օրհնէին զնոսն
և ասէին. * փառք 'ի բարձունս աստ, և յերկիր խա-
ղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն։ Զ՚այս 'ի
վերանալ հրեշտակաց յերկինս՝ խրախուսեալ երե-
ջանիկ հովուաց զմիմեանս անցանել 'ի բեթղեհեմ,
և տեսանել զբան ինչ 'ի հրեշտակաց յայտնեցեալ նո-
ցա, եկին փութանակի և գտին զմարիամ, և
զյովսէփ, և զմանուկն եգեալ 'ի մսուր. որում
երկիրպագին անցագ փափաքմամբ իբրև փրկչի հա-
սարակաց. քանզի և այսր տեսին՝ զոր լուեալ էր
նոցա 'ի հրեշտակէ զմանկանէն, և անեկրկոյ հասու-
լեալ իրացն՝ լցան անպատմելի ուրախութեամբ։
Պատմեցին ամենեցուն զոյսն զոր տե-
սին, և զերգս օրհնութեան զոր լուան. և զանսն զոր

ասաց նոցա Տիրաշատին. և ամենեքեան որ լսէին՝ զարմանային վասն բանիցն զոր խօսեցան ընդ նոսա Հովիւքն։ Ապա այսորիկ իսկ և ՚ի՚ն՚ ի՚ զՅովիւս ընարեաց իւր քառասուն, և ոչ միմեանսեան և զմիմեանսեան, և պարզապիսի էին, և չէին կարող կիզծել իւր նոցանէրս. ուստի և առաքել Հաւատալի լինէին իրրեւ պատմելոյ ՚ի նոցանէ։

Յս Հովիւքն զարձան առ Հոտս խաչանց իւրեանց փառաւոր առնելով և օրհնելով զՅՀ վասն ամենայնի զոր լուան և տեսին, որպէս պատմեցաւ նոցա։

Ա՚ամ առաւել քան զամենեցուն անՀաւանելի էր Ինդաս Թիւն Ա՚ծամրն, որ զամենայն զոր տեսանէր և զոր լսէր, պահէր ՚ի սրտի իւրում. և զայն արարեալ իւր ներքեւ խոկման, վերանայր խորհրդով ՚ի Հայեցողաբնոյ բարձրագոյնս ուծայնոյ ծածուկ ոլորտանցն։

Յաւուր ուՀերորդի Թլխատեցաւ մանուկն՝ յանձն առեալ կատարել զօրէնս ՅՀրն սրինաց, և ՚ի սովորութեան երթայցուց՝ զոր ՚ի Թլխատաւեանսն դնէին անուն, կոչեցաւ անուն նոցա ՅՀ, որ է փրկիչ. որպէս ասացեալ էր Հրեշտակն ՚ի տալ զաւետիս կոյս մօր նորա յառաջ քան զյղանալ զնա. և յոսեփայ՝ յորժամ յայտնեաց նմա զեղանակ յղութեանն։ ՅՀայս անուն բովանդակին ամենայն անուանք նախագուշակեալք լեալոյ. որպէս Էմմանուէլ. պանդիսի խորհրդական. որդի բարձրելոյն. վասն զի բան ուծայնոյն Ա՚ՀՀրն՝ որ խնդրեր զՆաբուքոդոնոսորայ Թագաւորեցեալ յորդւոց մարդկանէ բան անկրեալ լապիս մեղաց, ուծ միայն կարող էր լինել փրկիչ ՚ի մեղաց։ Ա՚յս եղև առաջին արիւն, զոր կամեցաւ փրկիչն հեղուլ վասն մեր, իբրեւ ՚ի հաստատութիւն ուխտին եղեալոյ ՚ի մեր փրկութեանն. յորում մանուկին յՀ եւ զարիւն իւր Հօր երկնաւորի իբրեւ զբաւական արեանն, զոր բան ժամանակին Հանդերձեալ էր Հեղուլ ՚ի թաղին վասն մեր. իսկ Հայրն երկնաւոր եւ նոսա փոխարէն զանուանս ՅՀ բան ամենայն ընդունակ նշանակութեան փրկչի ՚ի մեղաց՝ իբրեւ զբաւ ընդ-

գունելոյ 'ի մեր փրկութեն զարթնոյն և զմահ նորա 'ի վերոյ խոչոն։ Եւ նշանակէ առաջարանիցն, թէ ուր էգև այս թլփատութեն. և զի որպէս յառաջագոյն ասացաք, ոչ գոյր յօրէնս որոշեալ առգի վասն թլփատութեն, վասն այնորիկ բարձուցեր հանապազ թէ էգև յոյրի անդ, ուր ծնաւն, յանդիման ազգաց ոնծամարն. որովհետև բան օրինաց՝ զոր կամաւ պարհեաց և ինքն կոյսն անարատ և անապարատական, աւուրս բազառատուն չէր օրէնս ելանել 'ի տանէ. և չէ իսկ հաւատալի թէ թոյլ տուեալ իցէ հեռացուցանել յուրաց իւրոց զանկրաելի զմիակ զանձն իւր։ Այլոյն պէս չէ յայտ, թէ ո՞ էգև պարտանեալ կատարիլ թլփատութեն։ Այլ սակաւ մինչ և օգուտն գիտելոյ զաեղին, և գիտարիս այսր թլփատութեն. ուր մեծագոյն շահեկան է մեզ սեռն արուս խորհիլ զիմաստարհութեն, զհամբերութեն, զգեղութեն և ըզմարդասիրութիւն փրկչին՝ զոր եցոյց մեզ յայս խորհուրդ անօրինութեան իւրոյ։

ԳԻԼ. Գ.

Հրամանագրեալ սրբութեան անարատ իւրոյ Աստուծոյ, և ընծայուն հանիւն ի ծառայն։

* Իրրև լցան աւուրք սրբութեն նորա (մանրիսանու) ըստ օրինացն մովսիսի, ածին զնա (զՅն) յԵրուսաղէմ յանդիման առնել տէր. ‖ (զուկ. Գ. 22. մինչև 'ի 41. համարն։)

Օրէնքն մովսիսական որ վասն սրբութեան կառնոյր՝ ոչ բանաղատեր զկոյսն մանրիսամ. քանզի որ էր նա և մանրաբ սրպէս 'ի յղութեան, նոյնպէս և 'ի կուսական ծննդեանն իւրում։ Այլ զոր օրինակ ոնծաղդին իւր, որ չէր ընդ օրինաց, այլ հաստատէր օրինաց, կամեցաւ կատարել զամենայն զսա յիւրմէ

եղեալ օրէնս, նոյնպէս փայել էր պահել և մնն զարէնսն յորինակ մեզ խոտարհութեան, և անխիբի պահպանութեան ածելին օրինաց. ընդ նմին առ'ի լսել պատմառս զուցաց ամբարին, որում անձամբ նոքաւ էր խարհուրդ կատարան ծնեղեան նորա, և համարեցին զնա իբր զմի'ի հատարակ կանանց։ Ա՚ս այսորիկ'ի լրանալ քառասնօրեայ աւուրց առանձնութեան նորա'ի բեթզկեմ, գնայ յերուսաղեմ'ի տաճարն. և բան օրինաց որ յայդպիսս անդրանկաց՝ մատոյց ոչ նաւէր զոնծորդին իւր։ Ա՚յս է՝ որ ասի յանդիման առնել նոն. այլ'ի վերայ փրկչին ասի նաև նոն ընդ առաջ. զի որ յս յանդիման եղև նոն, այսինքն'ի տան հօր իւրոյ։

Ա՚յս նաւիրութիւն ամենայն անդրանկաց տարմնեալ էր յոգ'ի յիշատակ մեծի բարեբարութեան, զոր մարդուսէր ամենայն անդրանկաց եգիպտացւոց որպէս ոչ ժողովրդեան որդւոց իսրայէլի, (զոր որդի անդրանիկ կոչեաց,) ազատելով զնոսա'ի ծառայութենէ նոցա։ Ա՚յս նաւիրութիւն մանկանց մարթի էր առնել անմիջապէս'ի կատարիլ ամոյ մոյ զնոնի ծնեղեան մանկանն. այլ զի էր օրէն մարն երթալ'ի տաճարն, եթէ ոչ յետ քառասուն աւուրց, զտան այնորիկ սովորութեամբ եղև. զերկասին'ի միտս աւուր կատարել, զարբութիւն մարն, և զնուիրութիւն մանկան։ Փրկչաբար զտան մանկան էր հինգ սիկղ և կէս, այսինքն երկու և կէս ունկի արծաթոյ. իսկ փրկչաբար զտան արբութեամբ մարն, էր զառն մի. և ընդ նմին՝ կամ փոխանակ նորա առ ազատութեան՝ զոյգ մի տատրակաց, կամ երկու ձագ աղաւնեաց։ Որ գիտել արժան է, զի ոչ էր թողեալ'ի կամն մատուցողին տալ փոխանակ զառնի զոյգ մի տատրակաց կամ աղաւնեաց, և ոչ փոխանակ աղաւնեաց՝ տալ տատրակս. այլ բան ինքեան պարտ էր զառնի՝ տալ և տատրակս, կամ աղաւնիս. և ոչ փոխանակ աղաւնեաց տալ տատրակս. զի յորինաց տասի՝ մի միայն անկարութեամբն'ի պատմառս ազատութեան՝ անբաւիր առնէր։ Ա՚ռն օրէնքն այս էին.

Ա՚ծկ զառն տարեւոր յոգնակէզս, և զոյգս աղաւն-

ւոյ կամ ատարակի վասն մեզայ։ Եւ յայլ գիրսն զանկարուն։ * Այսպէս մի՝ ոչ կամիցի ձեռն նուրա բուսական լինել զառաքն։ և ի վերայ բերի զնեքուն վասն այնոսիսի անկարելեաց, * Ուրցի երկուս ատարակս, կամ երկուս ծոցս ազատեսայ։ (զև. ԺԵ. 6. և 8։) Արդ մարիամ և յովսէփ զանգի ազգատոհ էին, և չէին բուսական զառն մուտցանել, կամ ազատնի կամ ատարակ մատուցին։ Հաստատելի է ասել առաւել՝ թէ ազատնիս, զոր գիրքն էր գտանել. և այն էր սովորական նուէր. ուստի և ի տաճարին ազատնիս վաճառէին, և ոչ ընթեռնուին վաճառել և ատարակս։

Յորժամ մանուկն Յիսուս մատուցաւ ի տաճարն, էր յերուսաղէմ այր մի ծերունի՝ արդար, երկիւղած յոյ, և նոր, զաղդաբեալ ամենայն առաքինութիւնք, և լի հոգւով մարգարէութեամբ։ անուն նորա սիմէոն։ որ որ բան օրէ ազատէր մարիամայ մեծարանքն խոսցէին, այսինքն գաղտեան մեծարին։ Սմա յայտնեալ էր հոգին՝ թէ ոչ մեռանիցիս, մինչև տեսցես աչքք զծնեալն նոն՝ զնոյն մանկացեալ։ Արդ՝ ի նմին ժամանմինչ մարիամ ունելով ի գրկի զՅիսուս մանկիկն ի տաճարն ընդ յովսէփայ, եկ ծերունին ընդառաջ եղեալ։ որ և լուսաւորեալ յոյ, ծանեալ զմանուկն եթէ նա է յայնոսիսի գաղուց հեռ, ակնկալելոն նոն և մարգ։ սա ընկալաւ զնա ի գրկաց մորն յիւր գիրկսն, և օրհնեաց զնոն և ասէ՝ սրատատելով և խանդաղատելով։ Արդ խնդութիւնք երկոց յաշխարհի։ արձակեա՛ զիս զծառայ քո ի կապանաց տարի մարմնոյ, երբ և կամիս իցեն քեզ։ զի կատարեցաւ խոստումն քո։ Աստէն ոչ եւս է ինձ խորհելի։ մեռայցի խաղաղութիւնք։ զի ոչ մեռայ ապայ խնոյ այլ եւս ինչ տեսանել յերկրի, յետ տեսանելոյ զփրկիչն առ ի քէն պատրաստեալ յօրինակ և ի փրկութիւն ամենայն ժողովրդոց։ Փրկիչ լոյս հեթանոսաց, և փառք խրայելի։

Յովսէփ՝ զոր ասա հայր Յիսի կուլ աւետարանիչն, խօսելով ի կարծեաց ամբոխին, և մարիամ Աշնարիա մայր Յիսի՝ ի լսել զբանսն զոր խօսէր սիմէոն,

որպէս և այլքն՝ զմտնկանէն, կայնն զարմացեալ.
Լ. Եթէ ամենայն բազում ինչ յայտագս մարդ եղուն Եթան
բանին յայտանեալ էր յառաջագոյն երկոցուն, և
առաւել մարբեամն. բայց չէր հաղորդեալ զա-
նայն ծանօթութիւնն, զոր կամէր՝ զի առ սակաւ
սակաւ ուսանիցին. զի Եթէ վասն Քոյ գրեալ է
Եթէ զարգանալոյ խնամաւորիր, և հասանիս և շնորհ-
հաց. յայտ է Եթէ առ արտաքս յայտանելով զինքն
օր քան զօր, որ ի ներքուստ էր անկարօտ զարգաց-
մանն, ապա չէր տարակոյս Եթէ յոմանք և մարբեամ
երեթայնն զարգանալով ներքին և արտաքին ծանոյ-
թութիւնք և լուսով, որ ի ձեռն այլեալ անձանց, և
զանազան օրինակաւ հաղորդ էին նոցա ի նմանէ.
Այլ առաւելաւ զարմանք նոցա, յորժամ որ
ծերունին զինքն օրհնելոյ զմտնկացեալն ասէ և զո-
հանալոյ զնմանէ, դարձեալ առ մարբեամ մայր մանն
կանն, և ասաց. ահա այս որդի քո կայ ի գլորումն
և ի կանգնումն բազմոց ի մէջ խարսիլի. և ի
նշան հակառակութեան. և ընդ քո իսկ անձն անցցէ
սուր, զի յայտնեսցին ի բազում սրտից խորհուրդք՝
Յասանին * կայ ի գլորումն ||, ոչ կամի ասել՝ Եթէ
Քն էին յաշխարհ, զի բազումք կործանեսցին և կո-
րիցին. զի հաւատան՝ Եթէ նա էին իւրով մասամբ
վասն փրկութեան ամենեցուն. այլ կամի ասել Եթէ բա-
զումք ևս ի վարուց ի վարդապետութեան, և ի մա-
հաւանել նոցա առ չարութեան սրտից իւրեանց առնու-
ցուն պատնառս ի կործանումն և ի կորուստ անձանց.
Խնդրեալ էր ասել յառաջն՝ Եթէ մանուկն
այն եղիցի լոյս հեթանոսաց, և փառք իսրայելի.
արդ զի մի կործիցին՝ Եթէ ամենեքեան հանդերձեալ
են գառնալ հաւատալ ի նա և արդարանալ, յա-
ւելու յուշ առնել Եթէ նա է որպէս զլոյս արեգա-
կան կարգեալ ի բարեբարել ամենեցուն. բայց ի-
նոր չվայելէն ամենեքին ի բարեբարութեան անդ նո-
ցա. զի այլք յաւագարք վնասին և ասնջին ի լու-
սոյ նոցա. այլք կուրացեալք ոչ հաղորդին լուսոյ նո-
ցա. և որք փակին զպատուհանս ընդդիմ լուսոյ նո-
ցա, մնան ի խաւարի. Սիմէոնն խօսի յառակապէս

զիմաստիլն. վասն զի ունելով նոցա յուծայնն զրոց, և 'ի գործոց և 'ի վարդապետութենէ Քրիստոսի ծանութեան բաւական 'ի Հան չելել զնա և հաւատալ 'ի նա, ապաւել անպատասխանի գտանին. զի յարութիւնն նոցա տարան զնոսա 'ի ստոփակ կործանումն 'ի յամենայն խառնարարութենէ չկամիլ Հանդերձ զիրկիր իւր եանց, այլև ստնջար լմնել, և 'ի մահ մնանել։

Լակ զի՞նչ * նշան հակառակութեան ॥ իցէ. զկատարումն այսորիկ ունելիք տեսանել յամենայն կեանս փրկչին և 'ի մահուն նորա. թող զի և այժմ յայտնի զարաց հետ զկնի փառաւոր յարութեան նորա տեսանելիք 'ի հրէայս, 'ի զանազան հերետիկաս, և յայտնի խառնակրնս. որք հանապազ հակառակ կան օրինաց, և վարդապետութեան, և հաւատոյ նորա։ Յաւել սիմէն ասել ցմարիամայրն. և * ընդ քո իսկ անձն անցցէ սուր ॥. այսինքն ցաւ և մորմոք սրտի ստոփակ. որ Հնչդրանցաւ 'ի չարչարանսն և 'ի մահու ծածարաց նորա։ Լաւ 'ի վերայ լաց. * զի յայտնեսցին 'ի բազում սրտից խորհուրդք ॥։ Լաւ լաս սովորական լեզուի ասելոյն ասա իցչաղկապ չէ՝ այլ նշանակէ զմարդանական պատճառս, այլ զպատճառս հետեւութեանն. իբր ասել. * վասն այնորիկ յայտնեսցին 'ի բազում սրտից խորհուրդք ॥. այսինքն յայտնեսցի 'ի բազում սրտից եղեալ, մեկ ամ ի, Հանարատակն հաւատարիմ ծառայ և հետեւող նոցա, և ոչ. զի սովորաբար բարեկամքն 'ի նեղութեան Հանդիպին։ Ոչդ էր և յամենի՝ մինչ խօսէր զայսոսիկ սիմէոնն, և լսէր զամենայն, այլ բանն չէր ուղղեալ առ նոս. վասն զի նոս յառաջ քան զայսոսնել փրկչին զանձն արհարհի 'ի ձեռն բարեգութեանց և սրանչելագործութեանց՝ Հանդերձեալ էր ելանել յարիարդել տասն։

Ա՛մենեքեան ծերունին խօսէր առ մարիամ զմանչ զարեկական պատգամն զայսոսիկ, եհան 'ի վերն անուանս մարգարէ զառաջ փանուելն յայսմ ասելոյ. սա ինքն անցեալ էր զաւուրքն բազմաք, և զի յետ կալ ոչ նոցա ընդ առն ամն եօթն, մեռեալ էր այր նորա, և ինքն մնացեալ յայրիութեան, նուիրեալ զանձն

'ի Ծառայութիւն տաճարին. ուստի ոչ միմիսիր բնաւ՝ պաշտելով զնոսա աղօթիւք և պահօք զցոյգ և զցերեկ. և էր հասեալ յութիսներորդ և 'ի չորրորդ ամ կենաց իւրոց. որ և 'ի նմին ժամու յարուցեալ օրհնէր և գոհանայր զմանկացեալ նոսին. և խոսէր զնոսանսն ընդ ամենեսին որք անդն կային, և ջերմեռանդն արտիւ սիրեալին մծառակայ կատարման փրկութեան խոսայելի։ Եւ յայնմ ասել աւետարանչին. * Եւ իբրև կատարեցին զամենայն բան օրէնսացն նոսին ॥. օրով տայ խնամեալ, և զայն, թէ վնաս բերցու հինգ սիկղ 'ի փրկանս մանկանն Յիսու։ Եւ զայս մարիամ և յովսէփ ընդ մանկանն զարձան անդրէն 'ի գալիլեա 'ի քաղաք իւրեանց Նազարէթ, ուր էր առն նոցա և տիրական բնակութիւն։ Եւ զոգայս ցեղոն նոսա զանձերս և զօրանայր մարմնով. և օր յօրէ 'ի վեր երևեցուցանէր զանձն լի խնամատութիւն, և շնորհալի յոյժ և ամենասիրելի. այս է ասել, * և շնորհքն նոյ էին 'ի վերայ նորա ॥։ Եւ թէպէտ այս պէս և այսչափ սիրելի էր մանուն յս անդատին 'ի ծնել, բայց նորատեղան և անտուր փառք՝ զոր թագաւորքն ոմանք էին յարևելից ընծայել նմա, լցին խռովութիւն ընդդէմ նորա զնոսանսն քաղաքն ա պերախտ ասին խոսայելի զերուսաղէմ և զյարանա խանձ թագաւոր նորա. և նենգեցին արեամբ վերկիրն բեթղեհէմի. զորոց ժամ է ասել 'ի կարգս։

ԳԼ. Դ.

Լուսաբանութիւն մեծաց։

* Լաւ է Տեառնէն Յեսի՝ զի բնթագնիւմ հրեշտաւանի յառաւօտ հեղուցեալ արքային, ահա մոգք յարևելից եկին Յերուսաղէմ՝ և ասին. (մատթ. Բ. 1. Մինչև՝ Հատարն. 13։)

Ինչուան է ամենեին՝ ի պատմութիւնս աշխարհի, թէ՝ ի Տեառնէ՝ ի և իսկ մեծագոյն թագաւորի՝ շարժեալ իցեն երբեք յերկրէ իւրեանց ոտար աշխարհաց գալ՝ երկրպագութիւն խոնարհարարապատ մատնեան։ Արդեկ բնաւոյն թագաւորանոյ չեն գիւրամահ խոնարհիլ այլոց, յորժամ շահասիրութիւն կամ հարեն ոչ ստիպեսցէ. միոյ միոյնոյ Յեսի Քրիստոսի մերոյ այս պատիւ ընծայեցաւ՝ գալ թագաւորաց և երկիրպագանել նմա՝ ի խոնարհարարութիւն։ Այս մեծ և նշանակ ուսուցանէ նոցա. վասն զի մարդիկ խոնարհանք և իշխանաւորք ոչ երբեք յանձն առնուին զայնչափ էլ՝ լաւ և գժուարակոխ ճանապարհս հատանել, եթէ՝ չէր նոցա յայտնեալ լինել գերմարդկայնն թէ՝ ի նմա։

Ի Տեառնէն ասէ Յեսի յառաւօտ հեղուցեալ արքային՝ եկին մոգք յարևելից Յերուսաղէմ՝ և առաջին խնդիրք նոցա անդ՝ այս էր. թէ՝ ուր է որ Տեառն արքայն հրեից. զի տեսանք զաստղն նորա յարևելս, և եկաք երկիրպագանել նմա. հաւատան էին ասեն վասն Տեղեանն նորա, քանզի տեսանք նոր աստղ մի յարևելս, որ ատուգեաց մեզ անշուշտ զՏեառնեղ նորա, և եկաք երկիրպագանել նմա. վասն այնորիկ փափաքիմք զիտել՝ թէ՝ ուր իցէ և յորժամ ասեն։ Խնդիրք նոցա էր զՏաղաւորն. նմին իրի ըստ մարդկայնն խոհեմութեամբ՝ եկին խնդրել զնա յարքայական քաղաքի իւրում. զի ոչ երբեք առանց երկնա-

ւոր յայտնութեան, հնար էր անցանել ընդ միտնա-
ցա գտանել զնա յանկնան և յանարգ այրի. զի
չեւեւա գիտէին՝ թէ ոճն մարգացեալ էին յաշխարհ
յամենի առնել զհպարտութիւն ամբարտաւանութեան
մարդոյ, և ցուցանել թէ 'ի կրիան ոչ առաւել 'ի
յարդի է կամաւոր աղքատութիւն, քան զամենայն
գանձս և զմեծութիւն աշխարհի։ Ա՝ գիտէին, թէ
որն եկեալ է մատանել զանձն 'ի նեղութիւն և 'ի չար
չարանս, և ուստ ցանել մեզ՝ թէ այն է հաստատ
Հանապարհ հասանելոյ երկնից թագաւորութեան։
Ամենայն մարդկորէն խորհելով կարծէին գտանել
զնորածին արքայն յիւրաւոր թագաւորական քաղա-
քի, այլ ոճ ոճ զնոսա անդր՝ զի 'ի բազմաժողով
քաղաքի անդ հռչակեալի ծնունդն այն՝ ոչ 'ի ծանօ-
թից և 'ի մերձաւորաց ծնելոյն, որոց վկայութիւնն
կասկածելի լինէր, այլ 'ի նշանաւոր երևելի անձանց
'ի հեռաւոր աշխարհէ եկելոց. որպէս զի ոչ որ եր-
կուանայցէ ընդ վկայութիւնսոցա։ Ա՝ ծանանել այլոց
արքայորդւոց հրեշտակք արձակին ասելով զուսր
յայլևայլ հեռաւոր թագաւորութիւս. իսկ 'ի ծնընդ-
եանն երկնից արքային՝ լուր ծնդեանն նորա բերաւ
'ի հեռաւոր օտար թագաւորութենց առ այնոսիկ,
յորոց վիճի ծնեալն էր։ Ա՝ ոճ իմն էր՝ 'ի քաղաքն
ուր բռնակալէր օտարազգի թագաւոր՝ այնպէս հա-
մարձակ և հրապարակաւ խօսել վասն ծնդեանն ազ-
գային բնիկ թագաւորի։ Ա՝ գէպ էր եկելոցն կաս-
կածել՝ թէ հերովդէս 'ի զէն վառեսցի. մարթ էր
խիթալ՝ թէ շատ չարիք լինիցին գիտելով զի բուն
նախնեան թագաւորելոյ յամենայն ինչ ձեռնարկ։
Ա՝յլ նորա առաջնորդեալք 'ի հոգւոյն ոչ՝ մոռա-
ցան զամենայն մարդկային խորագիտութիւն, առ ոտս
կոխեցին զամենայն մարդկային ակնածութիւն, ոչինչ
զանգիտեցին 'ի նախանձուէ թագաւորին։

Ա՝յս համարձակ և հաւատի հռչակ նորոյ արքայի
խռովեցոյց զհերովդէս. և չէն ինչ զարմանք. զի չէ
հնար կալ յանգորրու որսի բռնակալին, յորժամ
երկնչի անկանիլ յահռուոյն զոր բռնութիւն ունի.
այլ զարմանք մեծ է խռովիլ ընդ նմա և ամենայն

երուսաղէմացւոց։ Հոգալուզդք սովորաբար առ ոչ ինչ այնպէս յաժարեալ էն, որպէս ունել Թագաւոր 'ի քնիկ ազգի իւրեանց. հրամանատարութիւն օտարին թէպէտ և բազում ազատութիւն ասցցէ՝ իբրև լուծ հանդերձեալ է. իսկ հրամանատարութիւնն բնիկ Թագաւորի թէպէտ և լուծ իցէ, Թուի ազատութիւն առ բնիկ Թագաւորաւ թէև չարաչար վարեսցի, միշտ կայ յոյս բարւոյ. իսկ առ օտարաւ՝ թէև բարեաւ վարեսցի, միշտ կայ երկիւղ չարի։ Այս երևի թէ պարտ էր երուսաղէմի լի լինել ցնծութեամբ, 'ի լսել անդ՝ թէ ծնաւ նոցա Թագաւոր յազգի իւրմէ. այլ չեղև այնպէս, զի փոխանակ ուրախութեան՝ լի եղև խռովութիւն։ Ազանձական կիրք զօրացան քան զհաստատակաց բարութիւնս. ամենք արդէն էին 'ի պատուի յարքունեաս հերոդէի. ամենք հաստատեալ առատս ունէին. ամենք լսելով զնորոգ ծնունդ նոր թագաւորի՝ հեռի յոյժ տեսանէին զօգուտս որ ակնկալելի էր առ 'ի նմանէ. այլք երկնչէին 'ի պատերազմական խռովութենէ և 'ի թշուառութենէ, որք սովոր էն յառաջել և զհետ գալ փոփոխութեան թագաւորաց. կենաց կասկածէին, թէ հերոդէս տեսեալ, թէ ոչ կարէ յերկար վարել զթագաւորութիւն իւր, կեղծեցաւ զերկիրն անարելի հարկապահանջութիւն. և թուելով նոցա թէ այնու յուսեցոյն լինելոյ վնասակ իւրեանց, ոչ ինչ փոյթ էր նոցա, թէ առ բնիկ թագաւորաւ 'ի բարիս վայելեսցին թագաւորեալք իւրեանց։ Այսպէս ամենեքեան ցանկային ունել թագաւոր հանդգգի, բայց ոչ որ կամէր առնել չարեացն որք անխարդելի էն 'ի փոփոխութեան թագաւորութենէ։ Այս էր պատճառն հաստատակաց խռովաւն յերուսաղէմ. որ առաւել լոկ կասկած էր, քան հիմնական բան։

Այլ հերոդէս այլազգի նախանձաւոր իւրումն բռնական թագաւորութիւն՝ ունէր հիմնական պատճառ խռովելոյ, 'ի լսել թէ ծնաւ արքայ հրէից։ Վասն այնորիկ առաջին խորհուրդ նորա եղև անդ 'ի խանձարուրս ապտանել զնա. և այնպէս յաւ պահպանել զթագաւորութիւն իւր։ Այլ առ հասանել

լոյ այսպիսի չար կամաց իւրոց, կարեւոր էր զիտել զանդին ուր ծնաւ, և զամենել հնարս որոշելոյ զնա յայլ ամենայն մանկանց. զուսաջին ծանօթանալիւնն յուսացաւ զամենել 'ի գրագիտաց երբայեցւոց, և եգիտ. իսկ զերկրորդն 'ի մոգուց ամենի, այլ սուտ խնդրեցաւ խորամանկութեամբ հորա։ Օ՛ի ժողովեալ զամենայն իշխանս քահանայից, և զգրագիրս 'ի ժողովեցն, ետուց նոցա թէ ուր ծնանիցի Քրիստոս։ Իսկ նոքա միաբան եւասն պատասխանի, 'ի բեթղեհեմ յուդայ. բերելով 'ի վկայութիւն զմարգարէութիւնն միրիայ մարգարէի՝ որ ասէ, * Իսկ դու բեթղեհեմ երկիր յուդայ՝ ոչ ինչ կրտեր ես յիշիսանս յուդայ. 'ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զիսրայէլ։ Լուեալ զայսոսիկն բերէ զայս մարգարէութիւն՝ զայնմ բան որում բերան 'ի ժողովն անդ. զի բան հանրին խնամոյ և զոյութեան բանին հանճարոյն և բուն մարգարէութեանն միրիայ, որ ունի այսպէս։ * Իսկ դու բեթղեհեմ տուն եփրաթայ տարկաւորք՝ իսկս լինել 'ի հազարաւորս յուդայ, 'ի քէն ելցէ ինձ լինել իշխան իսրայէլի. և ելք նորա 'ի սկզբանէ աւուրց աշխարհի։ (միք. ե. 2.) Լինելիչն որ 'ի տահմանս ցեղին յուդայ՝ կոչէր բեթղեհեմ եփրաթայ, յորոշումն 'ի հանմանուն քաղաքն, որ էր յայլուստ ցեղի։ Իսկ էնչ, և հարբարար, զնոցն նշանակէ. զի ընդ այն ժամանակս իշխանք ժողովրդեան, որք իշխէին 'ի վերայ հազարք անձանց, կոչէին և հազարապետք։ Արդարեն ասէ, սահարար է, կամ բան այլ թարգմանութեան՝ ։։։

Հերովդէս սուրգեալ ի մարգարէսն զծնանիլ Քրիստոսի ի բեթղեհէմ, կայր տակաւին ի մեծամտութեան սրտին զնա ի միջոց այնպէս մանկանց ծնելոց ի նմին քաղաքին. եդ ի մտի ի մտքուց առնուլ լոյս առ այն։ Կարգս կոչեաց զնոսա առ ինքն, և ծանծկելով զանօրէն կամս իւր, տեղեկացաւ մանրազնին ի նոցանէ զօր և զժամ յորում տեսին զաստղն։ Այս կեղծաւորեալ, թէ և ինքն կամի երթալ ելեալ կրապագուելոյ նորոյ արքային. այլ չէ ի ճահ ինքեան զոր թագաւորն էր երկրին՝ յանգէաս ելանել ի խնդիր նորա, ասաց նոցա երթալ ի բեթղեհէմ, և ամենայն փութոյ անդուանիք խնդրել զնա. և յորժամ գտանիցէք, ծանուցէք նմա, զի և ինքն երթեալ մատուցցէ զպաշտաւորաշաղ յարգուելոյ նորածին արքային։ * Այլ արձակեալ գնասա ի բեթղեհէմ, ասէ. գնացէք ստուգեցէք վասն մանկանն. և յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի և ես եկեալ երկիրպագից նմա։ Զուարթն խորհրդանկ կարծէր խաբել զարարիմա մոգն. և նորօք առանց ինչ աշխատութեան ի ձեռս բերել զորն. այլ ինքն խաբեցաւ և խայտառակեցաւ։ Գնացին նորա. և իբրև ելին ի քաղաքէն, ահա աստղն զոր տեսին յարևելս, անդրէն երևեցաւ, և առաջնորդեաց նոցա մինչև եկեալ եկաց ի վերայ տեղւոյն՝ ուր էր մանուկն։ Նոքա տեսեալ եղև ուրախութեամբ նոցա ի տեսանել զաստղն։ Եմուտ և տեսին զմանուկն հանդերձ մարդն իւրով. և անկեալ ի գետին երկիր պագին նմա. և բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա ոսկի, և խնդրուկ, և զմիւռս։ Եկ ինքեանք զոր ընդհանր փոխարէն ընկալան ի Տէրէ, զի՝ զերազանցս յանծամանէն, և զի՝ զոյցք եղեն ի մէջ յոսկեփայ և նոցա, ոչ գիտեմք. բայց հաւատամ եմք, թէ բազմաք առաւել ընկալան, քան զոր ընծայեցին. զի չէր յարմարէի թագաւոր այնպէս առատաձեռն վարձահատոյց և այնպէս երախտագէտ որպէս զնոսա։ Զոր բերին ոսկի, խնդրուկ, և զմիւռս. և տարան կենդանի հաւատ, եռանդնագին սէր, և հաստատութեամբ ի բարին և ի որքա-

թեն. վասն որոյ եղէն այնու հիւսն իբրև լուսատուք երկրի իւրեանց. և փայլին այժմ 'ի մէջ լուսատուց բացն երկնից աղքատութեան։ Հերովդէս մեայր անձկանաք առնուլ 'ի մոգուց լուր հաւատոյ զմանկանէն. բայց ոչ որ սովոր է զխորագէտս ըմբռնել 'ի խորագիտութեան իւրեանց, հրամանն եւս երանելի մոգուց 'ի անուանն 'ի ձեռն հրեշտակի չդառնալ անդրէն առ Հերովդէս. ուստի նոքա զայլ ճանապարհն կալեալ գնացին յաշխարհն իւրեանց։ Զնոսայ ուրեմն իբրև եւս հերովդէս թէ խաբեցաւ 'ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ, և եղ 'ի մտի ձեռնարկել 'ի գործ գազանական, քան զոր դժոգակ և անողորմ գրեմք չեր մարթի լինել յաշխարհի։

Ա.յլ յառաջ քան զպատմել մեր զնոյն, յետ առելոյ զմոգուց զոր ինչ յայտնի ունիմք յաւետարանէն, կարեւոր համարիմք առանձին առնել սոսա զայլ ծանօթութիւնս զնոցանէ, որք բնդ հակառակութիւնք են. իբր զի ոչ այնպէս բացայայտ նշանակին 'ի աղբիւրս. և լուծանել զդժուարութիւնս լաւ մեկնուածոց կաղինեսի։

Գ.լ. Ա.

Լ՝ուծանին գծուարութիւնք ինչ ընթերցուածոց, որ լանիմ բայոյոյ 'ի ոբ գիրս։ 'Լուսի՝ ինչ ասին։ Լրիւրդ՝ ինչ ՀՆՇՄարտութիւն խոտորեր էին. և ասոյ էին։ Լրիւրդ՝ որ սասանչագործուին է, ինչ էրբ էին։

Ա՝ռ առաջինն ասեմք բան կաղինեսի, թէ զօրութիւնք բանից աւետարանին՝ չէին պակաս յերից. և զօրութիւնք բանից հարց և ուսանողութեան՝ էրեւի թէ չէին աւելի քան զերիս։ 'Ի հայ և 'ի լատին և յայլոց բնագրեր քարի, թէ էին առաւել քան զմի. զի այս բնագիրքս միշտ բացմաւորակի խոսին զնոցանէ, իսկ 'ի յոյն բնագրեր քարի թէ էին առաւել քան զերկուս. վասն զի ունելով յունացս բաց 'ի միւսոց

բանական և 'ի բազմաբանական՝ նաև զերկրական թիւ, զոր վարեն յորժամ խօսին զերկուց, ասա ոչ երբեք 'ի կիր ածեն զերկրականն, այլ միշտ զբազմաբանականն. և թէպէտ յոմն լեզու վարէ երբեմն զմին փոխանակ միւսոյն, սակայն ասա չունիմք պատճառս հեռանալոյ 'ի բնական նշանակութենէն՝ որ ասելի քան զերկու նշանակէ։ Այլոյն քազի և 'ի հարց և յաւանդութենէ. զի հարք սովորաբար միշտ զերկոսն խօսին. և ոչ ասեն ուրեք թէ ասելի կամ պակաս եղին։ Մանաւանդ յամենայն հին նիկարս և 'ի պատկերս երբեք կան նկարեալ միշտ և ամենայն ուրեք. յորմէ յայտնի երևի թէ այս էր հասարակաց առանց դադարի 'ի վաղնջուց ժամանակաց։ Մանաւանդ 'ի հաստատութենէ այսմ բերանն և զերբիս տեսակս ընծայից զիրաստակեալս յաւետարանի. որպէս թէ խրատքանչիւրն այլ և այլ ընծայս մատուցեալ իցէ. բայց այդ ոչ է հաստատի. առ առաւելն այսչափ ինչ քազի այսի՝ թէ երբեք էին գլխաւորք և նախապատիւք. այլ յայտնաբանէ ոչ հեռաւի թէ չէին ընդ հոսա և այլ մոգք խնստոտեալք։

տի մաշիկեղէն ընդ մէջ իւր. և կերակուր նորա մա-
նանայ չորացեալ և ծեծեալ՝ խառն ընդ մեղր վայրե-
նի։ Հաւատիցէ՞ տարաբ սատ ոմանք խմանան զարմատ
ինչ ինքնաբերս ՝ ի գաշտս և յանապատս ըստ իսիք

նման Հանդերձի, կամ շղգամի. այլ Հասարակաց կարծիք գնել լինել իրական մաքախ. որ է տեսակ մի 'ի գեղեցն թանչուն կենդանեաց որբ կոչին ջրաբակ, խարագուլ, մաքախ, զորս իբր նոցա թռչել տային օրինք ուսել հրեից. որպէս յայտ է (ղևտ. ԺԱ. 22.) ||Եւ բանկելի նոցա լոկ ջուր. բայց և այնպէս ասաւ. զի բարձրագոյն խօսելով մաքեմ էր ասել զեմանե, որ. պէս և իրաւ ասաց ||Ցա վասն նոցա, այլ՝ որ ոչ ուսէր և ոչ բանկեր։

||Յայտիսի խիստ ապաշխարող կեանք՝ Հանդերձ հրեշտակային անմեղութիւն, և նոր նախանձու փառացն ոչ, և փրկութեամբ մերձաւորաց, ուներ զանգի մեծամեծ աբանելագործութիւն, (զի յովհաննէս՝ այլ նշան ինչ ոչ արար), և ձգէր առ նա յանապատ անգր զիսուն բազմութեամբ ունկնդրաց ոչ միայն յերուսաղէմ, այլև յամենայն հրէաստանէ, և յամենայն կողմանց յորդանանու, առ որով շրջէր յովհաննէս քարոզելով։ ||Ինձ էր և Հանրական շարժումն ամբոխին 'ի զէզջ և յապաշաւ. և էին ինչ զարմանք, զի սովոր է միշտ մեծ լինել պատուդ, յորժամ վարք քարոզչին լինի յառաջաբան քարոզին։

ԳԼ. Բ.

Ընդհանուր բարոյականներ։

* Լսել ապաշխարելոյն զի մերձեալ է արքայութիւն երկնից։ (մատթ. գ. 2.)
* Լաւ քարոզելոյ մկրտութիւն ապաշխարութեան, ի թողութիւն մեղաց։ (մարկ. ա. 4.)
* Լաւ եկեն յամենայն կողմն յորդանանոյ քարոզել մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց։ (ղուկ. գ. 3. ԽԱ.)

Սովորական նիւթ քարոզութեան յովհաննու էր պատրաստել զսիրտս ունկնդրաց Քրիստոսի և ընդունել զՆա. վասն որոյ և զայն ինչ առնոյր իւր նիւթ, որ ինչ առաւել սատար լինէր այսմ իւրում վախճանի։ Լաւ զի մեծագոյն արդէլոյ ընդունելոյ զՆա՝ էն մեղք, ջանայր բառնալ զայս արգելս, յորդորելով զամենեսին յապաշխարութիւն։ Պատառնայր մահ մնասուցս աշխարս, ասելով՝ աշխարսիկ տապար առ արմին ծառոյ եդեալ կայ։ Պատառնայր զաշխարհին պատիժ դժոխոց ասելով, ամենայն ծառ որ ոչ առնիցէ պտուղ, հատանի և ի հուր արկանի։ Զատատացուցանէր զիարեսեցիս զորինեալս և զբրինեալսն կարծեցեալս, որք հատատառեալ ունէին ի մտաս իւրեանց, թէ զիարդ և կեցցեն՝ սնարեալ ունին փրկութիւն հատանել, զի որդիք աբրահամու էն, ուստի և սեպհական ժողովուրդ ոչ։ Լա՛ ցրելոյ զայն մոլար կարծիս նոցա, առաջի դնէր նոցա թէ ուծ չունի պէտս և ոչ իմիք, դիւրին է նոսա եղծանել զզ ժողովուրդ ամպարիշտ, և ոչ ոչ պակասացին նոսա երկրպագուք, զի կարող է և ի քարասիրտս մարդկանէ յարուցանել իւր ժողովուրդ հաւատոց։ Ա՝ սոսա որոյ փութալ պարտ է ձեզ ասէ՝ առնել պտուղ արժանի ապաշխարութեան. և մի վատա-

հանալ լոկ յարգիւնս նոխարհարց մեռոց։ Իսկ յոր-
ժամ երթայցին առ նա առանձինն ամենք ի փարե-
անցուց, որք յարտաքինս եղեալ էին զամենայն բա-
ռիկրծուութիւն իւրեանց, և ամենք ի սաղուկեցւոց,
որք ուրանալով զյարութիւն մեռելոց, մնացեալ էին
հերետիկասութիւն և պատասաէին զեկեղեցի նոցա,
յանդիմանէր զնոսա անաչառ տասոկի կշռամբանաբ,
մինչև ծառնեղ իմից կոչելով. և սպառնայր զահեղ
զանհրաժեշտ դատաստանն աց։

Լ.ամ առաւելապէս յանձախէր խօսել առ ամե-
նեսին և աւետարանել զեկեալ մեսիային, թէ ընդ
հուպ ունի յայտնի առնել զանձն իւր այր՝ որ զինի
իմ գայ ասէ, հզօրագոյն է քան զիս. որում չեմ բա-
ւական խոնարհել լուծանել զիրացս կօշկաց նորա։
Լ.ս մկրտեմ զմեզատրութիւն, որ ոչ սրբէ զհոգիս նո-
ցա. բայց զօրագոյնն որ զինի իմ գայ, լուանալով
ի ջուր՝ սրբեսցէ և զհոգիս ի հուր հոգւոյ սրբոյ։ Լ.ամ
առեալ է ընդ հանուրս և անբաղդելի դատաստան-
թիւն. և որպէս սրբի ցորեան ի կալ հեծանոցաւ, և
բարեն ժողովի ի շտեմարանն, իսկ յարգն արկանի
ի հուր. այնպէս ժողովեցէ նա զարիս յիւր երկ-
նային շտեմարանն, և զամենարիշաս դատապարտես-
ցէ ի գեհենն անշէջ հրոյ։ Լ.յսպէս քարոզէր և
այսպէս տայր պատասխանի քահանայից և զեւատաց-
ւոց, զորս հրեայքն յերուսաղէմ առաքեցին առ
նա հարցանել վասն մկրտութիւն նորա, որ նոր ինչ
էր առաջի նոցա։ Պատեալ էր ի մէջ ժողովրդեան
ձայն ելն վասն յանհանուս, թէ զուցէ նա իցէ քրիստոս,
այսուհետև մեսիային յայնչափ զարուց հետէ անձկանաբ
ակնկալեալ. այլք կարծէին թէ իցէ եղիա, կամ
այլ որ մարգարէ որ վասն այնր ժամանակի իցէ պա-
հեալ։ Հարցին ցնա որք առաքեցանն թէ զու՞ ես. ի-
սկ նա որպէս հիացեալ և տատանեալ, թէ իցէ՞ որ-
զեաբ հնար անկանիլ այգպիսի կարծեաց ի սիրտ
ուրուք, խոստովան եղև ամենայն հաստատութիւն, և
ոչ ուրացաւ, խոստովան եղև և ասաց եմ թէ ես ոչ
եմ Մեսիա։ Լ.ոյս հարցին, եմ եղիա՞ իցէ, ասաց թէ
ոչ. կամ թէ մարգարէ՞ն իցէ զոր մտքիս ասաց յա-

բուցանել ՝ի ի՛ տեղի խբ, նոյն օրինակ եւ պատա-
խանի թէ ոչ. զի չէր այնպիսի՝ որպիսի խմանային
որք հարցանէին։ Յոյժ համեստեա թէպէտ ի Նոյեմ կա-
ւեցաւ եղեալ, այլ փոխարերութիւն և նմանութիւն. զի
զերդիային ունէր զարիութիւն և գնահատանք ուծային.
բայց նորա ոչ յայն միտս հարցանէին, այլ խնդրէին
զիտել՝ թէ արդեօք նա ինքն նախկին եղեսին իցէ,
զոսն որոյ և նա ասաց, * ոչ եմ՝։ Զոյնպէս կուլեաց
Նոյ զյոյժամենեա ոչ միայն մարգարէ, այլ առաւել
քան զմարգարէ. և զարարիա Հայր նոր ասաց զոսն
նորա թէ մարգարէ բարձրելոյն կոչեսցի, ոչ միայն
արդէս եռանդնոտ և ջերմ քարոզ բանին ՝ այլ
որպէս մատամբ նշանակիչ զեկեալ մեսիայն. * երթիչ
ցեսս առաջի երեսաց նոն պատրաստել զճանապարհս
նորա։ ուստի և էր առաւել քան զայլ մարգարէս.
զի այլք զուշակեցին զԲՆՆ գալոց, իսկ յոյժամենեա
յուցանէր զնա եկեալ. բայց հարցանողքն ոչ զայս
խնդրէին, այլ կամէին խմանալ եթէ նա իցէ մար-
գարէն նախագուշակեալ ՝ի մոմսիսէ երբ նոր օրէնքս
դիր ժողովրդեան, կամ գէթ այլ որ յառաջնոց
մարգարէից. և զի ինքն ոչ էր այնպիսի, զոսն ասա-
բիկ ասաց թէ * ոչ եմ՝։ Հուսկ յետոյ սոխպեցին
զնա ասել զանձնել թէ ով իցէ. յայնժամ յայտնեաց
նոցա, թէ ինքն է ձայնն այն բարբառոյ (կամ բար-
բառող մեծաձայն՝) զուշակեալն յեսայեայ, եկեալ
հաճեալ որպէս յառաջնոցն կարապետ քսի քարո-
զել յանապատի, և յորդորել զժողովուրդն յու-
զութիւն վերուց, զի եկեալ ՝ներն գոցել ճանապարհ
ուղիղ և ապահով ՝ի սիրտս նոցա։

Եւ զի որք առաքեցանն՝ էին ՝ի փարիսեցւոց ան-
սի նախանձաւորք արտաքին բարեձեւութեամբ, ակամ
հարցաքննել զսոսն մկրտուել նորա թէ զինչ գրիգ, և ա-
ռանց իշխանութեամբ մկրտել, որովհետև ոչ ՝Ինն է, ոչ
եղիա, և ոչ մարգարէն զոր հարցին։ ՝Ի բանից առ-
ան երևի, թէ սոքա ունէին գէթ ուրուական ինչ
ծանօթութիւն, թէ հանդերձեալ էր երբեմն հաստա-
տել լուսաւորութիւն կամ մկրտուել մարդեղական հոգւոյ.
զոր գուցէ քաղէին ՝ի սաղմոսէն։ * լուա, և քան

գՅիւն սպիտակ եղեց։ կամ յեզեկիելէ ուր ասէ. * լուացի զքեզ ջուրբ, և սրբեցի զքեզ։ (եզեկ. ԺԶ. 9.) և կամ 'ի զանազան լուացմանց որք էին սահմանեալ յօրէնս Նոցա յօրինակ այլ ինն փրկաւէս լուացման. մինչև հասու լինել Նոցա, թէ զիւրեանս ամենեքեան փրկական լուացման հոգւոյ՝ ՍՈՒ միայն կարէ հաղորդել ուժք. և թուի թէ եղեալ էին 'ի միում իւրեանց թէ այլուստ ոչ հաղորդէ, բայց միայն մեսիային, կամ եղիայի, և կամ մարգարէին 'ի մնջեան. գուշակելոյ։

Բ. այսոքիկ սկսանի յայտնեալս և քան զեւ չքաւցուցանել զանձն առ Քրիստս. վկայելով թէ ինքն միրտ, լոկ ջրով, որ չունի զայլ ինչ զօրութիւն, բայց միայն արբել զարտաքին մարմնոն և ազգ առնել գմերձակայ մեքրութիւն հոգւոյ. այլ կայ ասել 'ի միջի ձերում այր, զոր դուք ոչ ճանաչէք. և սակայն այնպիսի որ է, որում ես չեմ արժանի եթէ լուծիկ զկերպացս կօշկաց Նորա. որ զինի իմ գալոց է քարոզել և միրտել բարձրագոյն զօրութիւն. և նա յանծայնին միաւ՝ յառաջ իսկ էր քան զիս. և ես կարգեցայ առնա, և առաւելեցայ վասն Նորա իբրև յառաջնութեամբ կարապետաւն՝ պատրաստել զՔրիստս ընդունել զվարդապետութիւն Նորա։ Բ. յս խոստակցութիւն եղև 'ի բեթաբարա յայնկոյս յորդանանու. ուր գային բազումք և միրտէին 'ի յայտնել 'ի գալ անդր՝ նաև բազում աւուրքք յետոյ քան զմկրտութիւն Յոհ, որպէս ցուցցուք 'ի տեղւոջ իւրում։

Բ. զայս այս նիւթք էին քարոզութեան յայտնութեանն հանրանգ առ յորդանանու. օրինակ ապաշխարութիւն անձինն, յորդոր լսողաց առ ապաշխարութիւն, և բարձր վկայութիւնք 'ի վերոյ մեսիային։ Լակ յորժամ ունկնդիրքն մերձ գային առ նա խնդրել առանձին խորհուրդ խրատու յուղղութիւն վարուց, զրան իւր յարմարէր առ իւրաքանչիւր կարիս Նոցա, աստուցանելով և խրատելով գնուստ բան անցնիւր վերնակի։ Գայլին զինուորքն, հարցանէին և ասէին, * մեք զինչ գործեսցուք։ և նա առ 'ի զատանջս առնուլ վանդաց, որք սովորական էն զինուորաց

կան վիճակի, խրատեր 'ի բաց կալ 'ի հարատևութիւնէ, 'ի զղջութենէ, 'ի նեղելոյ զընկերն, և 'ի ինքեանէ ապառնալեօք, և յաջողակութիւն. և խելամտեցուցաներ նոցա շատանալ թշուառկօք զոր ունէին յիշխանէն։ Ինդուներ և զմնաբարս, և 'ի հարցանել նոցա թէ՝ զինչ զոր ծեացուք։ ուսուցաներ կալ 'ի սահմանի՝ որ եդեալն է յօրինուածս իշխանութեանէ. մի յանելոյ թեր չարութիւն, և մի ժողովել ինքեազլխոյ ծանրացուցանել զբեռն անտանելի 'ի վերայ ժողովրդեան։ Լաւ զամենեսին առ հասարակ յորդորեր 'ի գութ և յողորմութիւն կարօտելոց. տալ զաւելորդն ոմեսի, զոր տեսանիցէ կարօտ ոմեսի, եթէ հանդերձ իցէ, եթէ կերակուր, և կամ այլ ինչ 'ի կարեւորաց։

Լայսկս խրատելով և խրախուսելով զամենեսին յուղղութիւն վարուց և յաստուածարութիւն, մկրտիչ գնաց 'ի յորդանան գետ։ Կիրառութիւն յայնմանութան հանրէն հարց և մեկնեաց ոչ էր խորհուրդն ոչ տայր հնարս, և ոչ իսկ տիրապէս նշանակէր զայն։ Խորհուրդն հին օրինաց ոչ տային հնարս, բայց նշանակէին գնարհն, զոր Աստուծոյ հանդերձեալ էր տալ առ 'ի յիւրսն սահմանեալ մկրտութիւն։ Իսկ խորհուրդն նոր օրինացս նշանակէն և ասեն. այլ մկրտութիւն յայնմանութան ոչ տայր, և ոչ նշանակէր, եթէ ոչ ազգելով իւն փութալ 'ի մկրտութիւն քան։ Բայց յայսմանէ ոչ հեռանի, թէ ապա գլխովին անագուստ էր, և ոչ որբազան էր. քանզի և մկրտութիւն յայնմանութան էր կարգեալ յոյ առանձին խորհրդով, բան զայսմ ուսանիցէ 'ի նմանէ իսկ 'ի յայնմանէ յաւելնարս առ հրեայս։ * Եւ առաքեացն զիս մկրտել ջրով, նա ասաց ցիս, յորմ վերայ տեսանիցես զՀոգին, զի ինքանիցէ և հանդչիցի 'ի վերայ նորա, նա է որ մկրտէ հոգւովն սրբով։ (յայ. ա. 33.) ուր երկուքինչ ցուցանէ. մի՝ թէ ասէ առաքեաց զիս մկրտել. և երկրորդ՝ զտարբերութիւն իւրոյ մկրտուն 'ի մկրտութենէն Աստուծոյ։ Լաւ զայս մկրտութիւն կարգեաց ասէ նախ և սկզբնաւորաբ, զի սովիմբ կարէր յայտնի առնել և հրատարակել 'ի հրեաստան զԱստուծոյն

խոստացեալ. Ես ամեն. * Օ՛ի յայտնի լինիցի (Ի՞նչ) խրատելի, վասն որոյ ինքն ես ջրով մկրտել։ (յով. ա. 31) Երկրորդ՝ կարգեալ էր ի պատարագ մատուցել զմարդիկ առ մկրտութիւն, զոր Ի՞նչ հանդերձեալ էր սահմանել. որում պայծառ և հպարտ օրինակ էր մկրտութիւն յովհաննու։ Երրորդ՝ այս մկրտութիւն էր վկայութիւն ապաշխարութեան ի վերայ մեզաց, և հաստատոյ ի մեսիային իբր ընդ հոգս յայտնելի, կամ իբր նորոգ յայտնեալ։ Վասն որոյ ընդունել զայն մկրտութիւն ոչ էր ինչ անօգուտ հոգւոյ, այլ էր նոր զօրծութիւն կրօնի. որով ոչ ի փրկոյ փրկելոցն, այլ ի փրկոյ փրկողքն՝ արդարք ամենեքին արդարոյ հնարհաց ընդունելին. իսկ մեղաւորք՝ զոր հաղորդական ոչ առնելին առ ի զատանել ի զիմութիւն նորա զմեծագոյն օգտութիւն և զկատարեալ զգաստութիւն, և դեռևս զարբարար հնարհս։ Եւ թեպետ չէր խորհուրդ, այլ բան խիզ էր իբր խորհրդական ինչ։ Ել էր հարկաւոր առ փրկութիւն ոչ բան ինքեանս, և ոչ ի հրամանել. զի թեպետ զատանումն առաքել ոչ գյովհաննէս ի մկրտել, բայց ոչ զատանումն թէ ուստի հրամայեալ իցէ զի մկրտեսցի. բազմութիւն զայնմ ի մկրտութիւնն ոչ իբր առ հարկաւոր ինչ, այլ միայն իբր ի բարի ինչ և զատակաց. ոչ ի պատուիրանէ, այլ ի խրատուէ. որով շահիցին և հոգևորապէս։

Ի մկրտութիւն յայտնիկ լինեալ և խոստովանութիւն մեղաց յառաջ կամ զոգ ընդ մկրտութիւն. Ես ամեն. * Լոյս մկրտելին ի նմանել ի յորդանան, և խոստովան լինելին զմեղս իւրեանց։ (մատթ. գ. 6) Լոյս ձև բանի աւետարանչին նշանակել առաւել ինչ՝ քան զհանրական մեղայն, և բան զանէն ուրուք զանձնել, թէ այր մեղաւոր եմ ես ինձ. վասն որոյ և ասէ խնդալ յայտնապէս, թէ Հնմարտութիւն ամբառանն լինելին զմեղաց իւրեանց ի մատանուրն բան անուսկիսն։ Ի հին օրէնս յաճախին օրինաց հրամայեալ էր խոստովանութիւն զանազան մեղաց մատանուրապէս ի ժամն պատարագաց ինչ և զոհից. այլ ի մկրտութիւնն յովհաննու ոչ գոյր այնպիսի պատուէր. սակայն որք երթային ի մկրտութիւն, ամբառանն լինելին զմեղաց

իւրեանց 'ի նշան և 'ի վկայութիւն ներքին ապաշխարութեան։ Այլ ոչ առնուին արձակումն 'ի յովհաննէ. զի չէր տուեալ նմա այն իշխանութիւն. և խոստովանութիւնն այն ոչ էր խորհրդական. քայց արարեալ խնդարհրաւիրէր և անկեղծ սրտիւ, բազումս նպաստելոց ընդունել յայդ զկատարեալ զղջումն, և նոսին զՀոգն զուիրել մեզայ։ Այերդորդութիւնքս հաւատոյ, կրօնի, խնդարհրաւիրն, ոգոբմնութիւնն արարեալ 'ի մեզուս. ջերմ և անկեղծ սրտիւ՝ ոչ կորնչին անպատուղ. նա՝ որչափ որ առաւել մեզաւոր իցէ, այնչափ առաւել պարտ է նմա առնել զներդորդութիւնս առաքելոցս այսոցիկ, առ 'ի ընդունիլ յաղբիւրն այդ զկատարեալ դարձ, և զՀնամարիտ ապաշխարութիւն։

Ամենեքեան 'ի մկրտութիւն յովհաննու նիւթ և ձև բանի արարին. նիւթ հեռաւոր զնոսն զՋուրն. և մերձաւոր զմեզ յովհաննու զՋուրս 'ի գլուխս մկրտելոյն։ Բայց ձև զնոսն զբանն զոր համարին թէ իցէ աստուցեալ 'ի ընուլ անդ զՋուրս։ Օ այս թուի թէ առնուն 'ի բանէ անտի պօղոսի, որ 'ի գործս առաքելոց. (գլ. ԺԹ. ԿԸ.) * Յովհաննէս մկրտեաց մկրտութիւն ապաշխարութիւն ամենայն ժողովրդեան, և ասէ, զի որ գալոցն է յետ նորա, 'ի նա հաւատացէք, այսինքն է ՅԻՍՈՒՍ։ Իբրեւ թէ 'ի մկրտել իւրում ասացեալ իցէ։ * Այս մկրտեմ զքեզ յանուն ՅԻսուսի որ գալոցն է։ Այլ նախ՝ հաւատսի է թէ զայդ բան ոչ կարէր ասել 'ի վերայ ՅԻսուսի 'ի մկրտելն զնա. և ոչ 'ի վերայ այլոց, որք յետ յայտնելոյն ՅԻսուսի գային 'ի մկրտութիւն։ Այս առաւել չէ մարթի և ոչ իսկ ենթադրել թէ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն Սրբոյ իցէ մկրտեալ. քանզի զիարհրաւիրդ Սրբոյ երբորդուն նախ առաջին ինքն ՅԻՍՈՒՍՆ ուսոյց և հրամայեաց։ և ապա առաքեալքս նորա, և ոչ յովհաննու Այերդորդ՝ զի 'ի բովանդակ չորեսին աւետարանս չէր և ոչ մի նշանաբեց նշանակեալ վասն ձևոյ մկրտութիւնն յովհաննու. և չէր իսկ հարկաւոր. զի որպէս ասացաք՝ ոչ էր խորհրդ հնարաբեր, զի ձև բանին յայտնեսցէ զնշանակութիւն զործողութիւն։ այլ էր լոկ լուացումն 'ի նշան ներքին ապաշխարութեան։

ԳԼ. Գ.

ԱՂՈԹՔ ՅԻՍՈՒՍԻ.

* Յամենայն գոյ Յիսուս 'ի գալիլեայ 'ի յորդանան առ յովհաննէս մկրտել 'ի նմանէ եկն։ (մատթ. Գ. 13.)
* Եւ եղև յաւուրսն յայնոսիկ եկն Յիսուս 'ի Նազարեթ գալիլեացւոց. և մկրտեցաւ 'ի յովհաննէ 'ի յորդանան։ (մարկ. ա. 9.)
* Եւ ընդ Յիսուսի մկրտիլն, և կալ յաղօթս, բանալ երկնից և իջանել հոգւոյն սրբոյ եւ ... Եւ ինքն Յիսուս էր ամեաց իբրև երեսնից։ (ղուկ. Գ. 21. և 23).

Յորժամ խաւսն ընթանայր յամենայն կողմանց երկրին հրեաստանի բազմութիւն ժողովրդեան՝ գալ մկրտիլ 'ի յովհաննէ 'ի յորդանան գետ, եկն երևեցաւ և Յիսուս խաւսն ընդ ժողովրդեան։ Ցուցեալ պէտս լուացման սրբութիւնն սրբոյ, յորում իշխան աշխարհի այնոյ ունէր յիւրոցն գտանել. և եթէ կամիր յիս առնուլ զմինիս մեղաւորի՝ բարձեալ ունելով զմեղս մեր, առ 'ի սրբել զայն՝ չէին բաւական ամենայն ջուրք յորդանանաւ. զի այնպիսի էր կեղտն մեզաց, զոր միայն ածայնն արքայն խաւ հեղեալ 'ի խաչի կարող էր սրբել։ Սակայն և այնպէս բազում եղեն առաքինի պատուականք, որք ածին զՅիսուս 'ի յորդանան։ Եկեր առ ընկերն, զի այլք մի հրաժարեսցին մատչել, այլ առաւել յօժարութիւն մատեցին՝ զՏէտ երկնեալ օրինակի նորա։ Վանգի Յիսուսի թեպէտ առաքինութիւն մեղկան ոչ երևեցուցանէր զիւր զերազանցութիւնս, բայց խոհեմութիւն նոր, խնայաւութիւն, արդարութիւն, հեզութիւն և սրբութիւն այնպէս փայլէին 'ի նա, զի առ ամենեսին 'ի

յարգի էր յոյժ որպէս օրինակ հեռաւէլի յամենայն
ի գործս բարիս։ Զ՝ զնա ի միրուութիւն և կրօնն,
զի մի երևեսցի արհամարհել զայն միրուութիւն, որ
էր գործ մի աբ և յոյ կարգեալ ի յորդոր ժողովրդ-
ոցեան յապաշխարութի և յիծապատուն։ Զի զի կամէր
ինքն ասհմանել զայլ իմն միրուութի զերազոյն ոչ լոկ
ի ջուր, այլ ի ջուր և ի հոգի, որ հաստատիցէ լուա-
նալ զհոգի, բերելով արբարար ընդոյն, և արբելով
զմարդ, քանզանս այս խորհուրդ նոր միրուութիւն կա-
ր՝ի կարծիս տալ, թէ ինքն քա՝ի՝ի հաւատն ել միրբ-
ութիւն յաշխատու։ այլ հրապարակաւ գալով ի
յորդանան, և միրուելով ի յովհաննէ, ոչ եթող տե-
ղի այնպիսի կարծեաց։ Զ՝ատուատոգ թէ նորին գոր-
ծոցութիւն հաստատակաց զմիրուութիւն, զոր ինքն հան-
գերձեալ էր ասհմանել, և թողուլ յիրում եկե-
ղեցւոջ. որպէս ասէ, այնր օգուտիւնս։ * Զ՝ա ասուել
հաստատաւ միրուութիւն իւրոյ՝ յանձն էառ միրութիլ
ի յովհաննէ։ զի ծանիցէն ծառայք իւր, թէ քանի
յորդորեցիս ունին ընթանալ ի միրուութ նոն,
յոր-
ժամ ինքն հանձնցաւ առնուլ զմիրուութ ծառային։
(Ճառ։ Ե։ ի վերայ յոհ։) բան այսմ խօսի և այնր
ամբարտաւոս։ եղև մեզ ամենեցուն ասէ հանդարտան
խրատոյս ի լուացումն հոգւոյ՝ մատուցին իւր ի լուա-
ցարան ապաշխարութ։ ապա ոչ աբ ի մեղաւորաց
ունի խոյս տալ ի խնդրելոյ զլեզ մեղաց, յորժամ
Զ՝ա ինն ի բժշկութիւն մեղաւորաց։ Զ՝ա ևս եղոյց
Զ՝նա ծայրագոյն խանարհութիւն մատուցեալ ի ջուրսն,
աբ գայթն մերբաւորքն և մեղաւորքն ի միրուութ։

Զ՝ամենեսեան մինչև ցայսր ժամ ոչ երբէք տեսեալ
էր զՔ՝ն։ միայն յարգանդի մերն ծանեալ զներգոր-
ծութիւնս ներկայութ նորա, և խոյանաց առաջի
նորա։ բայց լեալ մին ի բեթղեհեմ, յերդիպատս,
ի նազարեթ։ իսկ միւսն ի քերբան, և ապա միշտ
յանապատի գերբեալ, ոչ երբէք տեսին զմիմեանս
Զ՝կարել ի պատկերս զՔ՝ն մանուկ ընդ մանկանն
յովհաննու ի միասին խանդաղատալ զմիմեանսիր,
և մի ի բազում ազատութենց ունոր ներկայս ձեռաց-
ցանել զիւրս իմն բանաստեղծականս՝ արտաքոյ խա-

կումՔ իրացն եղելոց։ Լրդ Թէպէտև չէր ասեմ
երբէք տեսեալ յաստուծոյ զԿՆ, բայց ընդ գալ նո-
քա՝ իսկ և իսկ ծանեալ զնա. զի երկոցին լոյս ետն
նոքա ընկալաւ, կոչեցեալ քան զԵղբայսն՝ որ առաւելն
յայլ ի Հանապել զնա։ Ա ասն որոյ հիացաւ ընդ այն
չափ խոնարհութիւն արարչին. և ոչ իշխէր ամբառ-
նալ ձեռս՝ արկանել զնոսա ի գլուխն ամենեցուն քս.
այլ բացէ ի բաց հրաժարէր յահագին պաշտամանէ,
անասի. տէր ասէ՝ ինձ արժան է ի քէն մկրտիլ, և
գա առիթս գան։ Լայլ ԿՆ հարկաւորեաց՝ միանգա-
մայն և քաջալերեաց զնա՝ ասելով, Թոյլ տուր առ-
այժմ, զի ես մկրտեցայց ի քէն, զի այսպէս վայել է
մեզ լնուլ զամենայն արդարութիւն։ Հնազանդե-
ցաւ յաստուծոյն, և Թոյլ ետ նմա մնանել ի գետ
անդր, ուր և մկրտեաց զնա։ Լսա խօսի ԿՆ զար-
գարութիւն, ոչ բան որում է մնանաւոր առաքինու-
թիւն, որ ասայ խրատաբանութեամբ զիւր իրաւունս. այլ
բան որում է կատարելութիւն գերազանց պատուա-
ձեալ ամենայն առաքինութեանց։ Ոչոյս գործ բազում
առաքինութիւնս եցոյց ԿՆ, բան առացելոցս՝ յորմ-
նակ մեզ. բայց և յանձին յաստուծոյ յայսմ եղեն
ոչ սակաւ առաքինութիւք. զոր օրինակ հաւատս կենդ-
զանի. յարգութիւն և պատիւ խորին. յեսին խոնարհ-
թիւն և չքութիւն անձին. հնազանդութիւն ամենապատրաստ. զի ծանեալ, հաւատաց, երկիր և
պագ իբրև ոչ. և իբրև ոչ հնազանդեցաւ մարդոյն՝
որ խառն ընդ մեզաւոր որպէս մեզաւոր խնդրելոյ
մկրտիլ ի նմանէ։

Իբրև մկրտեցաւ ԿՆ, ել վաղվաղակի ի ջրոյ
անտի. և անդ ի գետափն եկաց յաղօթս. և ահա
բացան ի վերայ նորա երկինք. և տեսաւ զՀոգին Աստ,
զի ինքնէր իբրև զաղաւնի, և գայր ի վերայ նորա.
և լսելի եղև ձայն յերկնից, որ ասէր, դա է որդի
իմ սիրելի, ընդ որ հաճեցայ։ Ամատեաւ ասէ,
* Ահա բացան նմա երկինք ||. Ամարկոս, * տեսաւ զե-
լեալ զերկինս ||. Ղ ուկաս անորոշ ասէ՝ * բանալ
երկնից ||։ Լուսինն ասելով նմա, ցուցանէ մեզ թէ,
ի ներքս նորա բացան. երկրորդն՝ թէ ԿՆ տեսաւ

բացեալ զերկինս. իսկ յերրորդէն իմմեռամն՝ թէ բացումն այն երկնից տեսաւ ոչ միայն ի Հոգի, այլ և ի յոյժմանէ, և յամենայն ժողովրդենէ, որք յոյժաժամ գասն անդ։ Ամենաւանդ զի վասնմանն սրանչելեացս էր յայտնել հրապարակաւ զԱՅն լինել որդի նց. ապա կարի հաւանելի է, թէ ամենեքեան որք կային անդ տեսին զայն նշան։ Օ նոյն հաստատեալ և գրեալն մատթէոսի, վասն երկնաբաց ձայնին, * Եւ ա է որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ։ որպէս բարբառ ուղղեալ առ ամենայն ժողովուրդն. զոր այսպէս բացատրել զուկաս. * զու ես որդի իմ սիրելի՝ ընդ քեզ հաճեցայ։ Եւ կաղենաս հասանել թէ ի նմին ժամանակի երկրին այս ձայնք եղեն լսելի. բստ որում ուղղեալ առ ԱՅն, և բստ որում ուղղեալ առ ժողովուրդն, և առ յոյժմանեսս ի վկայութիւն և ի յայտնութիւն ԱՅնի։

Ի՝ առ սոքին հեղինիսանի, որում զՏեառ երթան յայսմ մտանին սովորաբար մեկնիչք, այս բացումն երկնից եղև միայն բստ երևելոյ, և ոչ իրոք. զոր ցուցանեն նոքա՝ զի և յայլ բազում տեղիս յԱծային գիրս ասի բանալ և փակիլ երկնից սոյին նշանակութիւն. այսինքն երևիլ բացեալ, և երևիլ փակեալ։ Երկրորդ՝ զի առ վասնմանն երևելոյ ազատոց, և լսելի լինել ձայնի գալոց յերկնից՝ շատ էր բանալ երկնից բստ տեսութեան կամ բստ երևելոյ՝ առանց իրոք խոխտելոյ զկարգ բնութեանն բաժանմանէ զոյացութեան իւրեանց։

Զմանագէս և վասն ազատելոյն ասելոյ բուն ազատելն ասեն, և այլք՝ թէ ոչ էր Ճշմարիտ և իրաւական ազատելն. այլ երևելոյթ միայն և նմանութիւն ազատելոյ. զոր առնեն յեղանակի խոսիոյ ասելառաքելոյ. մատթէոս և մարկոս ասեն, * Իջանէր իբրև զաղաւնի։ իսկ զուկաս. * Իջանել հոգւոյն սրբոյ մարմնաւոր տեսլեամբ իբրև զաղաւնի։ Եւ ա ասել մատթէոսի * զայր ի վերայ նորա։ կամ բստ լաս. * ի նա։ և յոյժմանեսս * Հանդչել ի վերայ նորա։ կամ ի նա. ցուցանել թէ այն երևեալ ազաւնի իբրև ելջ ի վերայ ԱՅնի, այնուհետև ոչ ելս

տեսաւ։ Բ՝յս եղանակք խօսից լաւ եւ յարմարին ասեն՝ մարմնաձեւ երևումի, քան Հնմարիտ իրական մարմնոյ։ Բակ եթէ ոչ էր լոկ առաջօք տեսիլ, ասել ի թէ էր մարմին օդեղէն, ոչ եթէ միաւորեալ ընդ անձին Հոգւոյն Ս՝ոյ, այլ ձևացուցեալ՝ ի նմանել առ՝ի զգալի առնել զգալուստ իւր։ որպէս զի անտի սկսանիցի ժողովուրդն՝ ի միտ առնուլ թէ վարդապետութիւնքն նորա, զոր հանդերձեալ էր քարոզել նոցա, էին պատգամք ուծային Հոգւոյն։ Բ՝ւ մարմինն այն օդեղէն ցրուեցաւ, յարժամ կատարեցաւ տեսիլն։ որպէս լինի յերևմանս հրեշտակաց, ի կատարիլ պաշտաման՝ յոյլ ասկս՝ ի ձև մարմնոյ երևին։

Բակ օր մկրտութեանն քոյ՝ ի յոյժանեն՝ ըստ Հասարակ աւանդութեան եկեղեցւոյ Հանարի գիպեալ զկնի երեսաւն ամաց՝ ի նոյն աւուր գալստեան մեզաց յերկրպագութիւն։ ուստի և՝ ի միասին ուստերիցն անաւանդս յայտնուին։ յոր յարեն լատինք և զայանեն քոյ զփառս իւր սքանչելեաւք՝ ի կանս գալիլեացւոց։ Բրկար վիճի առատ կաղելոս, որպէս և այլք՝ ի մեկնչաց և յուծաբանից վասն սոցին իրաց։ որպէս և՝ ի վերայ ձայնիցս զուկայ։ * և ինքն յս էր ամաց իբրև երեսնից սկսեալ։ այլ չիք միաձայնութիւն՝ ի մէջ խմնասուն քննչաց։ Շ սա լեցին մեզ բանք մեծին օգոստինոսի, յասել նորա վասն առաջիկայ խնդրոյս։ * Մեկնեսուս ոմանք այսօր Հասարբին զնոսն՝ ի մոգուց երկրպագեալ, այլք զՁաքեն՝ ի գինի փոխեալ, իսկ ոմանք մկրտեալ զնա՝ ի յորդանանն Հաստատեն, ասկայն յամենեսին որդի նոյ պաշտի։ յամենեսին է Հնմարիտ ուստերմբութիւն։
(օգոստ։ Հատ։ լէ։ յաղագս Ժամանակի։)

ԳԼ. Գ.

Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս զանձն առաւ յանապատն. և թերի ի սատանայէ.

* Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատս ի Հոգւոյն փորձիլ ի սատանայէ, և պահեալ զքառասուն օրս և զքառասուն գիշերս։ (մատթ. դ. 1։)
* Եւ նոքա ժամանս հոգին Տեառն զնա յանապատս. և էր նա անդ զաւուրս քառասուն փորձեալ ի սատանայէ։ (մարկ. ա. 12։)
* Եւ Յիսուս լի հոգւով սրբով դարձաւ ի յորդանանէ, և վարեր Հոգւոյն յանապատս յաւուրս քառասուն փորձեալ ի սատանայէ։ (ղուկ. դ. 1։)

Զոր փրկիչն մեր որ բան ասաւ թեռան և էակից հօր և որ հոգւոյն, բան մարդկութեան եւ անդամն ի յղութենէ լի էր բարբաջին հոգւով սրբով. և նոքա հոգի այ էր ուղղիչ ամենայն գործոց նորա։ Այնչափ ի ժամանակ մկրտութեան ոչ վարեաց զնա ի գործ ինչ զերակատաւոր, որ առաջի աչխարհի զերաշխարհիկ իմն և նորատեսիլ երևեցցի, այլ հասարակաց կենաց տայր նմա քաղաքավարել ի վերս բան զմարդ։ Կատարելութեան գործոյն ոչ չափի առաջի այ ի զերազանցութենէ անտի գործոյն, այլ ի կատարելոյն նա վասն զկնան այ։ Կեանքն անասարական և առ աստաւս խիստ որպէս զյաջհանեանն ոչ էր Հանապարհ, որպէս կամիր ասէ տայր փառաւորիլ ի մարմնոյ իւրմէ սահմանելոյն ի վարդապետ և ի փրկիչ համարին ազգի մարդկան։ Այնն իբրև Յիսուս մինչև ցերեսունեարորդ ամ կենաց իւրոց եկաց հպատակ մեր իւրում, և յոսեփայ. խոնարհ ապատահարկու յամենայն առանձին գործս, հանեան, քաղցրակենցաղ և մարդա-

սէր առ ամենեսին։ և այնու ևս օրինակ ընդառնն կենաց, թէ զինչ պարտ է վարել զկնոջն ի տան։ Սակաւուց է տալ զանձն ի խոտակրան կենաց։ և սակաւագունից և կիրել զկենաց ի ձեռն գահնի զառն տանջանաց։ ապա պահեաց ասէն զօրինակ չարչարանաց և մահու իւրոյ։ Ահեղագոյն մեռանմէ մարդկի ինդրելն անդարձ կենաց, բնակել ի տան ի ընտանեաս իւրեանց, և կենակցիլ մեռելմարար։ ապա ևս ասէն իւրով օրինակաւ զերազանց ուսուցն յառաջին երեսուն տան կենաց իւրոց։ Ասիոյ հետև կամ եղեն բան կատաց հոր իւրոյ և որ հոգւոյն առանձնաւոր առ փորր մի յանապատ, և փարձիլ ի սատանայէ։ և այնպէս զառնալ և սկիզբն առնել քարոզելոյ զաւետարան իւր։

Այս չունիք պէտս պատրաստութեան առ ի լինել յաղթող ի պատերազմի, այլ կամիցաս ուսուցանել մեզ, թէ առ ի յաղթել փարանութեանց՝ պարտ է փորր մի յառանձնաւոր բերիլ՝ մեկուսանալով յորտաբին չփոթութեանց։ և որ խոկմամբ, և ջերմ աղօթիւք և պահօք պատրաստել զանձն յընդունելուն օգնութեան այ։ Զի անխորհուրդ, զի երբեմն ուխտաբանիւք ի խօսիլ զերկնից Հայր յանապատ, միւրան նշանակին՝ թէ առ այս վարեցաս ի հոգւոյն սրբի։ Թէպէտև քաջայայտ եղ՝ թէ ամենայն գործք Հայր ելին հոգւով սրբով։ Բայց թէ այսու կամեցաւ ուծ կրկին ուսուցն կարեւոր մեզ աւանդել։ Արի՝ թէ ի նոր և յանասոյոր խոտաւն կենաց չէ պարտ ձեռն արկել, առանց յայտնի և յատուկ շարժմանն հոգւոյն սրբի։ Պահիլ անտարագ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, թերևս լինիցի առանց սրանչելեաց ի յերեսն տկարս և հիւանդս, յորս ջերմաւթիւն սատմրաց տակաւ է, և հիւթք ջուսակարք բան զտրին առաւելեալ։ զի յայնպիսիս տկարութիւն սատմրաց, և առատութիւն հիւթոց կարէն լնուլ զպակասութիւն կերակրոց։ այլ քաջառաջ անձն, որոյ բարեչափ է խառնուած, ոչ կարէ զայնչափ աւուրս տակալ անառաջ առանց սրանչելեաց։ իսկ խառնուած մարմնոյ ոմն միոյ զոլով մարաւր և ամենայն

իրաք կատարեալ, ոչ կարէր առանց սրանցելեալ այնչափ երկար պահել։ Եթէ գիրն տայ մեզ խնդալ զխոտաութիւն և զերկարութիւն պահոց ։ Դէպ, զի ծանեալ ցուցք թէ ի պահս նորա եղեն գերմարդկային սրանչելիք. բայց միանգամայն նշանակէ թէ արար զայն ի յատուկ շարժութիւն հոգւոյն սիրոյ։ Իրկերորդ ուսումն զոր տայ մեզ այս է, թէ յորժամ շարժումն առ Նոր և անտարար խոտաութիւն կենդանի է ի մեզ ի հոգւոյն սիրոյ, բերիմք ի խնդրել զառանձնութիւն անապատի, և ոչ զցոյցս հրապարակի։ Մ՚ամենս և եղիա զօրութիւն սիրոյ, և ապա Դ՚ն ուժեղն իւրով զօրութիւն՝ պահեցին աւուրս քառասուն՝ այլ յանապատի, հեռի ի տեսութիւն մարդկան։ Ա՚յսպէս զանեբեւանն լինել խնդրել առաջնորդեալն ի հոգւոյն սիրոյ։

Կայր ասասնայ պաշարեալ ի վարանս անհնարինս վասն Դ՚նի, թէ արդեաք Ջնմարտապէս արդի իցէ՞ այ, կամ մեսիայն խոտասացեալ ի փրկութիւն աշխարհի։ Ի՚թէ մանր միտ եդեալ էր ամենայնի, և քաջ խելամուտ լեալ նեբրին խնդասից ուսանելոց, ունէր արդեաք ի միտ առնուլ զասացդ զեսութիւն. այլ ուշ այնպէս անօրինեաց, զի իրաց ոմանց մի ուշ գիցէ հին օձն խորամանկ, և ինչ ինչ անխմանալի զացոյն նոսա։ Ա՚ստգարեալուք ինչ զլիսոյին գերբնականքդ՝ յառաջ քան զկատարումն ամենեսին մ՚թին էին. և առաւել անխմանալի լինելին ասասնայի վասն հպարտութիւն նորա, որով անհնարին թուէր նոսա մարդ լինել այ, և առաւել այ մարդացելոյ յանձն առնուլ զնախատինս և զարշարանս, զոր գրին զնմանէ մարգարէք։ Լ՚ինս և մարգարէութիւք ինչ բացայայտ. այլ նոյն իսկ բացայայտութիւնն առաւել շփոթէր զմիտս նոցա։ Գ՚ուբ ի կարծիս էին, թէ ուժ յաւուր միում հանդերձեալ է երևել յարչարսի մարդկանց։ Ա՚յսպիսի յայտնութիւն բան ոմանց ի յետին ուժգարանից՝ եղև նոցս, մինչ յերկինս էին. ուր իսկ և իսկ մեզան, որով և աւելցան ի սանդարամետս. զի ոչ կամեցան խոնարհիլ այ մարդացելոյ. կամ՝ բան այլոց՝ զի կամէին թէ

զիւրեանցն առնուցու բնութիւն, և ոչ զմարդոյ, որ առաքին է յայժ քան զինքեանս։ Լիւ անասի սիրիցն կալաւ առանն զժոխային առեալութիւն նոցա ընդ զէմ ոչ մարդասիրելոյ, զի գիտէին՝ թէ եկեսցէ ժամանակ, յորում բռնադատեսցին տեսանել զնա յերկրի, և երկիր պագանել նմա։ Սատանայն այն է, զի մարգարէութիւն հօրեներդացն գանիցէին մեռ ցուցանելոյ զժամանակ գալստեան ՅԻՍՈՒՍԻ՝ բայց հպարտութիւն գիւաց ոչ ներելոյ նոցա հաւանիլ՝ թէ նա մեռանիցի։ Պարգարէութիւնն ասացեալ յայտ առնելոյ թէ մեռանիցի մեծամեծ արանդելիս զոծեսցէ. իսկ ՅԻՍ ցանեժամ չեւ էր զոծեալ ինչ մի այնպիսի։ Տեսանել տեսին զգանդելիս Ծնեղեան նոցա, և զգալուստս ասաք թագաւորաց յերկրպագութիւն նմա առաջնորդուիք նորաբանչ ասասելն։ այլ յետոյ յորժամ տեսին զնա փախչել յեգիպտաս, անհնարին համարելով՝ այ մարդացելոյ այնչափ նուաստանալ, այլա փոխեցաւ կարծիքն նոցա զնմանել։ Պարձեալ զբանդայր առաջին կարծիքն նոցա, յորժամ տեսին զնա մանուկ երկոտասանամեայ նստեալ ընդ վարդապետս, և լուան զՏիրաշալի վարդապետութիւն նորա. այլ զկնի տեսեալ զնա 'ի նուաստ արուեստաւորութիւնս հիւսան խնամարհեալ, վերստին յերկրայս անկան զնմանել։ Տեսին և զբանալ երկնից 'ի վերայ նորա, և լուան զձայն՝ եմ։ որդի այ է դա. բայց ոչ խնայեան՝ արդեօք զբնական եմ։ զարդեգրական որդւոյ իցէ բանն։ Տեսին այժմ և զերկար պատն նորա, և մեռելին տեսանել թէ անցանիցէ զքառասուն աւուրքս, առ որ հասին և մինչև և եղիա. այլ տեսանելով զի յետ քառասնեարդի աւուր քաղցեաւ, դարձեալ յիմարեցան 'ի խորհուրդս իւրեանց՝ համարել զնա որպէս զմինչև և զեղիա լոկ մարդ։

Հայապիսի յուզմանս հակառակ խորհրդոց ծրփեալ, հաստատեցին այնուհետև յամենայն փորձ ձեռն արկանել՝ առ 'ի ատելել զՔրիստիանն։ 'Լսին առաջին 'ի ձեռս առին զքաղց նորա իբրև քաջաղէպ առիթ՝ փորձ փորձելոյ, եթէ կարօղ ինչ իցէն՝

ձոկել զնա զէՀ 'ի թեՀեՀ ինչ մեզ. որում կամ
հաւանեալ, և այնու հաւատաւ լինելին թէ ոչ է ասե-
և կամ մերժելոյ զփոքանութիւնն, և յերդանակ մեր-
ժելոյն յաւուրսն առնուլ նշան ինն խմանալոյ, զոր
ցանկալին։ Վասն որոյ փոքանութիւն թէ ոչ կարեն փոքանել
զնա նեղբին չարժմամբ. զի ոչ զոյր 'ի նմա լուցեալ
ցանկութեան, և ոչ կիրք ակամայ. վասն որոյ հարկ
էր փոքանել 'ի վերայ արտաքին ինչ առարկայի։
Լ՝քդ 'ի դէպ հանդիպեցաւ զլաւն զիւաց սատանայ՝
որ և ասացեալ, մնացեալ առ նա 'ի կերպարանս մար-
դոյ իրրև այր բնակ, կամ անցաւոր յամամ անասուա-
ոն, և իրրա բան զիպաց ինն հանդիպեալ։ Զոր յա-
ւուր քառասնեքորդն. զանգի կայաւ խօսել ընդ նմ
և եցոյց զառաջինն կարեկցութեան ընդ քաղցն։ Զոր,
և իրր ցուելով զի յանապատն անդ ոչ գտանի ինչ
'ի մատեղ, 'ի վերայ էած ասելով, այլ քեզ՝ որ որ-
ոկեա որդի սիրելի ես այ, դիւրին է գործանն գտա-
նել. ապա եթէ այսպէս որդի ես այ, ասա զի քարինքս
այսարիկ հաց լինիցին, և հնազանդին քեզ։

Լ՝յս փոքանութիւն սատանայի թեսկեան հինն էգ
զրկոբստութիւն՝ ակսեալ 'ի նիւթ կերակրոյ, այլ
դիտէր տալ խնդրել կերակուր սրանչելեաց առանց
հարկի, ուր մարթ էր բնապէս գտանել՝ ելանելով
յանապատն 'ի շէնս. նմին իրի ոչ փոքաներ լարն՝
եղծանել զպարտ պատուիրեալս, և ոչ առաջադրեր
նմա կերակուր արգելեալ յօրինաց, այլ սրանչելեաց
'ի խնդիր լինել հացի։ Յորում զլխաւոր նպատակ
սատանայի այն էր. տեսանել թէ գոտնիցէ՞ 'ի Յ՝
տեղի մտաքանութեան ինչ՝ ցուցանելով զանձն կա-
րօղ լինել զբարն 'ի հաց փոխել. զոր թէ առնէր,
խմանայր անտի եթէ Ճշմարիտ որդի այ է։ վասն զի
այսպիսի սրանչելիք ոչ գործին յայլ 'ի շնորհս մտա-
քան մարդոյ. իսկ եթէ ասէր, թէ չեմ կարող, կի՞
թէ կարող եմ՝ այլ ոչ կամիմ, յառաջնոյն խմա-
նայր, թէ ոչ է որդի այ. զի ոչ ոչ կարէ սուտ ա-
սել. և յերկրորդն հաւանեցուցանէր թէ է մարդ
սովական. վասն զի ոչի ինն մտաքանութեան նշան-
քեր 'ի նմա։ Լ՝սա մատեալ ասաց սատանայ.

* Լսա զի քարինքս այսորիկ հայց լինիցին ։ Իսկ լսա զուկասս. * Լսա քարիզ այդմիկ զի հայց լիցի ։ Լիբայեցիք յաճախ ի կիր ածին զմիաւորս կանն և զբաղմաւորականն փոխանակ միականց. և մասամբ երկոցուն ի կարգի արանցիւրաց զոր ինդրեր սատանայ՝ նոցին է։ Սակայն հաւանելի երևի թէ նախ սատանայ. * Լսա զի քարինքս այսորիկ ։ և նոքա հաւատան առ առաւել պատարաւակերոց զիրարձութիւնն՝ ցուցեալ մատամբ, կամ լսա ամենց՝ առեալ ի ձեռին քար մի՝ ասել. սատ քարիզ այդմիկ, զի փոխեսցի ի հայ։ Լայլ խորհանիսկ թշնամին վերիպեցուցանիցին ակնկալութիւն իւրեանց. քանզի Հոգ ոչ զկարող լինիցի, և ոչ զչկամիցն իւր յայտնեսցէ, այլ ածէցէն զրով յանիծ արար զնա, ասելով. * Կրբեալ է՝ եթէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ ոչ ։ (Ղ. օրին. Ը. 3.)

Օ այս պատասխանի լուեալ սատանայի, ոչ եւ յուսացաւ սակայն Հանապարհաւ շահել ինչ. ուստի փոխեաց զիրհարդ իւր, և հրամիրեաց զՀոգ երթալ ընդ նմա յԵրեմ՝ ի սուրհանդն. զիրհաւ ոչ ոք գոյ, եր գնաց ընդ նմա, և եկաց ի վերայ աշտարակի սուրհանդն. զի և անդ դարձեալ խայտառակեսցէ զնա։ Սանոր կարծէին՝ թէ լսա թագաւորացն Հոգի՝ սատանայ բարձեալ տարաւ զնա յերուսաղէմ, և եհան կացոյց ի վերայ աշտարակին. և զայս կարծիս իւրեանց հիմնէին ի բանն մատթէոսի. զոր լսանին այսպէս ընթեռնու. * Լսա տարաւ զնա սատանայ ի քաղաքն սրբ, և կացոյց զնա ի վերայ աշտարակի սուրհանդն ։ Սակայն բառքդ՝ [illegible], և [illegible], անխտիր յայտ առնէին զի միասին երթան սրբ և է օրինակաւ. որպէս և լուսինն մեկին ընթեռնու սա զուկայ. * Լսա զնա յերուսաղէմ ։ յայտ է՝ թէ ոչ ի վերայ ուսոց բառնալով, այլ ընդ իւր սանելով իբրև ուղեկից՝ մինչև զալ երկոցունց, և կալ ի վերայ աշտարակին։ Ընդ սոսոց յիսանրեանն սատանայ ցՀոգ զանհնեթեթ զայն բան. եթէ, որդի եւ այ, սիրի զբեզ սատի ի վայր. և զի յաւաղնաւմ փոքանուն եւ նմա ՀՈՒ պատասխանի բանիւ որ գրոց,

այժմ և սատանայ գրով հնարի որսալ գնա. * Օ՛ի գրեալ է ասէ, թէ հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, և ՝ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ. զի մի երբեք հարցես զքարի զոտն քո։ Օ՝ այս բան որ է ՝ի յիմնամերձդ սաղմոսէ, խարդախեալ սատանայ ՝ի բառս և յիմաստս։ Որ բառիցն՝ լռեաց զայն, որ հակառակ էր իւրոց մտաց. զի բառն բան սաղմոսին այս է. * Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, պահել զքեզ յամ Ճանապարհս քո. ՝ի բազուկս իւրանց ընկալցին զքեզ։ ուր ՝ի՞ զգոյութիւն հրեշտակաց խոստանայ այնմ, որ խոհեմութիւն գնայ զՃանապարհս իւր. և ոչ այնմ որ յանդգնութիւն արկանէ զանձն ՝ի յայտնի վտանգ. վասն որոյ սատանայ լռեաց զայս հատուած, * Յամենայն Ճանապարհս քո։ Իսկ Ճշմարիտ իմաստ բովանդակ բանին այս է. յորժամ որ գործէ իրր այր արդար, օգնեսցէ նմա ՝ի՞ն. և հրեշտակք բարձցեն զնա ՝ի վերայ ձեռաց. այսինքն սիրելով գնա, և պաշտպանելով նմա. իսկ սատանայ այնպէս բերէ, որպէս թէ ասէ, այր արդար յինչ և ձեռնարկեսցէ՝ եթէ խոհեմութիւն, և եթէ անխոհեմութիւն, ՝ի՞ն միշտ յաջողէ նմա։ Զ՝ է կարծէլն՝ թէ սատանայ ակն ունէր հաւանեցուցանել զՀՆ՝ արկանել զանձն ՝ի վայր առ ՝ի ցոյց կարողութեան իւրոյ, այլ զի յուսայր, թէ գտնէ այս անգամ ՝ի պատասխանւոյն կարիցէ որոշ ինչ խմնալ։ Օ՛ի թէ ոչ էր որդի ՝ի՞ն, առաջարկութիւնն այն Ճուէր փառաւոր և լի յարգանօք, ոչ թէ այնչափ մեծ ամն համարել զՀՆ՝, զի հրեշտակք բառնայցեն գնա։ Իսկ եթէ որդի ՝ի՞ էր, առաջարկութիւն այն լինէր յանարգանս նոցա. որպէս թէ որդին ՝ի՞ կարօտ իցէ պաշտպանութեան հրեշտակաց. ուստի և կարծէր թէ ՀՆ՝ խոժոռ դիմաք ատցէ, պատասխանի այսպիսի։ Օ՛ինչ պիտուն ինձ հրեշտակք. եթէ կամիցիմ իջանել ընդ օդս, միթէ չունիցիմ ես զայն կարողութիւն։ Իսկ իմաստութեան հօր ՀՆ՝ իսկ և իսկ պատպանձեցոյց զարն այլով անակնկալ վկայութիւն ՝ի՞ն գրոյն. ասէ, * Կոչեալ է թէ ոչ փորձեսցես զՏէր ՝ի՞ն քո։

Լայպէս խոյտառակեալ ատամանցի յերկոսին փոքանն իւր, և անց յայլ փոքր յետին. զոր յուսայր թէ Աստ չկարիցէ վանել առանց յայտնի առնելոյ զանձն։ Հրաւիրեաց և ած զնա 'ի գլուխս բարձր լերին միոյ, և անտի եցոյց նմա 'ի վայրկեան ժամանակի, այսինքն խակին մեծաւ արագութիւն՝ զամենայն թագաւորութիւնս աշխարհի. որպէս թէ մեռանիս ցուցանելով, և ասելով. ահա ասա է թագաւորութիւն ասորւոց, անդ քաղդէացւոց, անդ հայոց, անդ պարսից, անդ արաբացւոց, անդ եգիպտացւոց, անդ հռոմայեցւոց. և ահա զայս ամենայն թագաւորութիւնս քեզ տաց, եթէ դու անկեալ առաջի իմ երկիրպագանիցես ինձ։ Սատանայ լի զոլով հպարտութիւն, նա՝ զլեռանին հպարտութիւն, չէր կարող այսպիսի առաջարկութիւն լսել յումեքէ առանց 'ի յետին կատաղութիւն բորբոքելոյ. ուստի և յիրմէ չափելով, անհնարին համարէր թէ ած մարգացեալ՝ կարիցէ լսել զայնպէս նախատական առաջարկութիւն առանց զայրանալոյ։ Լայլ կարծէր՝ թէ ուրիցէ ասել ցինքն. զինչ ասես ով դու, եւ քո՞ առաջի անկանիցիմ ած մարգացեալ, եւ Աշմարիա որդիս այ քեզ երկիրպագանիցեմ անարգ և ապատամբ ծառայիդ։ Լայսպիսի պատասխանուց մեռցը ատամանայ. որով և հասանէր զիտման իւրում. զի զիտաւն նոր ոչ էր, թէ Աստ նմա երկիրպագանիցէ, այլ թէ ստիպեացի յայտնել զանձն. բայց և յայտ խոյտառակեցաւ։ Օր Աստ թերևս մինչև ցայն վայր ձևանայր իբրև ոչ ճանաչել զնա՝ թէ ով իցէ. այլ այս անզամ նա ինքն ատամանայ՝ այնպիսի երկրպագութիւն պահանջելով, ինքնին յայտնեաց զանձն. վասն որոյ և Աստ անարգաբար մերժեաց զնա յերեսաց իւրոյ՝ ասելով. * Այրթ յետս իմ սատանայ. զի գրեալ է ած այ քում երկիրպագանիցես, և զնա միայն պաշտեսցես։ Զնաց կորեաւ ատամանայ առանց ատամանցոյ ծանօթութիւն ինչ, զոր այնչափ խորամանկ հնարիւք խնդրէր։

Զուկաս այլով կարգաւ պատմէ զայսոսիկ փոքանութիւնս քան զմատթէոս. զի նա՝ որպէս զոյ յա-

Նախ տեսանել առ աւետարանիչս, պատմել զկենին առանց պարշելոյ զկարգ ժամանակաց. պատմել զերիս փոքրուիթիս յաջորդաբար, այլ ոչ ասել թէ մին եղև զկնի միւսոյն. իսկ մնացեալս 'ի պատմել զփոքրուիթիւնս, նշանակել և զկարգ յաջորդութեանն։ Զնա առաջարկուն փոխելոյ զբար 'ի հաց՝ ասէ. * Զայն ժամ առեալ ածէ զնա ||. և պատմել զառաջարկութիւնն արկանելոյ զանձն յաշտարակին. ապա ասէ * Կարձեալ առնու զնա ||. և պատմել զառաջարկութիւն երկրպագութեան 'ի լերին. ուր Զե 'ի բաց վարել, զաստանայ՝ ասելով. * Լ՚երթ յետս իմ սատանայ. ապա երթայ զնա ||. զանկան ոչ ասէ. ապ. այլ * Կատարեալ զամենայն փոքրուիթիւն ստանալոյ, 'ի բաց երկայ 'ի նմանէ ||. ուր յաւելու * առ ժամանակ մի ||. ոչ իբրև թէ զկնի ժամանակի իմիր ստացեալ վերստին մարմնաւոր տեսլեամբ երևեալ Զնոմ զարձեալ փոքրեալ իցէ զնա, այլ զի 'ի պակաց աւուրեանս ոչ գագարեր 'ի ձեռն այլոց փոքրել զնա. որպէս բանիւ աշխի պատրոսի, յորժամ ազաչեր զՅՀ չասալ զանձն 'ի չարչարանս. և առաւել 'ի ձեռն յուդայի՝ յորժամ մատնեաց զնա. 'ի ձեռն հրեից բազում անգամ, և առաւելապէս՝ յորժամ ասէին, եթէ արդի ես դու, ելջ 'ի խաչէ։ Լ՚ուրդ իբրև անցեալս ստացաւ ստանալոյ, նոյնժամանցս երևեցաւ բազմանալ հրեշտակաց սրդ 'ի լերին անդ պատրաստելոյն Զնոմ տեղան, և կայրն 'ի ապատաւ նոցա, պաշտելով զնոր և զնոգաւոր իւրեանց։

ԳԼ. Ե.

* Լա՛ւ գործաւ Քո զօրութիւն հոգւոյն ի գալիւսս. և եկ համբաւ զմեռելոցն ընդ ամենայն կողմանս գաւառութեան։ (զուկ. է. 14. մինչև ի թիւն 23։)
* Ի վաղիւ անդր տեսանել զՔո զի գայր առ նոս. և ասէ. արտասուիկ զաւանն ոչ, որ բանեալ զմեզս աշխարհի։ (Յովհ. ԺԱ. 29. մինչև ի վերջ գլխոյն։)

Իբրև կատարեաց Քո զփոքանութիւնս, եկն ներգործութիւնքդ շարժութիւնք հոգւոյն սկզբ յանառպատակ անտի, և գործաւ ի բնիկ գաւառս իւր ի գալիւսս. և նոյնչեռայն եկ համբաւ զմեռելոցն ընդ ամենայն կողմանս գաւառութիւն։ Լացումն երկնից, եկք ազատեցին, ձայնս եկեալ յերկնից ի յորդանան, այսուամբ վկայութիւնքդ առեալք յոյզ զմեռելոցն, և մեծամեծ բանք զոր խօսեալք յոյհանեայ մկրտչէ վասն նորա, եւ հաչակեալ ընդ ամ կողմանս յայտնապէս. և ամենեքեան զմեռեալսն խօսէին։ Լուրս բանաւորն ոչ երևեցան Քո. և ոչ գիտէր ոք թէ ուր իցէ, այլ ընդ գնալ զաւառն ի գալիւսս, ուր ամենեքին մեռելքն եմուտ, առ ժամանակս տեսեցան համբաւ նորա։ Լա՛ւ ինքն Քո չքնէր անդ ի գալիւսս, անցանելով քաղաքն ի քաղաք, և աստուծանէր ընդ ամենայն տեղիս. և յաւուր շարաթուց մնանէր ի ժողովարանաց, և մեկնէր նոցա զնուծայնն գիրս. և յամենայն տեղիս ըստ նորա մեծաւ զարմացմամբ, և բերանալիր գովէր. ասէր և երբ փառաւորեալ յամենեցուն. գնաց և ի նազարէթ, առ ի չգրեալ ի վարդապետութենէ իւրմէ զքաղաքն զայն ուր մեռեալ էր ի մանկութենէ։ Լամեաւ և անդ բան սովորութիւն իւրաւոր յաւուր շաբաթու ի ժողովարանաց նոցա. և հաւատն նոցա զգիրս հասցեալս մարգարէիս. զոր առեալ ի ձեռս՝ յարեաւ ընթեռնուլ. և իբրև երաց, եգիտ զայն տեղի, յորում գրեալն էր։ * Հոգի տէր ի վերայ իմ. վասն

որոյ և օձ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս. բժշկել զբեկեալս սրտիւք. քարոզել գերեալց զԹողութիւն, և կուրաց տեսանել. արձակել զվիրաւորս ի Թողութիւն. քարոզել զտարեկան ՏԵՐՆ ընդունելի ։ (Եսայ. կա. 1։) Իբրև ընթերցաւ զայս Հաստատած, խփեալ զգիրքն՝ եհան ցպաշտօնեայսն, և նստաւ. և մինչ ամենեցուն ի նա ելին յաւետեալ սնոտուկ փափաքմամբ լսելոյ զբան նորա, մեկնեաց զբան մարգարէութեան, ցուցանելով թէ աբդելն Հաստատեալ է յականջս նոցա կատարումն այնր մարգարէութեան. որով յայտնապէս եցոյց, թէ ինքն է նախատգուշակեալն ի բանի անդ մարգարէին։ Իսկ զի ծանիցին որք եղեն ի միտութիւն նորա, ասեն՝ թէ զի Հստակեալ է յականջս նոցա կատարումն այնր մարգարէութեան. որով յայտնապէս եցոյց, թէ ինքն է նախատգուշակեալն ի բանի անդ մարգարէին։ Իսկ զի ծանիցին որք եղեն ի միտութիւն նորա, ասեն՝ թէ Հստակեալ է յականջս նոցա կատարումն այնր մարգարէութեան։ Զի զիտելին թէ չէր նորա ասելոյ. ոչ սա է ասելին որդին յովսեփայ. իբրև ասել, ուստի է սոյն, զոր մեր ի մանկութիւն Հանապազեմք գործել ընդ Հօր իւրոյ զգործ Հիւսան, այժմ այսպէսի խնամատարութիւն փայլել, և այսպիսի պերճաբանութիւն խօսել։ Որով ընծայեցին վարդապետութեան ՅՈՒՆ զայն ինչ, զոր ինքն ՅՈՒ ոչ ինդրեր, այսինքն զգովութիւն. և ոչ ետուն զայն, զոր ՅՈՒ ինդրեր ի նոցանէ, այսինքն զպատգ Հաւատոյ։ Այլ և այնպէս՝ գանեա յայս նաւագ գովեցին զվարդապետն, թէպէտ ինչ ոչ շահեցան ի վարդապետութենէ նորա։ Եւ այսպէս արարին այլ անգամ, բան որում տեսցուք զկնի, այնչափ արհամարհեալ զվարդապետութիւն, մինչև ինդրել կորուսանել և զվարդապետն։

Սակայն ի մեկնեալ զայս գալուստ ՅՈՒՆ ի գաղիլեա՝ զարմի ասա խօսի զուկաս, խառնեն ընդ այնմ զարմի այլ աւետարանիչք խօսին. այլ ասա ունիմք նշան մի որ բաւական է զանազանել զնոս. և է, զի այս անգամ նազարէթացիք գալոյն թէ լուան զբանս ՅՈՒՆ. * Իսկ ամենեքին զարմանային ընդ բանս շնորհացն որ ելանէին ի բերանոյ նմին։ Սակ այլ անգամ ընդ Հակառակն՝ այնչափ բարկութեամբ լուան նոքա,

մինչև խնդրել զահավէժ առնել զնա ի գլխոյ լերին յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր։ Ալ ուկաս կանխել պատմել առա և զայս ժողովութիւն նոցա, առ ի միացուցանել զամենայն որ ինչ պատահեաց Յիսուսի ի նազարէթ։ Այլ ի նախընթացայ բանից գրոյն երևի զանազանութիւնն. և չերևի ի միջի պատմառ բառա կան՝ առ ի վայրկենի անցանել նոցա յայնչափ գովութիւն յայնչափ մոլեգին կատաղութիւն։

Ալ զաւառն գալիլեայ գնաց Յիսուս ի բեթսայդա գեղ փոքրիկ յայնկոյս յորդանանու, ուր կայր տաւարն կարապետ նոր՝ մկրտել զան ինքն եկեալսն ի ջուրսն յայնտանիկ։ Այլ ուրբ յառաջ եկեալ էին առ յովհաննէս պատգամաւորքն առաքեալք յերուսաղէմ հարցանել վասն մկրտութեան նորա. զոր մեք կանխեցաք պատմել վերագոյնդ։ Լակ Յիսուս եհան անդր ի յաջորդ աւուրս. զոր տեսեալ յովհաննու՝ զի գայր առնա, դարձեալ առ նոսա, զոր կային անդ։ և մատամբ ցուցանելով ասէ՝ ահաւասիկ գառն ոչ որ բառնայ զմեղս աշխարհի։ Սա է նա, վասն որոյ այլ անգամ ասացի, թէ զմեր իմ գալոց է այր, որ յառաջ իսկ էր քան զիս. (իսկ յառաջ, ոչ միայն նախայաւիտեան ուծութիւն, այլև անդամեմատ նախապատուութիւն քան մարդկութիւնն.) ես եկի յաշխարհս վասն նորա, և ի հնարս նորա։ Եւ երբեք տեսեալ էր իմ զնա, և ոչ ճանաչէի զնա երևոյթ. այլ որ առաքեացն զիս ջրով մկրտել, նա ասաց ցիս, յորս վերայ տեսանիցես զՀոգի՝ զի իջանիցէ և հանգչիցի ի վերայ նորա, նա է որ մկրտէ Հոգւովն սրբով։ Եւ ես արդեամբք տեսեալ զայս նշան ասի յայտնի, զի Հոգին ոչ էջ իրրև զաղաւնի, և հանգեալ ի վերայ յսի, պարզ անելիբայ վկայել, և վկայեցի՝ եթէ սա է որդին ոչ։ Յաջ հանեալս կոչէ զՅիսուս ոչ։ վասն զի ասին այլս բանուութիւն բազում անգամ յիշատակեցաւ ի մարգարէից, ի ցուցանել զՏեգուութիւն նորա, և ի նշանակել թէ նա էր Ծնմարիտ ազգակիցն՝ զոր էառ ոճ ի քառութիւն մեզոյ աշխարհի. որ և հանդերձեալ էր մատնու խաչի մահուիլ պատարագ ոչ՝ ի հաշտեցուցանել զՏայրն ընդ արարածս. այս է ասելն, * Ուր բառ-

նայ զմեզս աշխարհի։ Որով երկրորդկ միանգամայն զայն, զոր բազում անգամ ասաց, թէ ինքն յաշխարհէս միրտ, լոկ ջրով, որ չէ բաւական լուանալ զաղտս հոգւոյ. այլ որ զմինի նորա եկեսցէ ի մտաց, զոլով Հնարիւթ որդի ոչ՝ ոճ և մարդ կոտաբեալ, տիրապետս ունի իշխանութեամբ թագուցեալ զմեզս։

Ի միւս եւս վաղուն վերատին եռեւս յաշխարհեալս զՀն՝ զի զշնայր, և գարձիլ առ երկու աշակերտսն՝ զոր կային առ նովաս, ասէ և ցնա, ահաւասիկ Ի՞նչ գաւառ ոչ. և ասայց նոցա, թէ ամ և որպիսի որ և այլն զոր տեսանիցին ոչ զմի ի հասարակաց մարդկանէ։ Լրկու այն աշակերտքն ասեալք ի յաշխարհէ՝ գնացին մերձենալ առ Հն. որոյ գարձեալ և տեսեալ զնա, զի երթային զՀն նոցա, եհարց զնոսա բազում քաղցրութիւն, թէ զինչ խնդրէք. ոչ որպէս թէ ի զիտել զայն, զոր յառաջագոյն զիտէր որառ զնան, այլ ի ասել նոցն հանդարտակութեամբ մերձենալոյ առ ինքն, և մտանելոյ ի խառս ընդ նոսա. զի զասն նոցն ելին յայն տեղի. զասն նոցա զկայ էառ ի զշնայոյ. զասն նոցա շարժեաց զլեզու իւրաքանչիւր կարապետութիւն, և եւ ազգեցութեամբ բանից նորա. շարժելով և զնա ի ներբուստ ի ձեռն նախատաժամանն հնարէոյ՝ որում հաւատարիմ զասն։ Լայլ զի անցագոն էր ժամն, խորհեցան չտալ նոսա նեղութիւն՝ ի կամին յաշխատամ հարցանել զնա և ուսանել աշակերտաբար, զասն ոչ նորիկ առ ժամն զանգին ելեալ բնակութեամբ նորա ցանկանալով զիտել՝ ասացին, * ուրբի՞ ոչ են օթեվանք քո։ որպէս զի յայլում պատահեցայն ժամանս կարիցեն լսել զվարդապետութիւնն։ Լայլ մարդասէրն Հն քաղցր գիմաբ հայեցեալ ի նոսա՝ եւ պատասխանի. * Լեկայք և տեսանք։ և ասէ զնոսա զայն յօթեվանս իւր։ և առ իւր կացաւ զնոսա զայն օր։ Լուսանումբ յայն միտս էն, թէ նաև զգիշերն զայն անոր առ նոսա կացին։ զի բառս օր անխտիր նշանակէ զբոլոր աւուրութեամբ քան և չորից ժամուց՝ բաժանեալ ի ախ և ի գիշեր, զոր և հաստատեալ թագուցուցեալ մեր՝ յասելն, ոՀ։ Լակայն թէև ոչ այլոց իմանալի ոչ զնացուցած առնչիւնն եւեթ այնոր առաջ,

կային զեռեռս ժամը իրրև երկու մինչև ցմուռս արեգական. որովհետև հրեայք զժամանակն բաժանէին 'ի ծագելոյ և 'ի մտանելոյ արեգական 'ի ժամս երկուասան. և 'ի հոմանագ ժամս 'ի մտից արեգական մինչև ցծագումն հորա. ընդ ամենայն 'ի քառասուն չորս ժամս անհաւասարս բան յաւէտ և հուազ երկարութեամբ և կարճութեամբ տուն ջնջեան և գիշերոյ։ Այս է ասել կայինոս, թէ ոչ վրիպիմ, ժամանակն զոր նշանակէ առնտարանին վասն կալոյ երկուց աշակերտացն յովհաննու առ Հիսուս. յասելն, * Ուր առնուցանս (իբ այլոց, մեռցին) այն օր. զի ժամ էր իրրև տասն երորդ ||. զի յանցանել ասէ այնց ժամուց, և 'ի մտանել արեգական՝ ոչ ևս էր մի օր. այլ յաջորդ օր։ Այլոց չէ ինչ, զի թէև վարդապետաթիւնն հաստատ լեալ իցէ, այլ գերազանցութեամբ վարդապետին էլոյց զպակասութիւն ժամանակին. և երկարին հորա բացումն շահեցան. յորոց մին էր ասդրիւս, որ յետոյ կարգեցաւ 'ի դաս առաքելական. իսկ զանուն միւսոյն լուէ որ գիրն. յորմէ երևի թէ չէր նա 'ի դասէ առաքելոց, այլ այլոց աշակերտաց։

Իրրև ելին հորա 'ի Հիսուսէ, եղիտ անդրիւս հոսի զեզբայր իւր զպետրոս, որոյ բուն անունն Սիմոն կոչէր, և անդստպաղ զմեծ բարութիւն որում հանդիպեցան՝ փութացաւ հաղորդել նմա ցնծութեամբ՝ ասելով, գտաք զմեսիա։ Հայտ է թէ յաւել և զայն զոր խօսեցաւ զնմանէ վարդապետ իւրեանց յովհաննէս մկրտիչ, և զոր լուան յայնժամ 'ի Հիսուսէ. և թէ քանի մարգարէութեամբ և գիծով ընկալաւ տէրն զնոսա։ Հանեցաւ և սիմոն ջերմ սիրով և փութով սեսանել զՀիս. վասն որոյ առեալ ած զնա անդրեան. որ իրրև մերձեցաւ, հայեցեալ 'ի նա Հիսուս՝ ասէ ցնա, դու ես սիմոն որդի յովհաննու, այսուհետև կոչեսցիս կեփաս. որ թարգմանի յերբայական 'ի յոյն լեզու՝ պետրոս. այսինքն է վէմ. զորոյ զիտրդեն յետ ժամանակաց յայտնի արար ինչպէս ոչն՝ կացուցանելով զպետրոս վէմ հաստատուն բովանդակ շինուածոյ նորա եկեղեցւոյ իւրոյ։

Յետ ընդունելոյ Հիսուսի զպետրոս՝ կամեցաւ 'ի վա-

զիւ անդր միւսանգամ եմանել 'ի գալիլեա. ուր զիտել արժան է, զի կրկին գալիլեա նշանակի 'ի գիրս. մին՝ կոչէր վերին, զի գիրք երկրին բարձրագոյն էր, անուանեալ գալիլեա հեթանոսաց՝ ըստ որում հեթանոսք առաւել եին անդ քան հրեայք. ուր և կային քաղաքք յոլովք, յորոց տասնեքին այն էին, զորս սաղմոսն էառ քիրամայ արքային տիւրոսի՝ 'ի սահմանակցութեան երկրին տիւրոսի։ Լ՚այս գալիլեա վերին 'ի ժամանակս քրիստոսի ոչ էաւ էր մնան թագաւորութեան հրեայսանէն. ուստի և չէր ըստ իշխանութիւն հերովդէի լաբրոր գտանէսի։ Միւսն կոչէր ստորին գալիլեա. զի գիրք նորա խնամարհագոյն էր. և ձգէր մինչև ցՄկիսթաղիա առ եզերքն ծովակին, որ յանուն երկրին կոչէր ծով գալիլեայ. և յարևմտից երեթայք 'ի կարմելայ և հասանէր ցծովն միջերկրական. երկու ցեղք էին 'ի նմա. այսինքն ցեղն խաբարայ, և ցեղն զաբուղանի։ Լ՚զգ բան աւետարանին յայտնի վայրի է վասն այսր ստորին գալիլեայ։ Լ՚ս եղև յառաջ քան զՏառանել յիսի անդր՝ գտանել զփիլիպոս, որ էր ազգ եղև մի յերկուսասան առաքելոց, ծնողեամբ 'ի բեթսայիդայ գալիլեացւոցս, 'ի քաղաքէ անդրէանց և զնորան։

Ա՚ն եղև դիպուած գտանել զնա Յիսի, այլ որոշանէ կանոնս նորա, կոչել զնա զՏեր իւր և ասել, * Լ՚ի զինի խմ։ Ասէր որոնք ընկալաւ փիլիպոս զՏառաէլ փիլիպն, և աշակերտացաւ նմա. մինչև գտանել զնա Լեմեռամ և զարաբեկամ իւր զնահանայել, և ասել նմա աւետարանի՝ ասելով, գտաք զՅն զորդի յոսեփայ 'ի նազարեթեայ. զորմէ մարգարէացաւ մովսէս և այլ մարգարէք։ Ա՚ն կարէր նահանայել Տաւռանեթի ընծայել, թէ այնպիսի մեծի բարեաց մարդի իցէ ծագել 'ի նազարեթեայ. նա՝ զի գիտակ իսկ էր թէ մեսիան 'ի բեթղեհեմի գալոց էր. զոր փիլիպոս ոչ յիշեաց։ Լ՚այլ կամեցեալ փիլիպոսի հաստատաւ Նանայարդան հաւանեցուցանել զնա, ասէ նա. * Լ՚ի և ասա։ Եկն նահանայել, և չէ հաւատալ բարձնեցաւ յանդիման յսի։ Զոր զի Յն զարանելի մարդ գտանիցէ ընկալաւ զնա. ոչ մնաց զի նահանա խասա

ցի. այլ ինքն Յա՛ի տեսանելն զմերձենալ նմի, կանխեաց սակայն վա՛ղագոյն։ * Լսեա՛ արդարեւ խրատելոյի, յորմէ նեղագոյնքն ոչ գոյ։ Օ արմատաւորեալ ամենայնի, զի կարծեալ զանձն զլիովին անծանօթ Յոի, վասն որոյ հարցանելոյ, ուստի՞ ճանաչես զիս։ Լա՛ այս եւս Յա՛ պատասխանի, թէ յառաջ քան զկոչել փիլիպպոսի զքեզ՝ տեսի զքեզ ոչ մարմնոյ աչօք, այլ հոգւով իմով՝ զի ելիր ի ներքոյ թզենւոյն։ Յայս առաջին խօսս ծանեաւ նոր աշակերտն երկու մեծամեծ իրս յերկնաւոր վարդապետն. այսինքն զՅոգի կանխագիտութիւն կամ զերաշխարհ մարգարէութիւն, որով զառաջեւս ունէր զիրս հեռաւորս. և զՅոգի սրանչելի հեզութիւն, որով փոխանակ արհամարհ պատասխանւոյ նորա առ բան փիլիպպոսի վասն ծագման իւրոյ ի նազարէթէ, գովեաց զնա՝ այլ անկեղծ ճշմարիտ խրատելոյցի կոչելով. և նոյնժամայն աշակերտեալ նմա՝ ասաց. * Ուսերբի գու եւս որդի՝ այ. գու եւս թագաւոր խրոյելի։ Հաճեցաւ Յա՛ ի այն պատասխանական խոստովանութիւն նորա, թէպէտեւ էր թերակատար՝ տակաւին լոկ մարդ սիրելի՝ այլ ոչ որդի առդնելով զնա. և առ առաւել հաստատելոյ զնա ի հաւատս՝ խոստացաւ նմի, թէ մեծամեծս եւս քան զայս տեսցես։ Լայժմ փոքր ինչ նշան եւս ասէ զիմոյ ոնծաւէ՝ միով կանխատեսութիւնամբ. գայցէ ժամանակ՝ զի մեծագոյն փառաւք յայտնեսցի աչխարհի ոնծաւթիւնս։ Լա՛ զարմացեալ զբան իւր առ ամենեսին՝ որք անդն կային՝ ասէ, ամէն ամէն՝ այսինքն անկերկրայ ճշմարտութիւ՛ ասեմ ձեզ, զի տեսանիցէք զերկինս բացեալ, և զՏիրեշտակս՝ այ զի ելանիցեն և իջանիցեն ի սպասաւորկութիւն որդւոյ մարդոյ։ Լայս խոստումն Յոի թէպէտեւ բազմաբնակ մարթի ճշմարտիլ, որ ոչն զրեցաւ ի կարգի աւետարանին, այլ եւս քան զեւս ճշգրտեսցի ի վերջին հանրական դատաստանի։

Յա՛ ասէ կուտ զանձն որդի մարդոյ, թէպէտ լուանէր իւր հայրն ըստ մարմնոյ. և զայս այնպէս պարտ է խմանալ, բան որում ասի և է որդի դաւթի, և որդի աբրահամու. զի գոլով ճշմարիտ որդի կուսին

մարիամա՝ է Ազմարտապէս զաւակ բան մարմնոյ ի-
ջեալ ՝ի նախահարց կուսամօրն։ Բան երբայական
ոձոյ՝ նոյն է ասել մարդ, և որդի մարդոյ. որպէս և
գիրքն բազում անգամ զնմա՝ մարդիկ որդիս մարդ-
կան անուանեն. և առաւել զայս և զայն որ ՝ի
մարգարէից որդի մարդոյ առաձայներ ՝ուած։ Բրդ-
քանզի փրկիչն մեր կամէր, զի ծանիցին զնա Ազմա-
րիա ՝ուած, և Ազմարիա մարդ, վասն այսորիկ յորժամ
խօսէր զիշխանութիւն դատելոյ, դատապարտելոյ և
արձակելոյ որք էին նշանք ՝ուծութեան, կոչէր զանձն
որդի մարդոյ. ՝ի հաստատել՝ թէ որպէս էր ՝ուած Ազ-
մարիա, նոյնպէս և եղև վասն մեր և իբրև զմեզ մարդ
Ազմարիա։

ԳԼ. Օ.

Երբ Յն ՝ի հարսանիս նոցա գալիլեացւոց. ուր զինոյն
ի-ին ՝ի գինի. և անոի անցանէ ՝ի ի-ի-ատառամ։

* Եւ յաւուրն երրորդի հարսանիքը էին ՝ի կանա
գալիլեացւոց. և անդ էր մայրն Յսի։ (Յովհ. Բ.
1. մինչև ՝ի 12։)
* Յետ այսորիկ էջ Յս ՝ի կափառնաում, ինքն և
մայր իւր, և եղբարքն իւր։ (Յովհ. Բ. 12. 13.
մինչև ՝ի վերջ գլխոյն։)

Յս յորժամ կոչեաց զփիլիպպոս. և խօսեցաւ ընդ
նաթանայէլի, հաստատեալ էր ՝ի յաջորդ աւուրս
մտանել ՝ի գալիլեա. * ՝Ի վաղիւ անդր կամեցաւ
ելանել ՝ի գալիլեա։ զոր և արար իսկ։ Երկու էին
քաղաքք կանա կոչեցեալք. մի ՝ի վերին գալիլեա
՝ի ցեղին ասերայ. երկրորդն ՝ի ստորին գալիլեա ՝ի
ցեղին զաբուղոնի։ Այսր եկն Յս ՝ի վաղիւ անդր.
այն օր երրորդ էր մեկնելոյ նորա ՝ի բեթաբարայ,
ուր եթող զմկրտիչն յովհաննէս։ ՝Ի նմին երրորդ ա-

ւսբ Հարամանիք եին 'ի կանոս գալիլեացւոց։ Լսել թէ ամ էր փեսայն՝ որպէս ծանօթ Հոգի, անդիտելի է. են որ գուշակեն՝ թէ իցէ սիմոն կանանացի, որ և շնաւոն նախանձայոյզ (զի գանոս բան էրբ". է նոս խանձ կամ քէն)։ որպէս թէ յետ սրանչելեաց եղելոց 'ի Հարամանիս իւր՝ աշակերտեալ իցէ յոգի։ ամենք եւ գնահատանչել առ գնեն, զոր նոխտացանեն ը բարեհաճիմայ։ Լնհիթեթ է և կարծելն ամենց զյուվշանանէս առնաբանելն, բառնալով 'ի նոմանէ զպանծալին պատկ՝ զոր ասն նոմս միաբան Հատորէն նը Հարբ, թէ միշա եկաց մնաց նոս յանարատ կուսութեան։

Լոյս ինչ եւեթ յայանի է յաւետարանէ, թէ կմ փեսայն, և կամ Հարսն, կամ երկոքեանն իսկ էին ազգականք, կամ մտերիմ բարեկամք կուսին միաբանոս։ զի անդ էր նա 'ի պատուել անձամբ զկոչնոս Հարսանեաց, ուրեմն գրաւ իրեցաւ և Հոգ, և աշակերքաբ նը՝ որք էին 'ի ժամանն զեարոս, անդրեան, փիլիպպոս, և նաթանայել, գուցէ և որդիքն զերեդեայ։ եւ առաւել յայտնոս և այլք կոչեցեալ քն Հոգաբարն են։ Լամբ Հոգն փրկչին, որ գոլէր զկուսանի՝ ցուցանել թէ ոչ խոտ, և զանանանի։ և յորդորելով 'ի կուսանի իրրև 'ի բարձրագոյն կատարելութի, ոչ դրաժարեցուցանէր յամուսնութենէն ը կարգաւորութենն ոյ։ զի էթէ հաճոյ էին նոս կուսանք, չէին անհաճոյ և ամուսնացեալք։ Լն 'ի սկզբանէ աշխարհի սահմանեաց զամուսնութենն։ և Հոգ կամէր ամբառնալ զայն 'ի խորհուրդ եկեղեցւոյ իւրոյ։ զոր այժմ անձամբ կամեցաւ հաստատել։

Լսարի եղև Հարամանեացն զի անդ գաւառ Հոգ։ ապա թէ ոչ՝ ամենայն վերջանային կոչունքն։ Լկուսապակաբէ գինի։ և չէր գիւրին այլուսա ընալ գայակաութենն։ Լոյսն մտրիամ իմացաւ զկարօտութենն։ և Հայեցեալ յորդին՝ առաջի արար զայն նոս, ասելով։ * Գինի ոչ ունին։ Լառ որ նա պատասխանի Հոգ։ * Օ ի կայ իմ և քո կին դա։ չէ է Հասեալ ժամանակ իմ։ Լուրարանչիր մանն պատասխանուս պէտս ունի մեկնութենէ։ Օ ասելն՝ * զի կայ

իմ և քո կին դու։ ամենք խնացան, որպէս թէ ասել. զինչ բան կայ ի մէջ իմ և քո. կամ զինչ ունիմ ես ի քէն. այլ զի խիստ է բանս, մեզմէ կարծեցին՝ ասելով, թէ Յն կամէցաւ ցուցանել թէ զկարողութիւն պանդիւղագործութեան ունէր բան որպէս ասաց. և զանձութիւնն չունէր ի մտքին։ Այս մեկնաւ թէ օտար է ի տեղւոյս, անպէտ և ծանր։ Այն զի Յն թէպէտ զանձութիւն չունէր ի մտքին, բայց այնուամենայնիւ էր յարաբերութիւն մտքին առ անձարդին, զի մայրենի իրաւամբք վայելչապէս կարէր խնդրել ի նմանէ հարազարդութիւն ինչ ի հարցն իւր։ Այս թէ ոչ՝ մարիամ հարցեալ ի Յոսէ, թէ զինչ յարաբերեսցի է իմ ընդ քեզ, կարող էր ասել պատասխանի։ Որդի իմ ես դու, և իբրև առ որդի դիմեմ առ քեզ. չէ ինչ անպատեհ որդւոյ ի դարձ արկանել զկարողութիւն իւր ի խնդրոյ մտքին, թէև ի մտքին չունիցի զայն կարողութիւն։ Որ թարգմանք զայն, զի անուանեալ՝ պատասխանին առեալ ի Յոսէ էր լոկ հրամէտ խորհրդաւոր, և ոչ յանդիմանութիւն սիրելի մտքին։ Խնդիր նորա էր ի սիրոյ և ի կարեկցութիւն հիմնեալ ի կենդանի հաւատ, որով հաւատաւոր էր թէ Յն կարող էր արանդիւղաբ լնուլ զկարօտութիւնս նոցա. ապա թէ՝ ի Լեմ բանն Յսի յանդիմանութիւն էր, ոչ էր այնուհետև վատահելի մարիամն ասել ցսպասաւորսն առանց ընդ բանս ինչ ածելոյ. * Որ զինչ ասիցի, ձեզ, արարջիք։ որով եցոյց թէ հաւատաւոր էր զի լուաւ Յն հայցուածոյ իւրում, և ունի կատարել անմիջապ։ Որ ասի ամենք լուա և թարգմանեն զբանն Յսի։ Օ զինչ փոյթ է ինձ և քեզ, թէ գինի ոչ ունին. մեք չունիմք զկաս գինւոյ. և առ փառաւորելոյ ինձ հրաշագործութիւնդ՝ ասեցին ոչ է հասեալ ժամանակն։ Այս զայս խնդ առացեալ ոչ խոսիս, այլ անուշակ եղանակաւ. ոչ ի բառնալ զայսն, այլ յառաջելոյ զվատահութիւն։

Լոկ վասն կուսելոյ Յսի զմարիամ՝ կին, և ոչ մայր, զկնայն պատճառս ասեն մեկնիչք. շատ լիցի մեզ նշանակել զբան կարգնասի։ Հայեցեալ ասել յաւանապանն՝ ոչ ուրեք գտանեմք թէ Յն երբեք զմա-

բիամ կուլեալ իցէ մայրը, այլ միշտ կիսն. չէր տարաբ
կայս թէ խոսելով ընդ նմա առանձին՝ անդաստան 'ի
մանկան թէ հեռ մեծարեր զնա քաղցր մայրենի ան
ուանէ. այլ յաւետարանի այն բանք ելեալ նմն նշա
նակին, զորս հրապարակաւ խոսեցաւ ընդ նմա. և
յայնժամ կուլեաց զնա Կն, որպէս զանձն իւր կուլէր
Ա՝՝՝

կերը, հրամայէ անկասաբ թողուլ զլուն անդր 'ի վերայ անդանոյն, և երթալ նախ հաշտիլ ընդ եղբօր իւրում։ Լ՝յետ ոչ պատուիրէ՝ ասէ կարդնոս, թէ փաստարարն առժամայն ընդ փաստէն երթիցէ ներուին խնդրել, կամ զայլ հատուցումն ինչ, իսկ և իսկ առնել փաստելոյն։ Լ՝անդի խոհեմութիւնն բաղում անգամ ուսուցանէ, չերեւել անձամբ այնպէս փութով առաջի վշտացելոյն. զի նեարկայութիւն փաստողին իբր 'ի բաղումն առաւել բարբարէ զրոց 'ի օրսն նորա, յորում բարկութիւնն դեռ ևս փառաւոր կայ, և փոխանակ հաշտութեան՝ կարէ առաւելուլ զերիտասարդութիւն։ Լ՝ըդ՝ պարտաւորութիւն մեր այս է, 'ի ձեռն այլոց ջնջել շահել զսիրտ նորա՝ որում անիրաւեցար. և 'ի մեր կողմանէ լինել պատրաստ առնել զարդար հատուցումն։ Ալ՝ փաստ, լինի պարտաւոր. և հատուցանել զպարտս՝ հրամանն է արդարութեան։ Ալ՝նա մոլորութիւն է կարծել արդարդնալ առաջի այ, լոկ զիջանելով 'ի կրից բարկութիւն, և զնելով 'ի մոռ չիասել այլ ևս եղբօրն. այս հարկաւոր է, բայց չէ բաւական. զի մնան պարտք արդարութիւն՝ որ պարտաւորն զիրդ մնաց 'ի հատուցումն, զոր չէ մարթի ժխտել առանց մեղաց։ Ալ՝նաւոցն առաւել պարտականն է շինել զանուն և զպատիւ փաստելոյն, քան թէ զոչն դարձուցանել զգրգռացեալ զրամն. զի այնչափ մեծագոյն է պարտաւորութիւն հատուցման, որչափ մեծագոյն է բարին բարձեալ. և արդ պատիւն՝ զերագոյն համարեալ է քան զինչս ամենայն։ Լ՝սանին և փաստը ինչ կամ անիրաւուիր այնպիսիք, որոց չունիմք կարողութիւն առնել հաւասար հատուցումն. յայնժամ՝ փաստարարն պարտական է շտապանալ հատուցմանն՝ զոր դատաւորքն 'ի դէպ համարին։ Ալ՝ զ միոյ ևեթ մարդուստի մեզաց ոչ կարեմք մեղէն առնել երբէք այ զարժանաւոր հատուցումն. տակայն ոչ ընդունի զատաւան և զզջումն մեր, յորժամ իցէ 'ի ճշմարիտ սրտէ, հանդերձ առաջադրութեամբ՝ ոչ կարի մեր զպարտս մեր առ ոչ։ Լ՝թէ ոչ այսոր վարի ոչ մեզ, քանի առաւել և մեզ այսպէս պարտ է վարիլ ոչ ընկերին։

Յս որպէս յայտ առնէ զպարտս փեսացուին՝ ի հաստատութեանէ, նոյնպէս և զպարտս փեսաւորին՝ շատանալ և հաշտիլ, յասէին։ * Եթէ նախ հաշտեսցիս ընդ եղբօր քում՝. յորում զերկոսին և փակէ։ Եւ յայտնագոյն ևս յասէին. * Եթէ իրաւունս ընդ ոսոխի քում փաղաքշես, մինչդեռ իցես ընդ նմա ի Ճանապարհի։ իբր ասել՝ եթէ փեսա կամ դժգոհութիւն ինչ էանց ի մէջ, փութայ հաշտիլ ընդ ոսոխի քում։ * գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն դահճի, և արկանիցես ի բանտ։ ահա սպառնալիք ահագին՝ օրինակաւ մարդկային դատաստանի։ Եւ զի հաշտեանց փութայ, մինչև ածեալ է ցեսս ի դատաստան ոչ, զի մի արկանիցես ի բանտ. * Եւ մէն ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի, մինչև հատուցանիցես զյետին նաբաբակիսն։ Եթէ արկանիցես ի բանտ ածային դատաստանի, ոչ ելանիցես անտի, մինչև ոչ վճարեսցես զամենայն պարտս մանրատան. և զի ի դժոխս վճարումն պարտուց ոչ երբեք վերջանայ, ուստի և ոչ երբեք ելանիցես անտի։ Եթէ զայս մարդասիրութեամբ Քրիստոսի քաջ ի միտ առնուցուք, այնուհետև զգուշանամք ոչ երբեք փեսաել ընկերին ոչ բանիւ, և ոչ խորհրդով. և եթէ երբեք փեսաեալ իցեմք, փութամք հատուցանել։ իսկ եթէ մեր իցէ կրեալ յայլմէ զփեսս ինչ, շատանամք չափաւոր իմն հատուցմամբ. և այնպէս զամբ փութալ ի հաշտութիւն ընդ ընկերին։

ԳԼ. Լ.

Լուսոյ Հոգւոյ ընդդէմ անօրէնութեան և զբղձանս մարմնոյ ոչնչման ճանչ.

* Լուսաւորք, զի սասցուս, մի՛ քնաց ի՝ մահ։ (Պաւլի. Է. 27.)

Տկբին մեր 'ի ցաւմնականէն անցանել խօսիլ զցաւս կսկանէն. սատ և ս բացէ 'ի բաց հնդրէ զմոլար կարծիս հրեից ժամանակին, թէ շատ է մարմնով լինել մարդս և հանեսս. նեղբին անմարդութեան պտուն չէ ինչ մեղք։ Իսկպէս տամաբանեայ պատուիրանք յայսմէն արգելուն զնեղբին ցանկութեն հնութեն, սակայն բազումք վարդապետեին թէ սա կատարուին այսմ պատուիրանի, շատ է ցայտնել բանիս կամ գրով, և կամ այլ ինչ արտաքին նշանաք զնեղբին ցանկութեն, որ բան ինքեան ասէին ոչ է մեղանչելն. 'ի սուտ սիրզն հաստատեալ՝ թէ մոխիսական օրէնք հայրն 'ի գործն և ոչ 'ի սիրտն, յարտաքինն և ոչ 'ի ներքինն։ Բռնատ այսր մոլար վարդապետութեն այն էր, զի յընթեռնուլ անդ զբրէնսն մովսէսի՝ շփոթեին զբարոյական պատուէրս ընդ ծիսականս և դատաստանականս պատուիրանաց։ Ծիսականք և դատաստանականք կարգեալ էին ուղղել զարտաքին պաշտամունս ոչ, և պահել զհասարակաց խաղաղութեն և զանդորրութեն ժողովրդեանն 'ի ձեռն պատշաճական պատժոց երկցունց. ուստի հայէին միայն յարտաքին գործս, և զայն ևեթ պատժէին դատաստանաւ։ Բուր զնեղբին յանցանեանս չէր մարթի կուլել 'ի մարդկային ատեան. զի մարդ ոչ տեսանէ զսիրտն։

Այլ բարոյական պատուիրանք այլազգ են գլխաւին. զի պարտաւորեին և յօրէնսն մովսիսի. պար-

տուսարէն և յետ բարձման մեծախուսական օրինաց, զի բնական էն. ուստի և յառաջ քան զդրական զաբլէնն՝ պարտաւորէին. զի 'ի սկզբանէ աշխարհի զբնեցան 'ի սիրա ամենայն մարդոյ։ Բ. յս բարոյական պատուէրքս ուղղէն զկամս ։ ուստի թէպէտ արտաքին գործք առանց հաւանութեան կամաց ոչ առնէն յանցաւոր, բայց առանց արտաքին գործոյ միայն նեղքին հաւանութիւն կամաց լինի որ յանցաւոր. բան այսմ եթէ որ 'ի քուն, կամ առ անպաղթելի ոգիս առնել սպանցէ զմարդ, կարծելով սպանանել զբէ վայրի. թէպէտ գործն արտաքին չար է, բայց առաջի այ ոչ է մեղանչական. զի կամքն չունէր 'ի նմա մնան, և կայք յիւրում ուղղութիւն։ Ինդ հակառակն՝ 'ի հաւանել նորա ընդ մեղս ինչ, թէև գործով ոչ երբէք գործեացէ, սակայն նոյն հետայն խոտորի յանիրաւ կանոնէ իւրմէ, և մեղանչէ. զի թէպէտև յանցաւորութիւնն է նեղքին և թաքուն, այլ այս յայտնի է որպէս զարտաքինն. վասն որոյ ոչ կարի խառնել 'ի դատաստանի, նորա, և է պարտաւոր արդար պատժոյ։

Օ այս Աշխարհաւթի ընդդէմ տուս վարդապետութեանց բազում անգամ և 'ի բազում տեղիս քարոզեաց Քրիստոս։ Արդէն և յայսմ բարոզութիւն զոր արար 'ի վերայ լերինն՝ յուշ արար զայն վասն բարկութիւն. և այժմ յաւելու յուշ առնել և վասն ցանկութիւն. * Ամենայն որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա, անդ էն հանցաւ նմա 'ի սրտի իւրում։ Այս արարեալ թէ ամենայն կամաւոր անհամառա հայեցուած է մեղք ծանր, նոյնպէս և ցանկութիւն զկնա եկեալ պատատհական հայեցուածոյ՝ եթէ 'ի վերայ գայցէ հաւանութիւն կամաց, է մեղք ծանր։ Լաւագոյն թէ կամաւ հայեցայի առ 'ի ցանկանալոյ, և թէ բան գիպաց իմն տեսանիցէ զանհամառա մինչ, և ապա կամաւորապէս ցանկանայցէ, ծանուցեա մեղանչել։

Զրն մեր ասա զայս յիրէ քան զայլ զգայարանս, քանզի ոչ առաւել գիւրատարն է, և առաւել ապրագ 'ի զարթուցանել խորհուրդս անկարգս, քան զայլ զգայարանս. սակայն վարդապետութիւն է 'ի

վերայ ամենայն զգայարանաց։ Մանաւանդ զնուէրն միայն յիշէ, և ոչ զայլ անհամեմատութիւն. զի ընդ այն ժամանակս գրեթէ ամենեքեան ամուսնացեալ էին. ուստի և առաւել յաճախ էր վասանդն վասն շնութեան, քան վասն այլոց անհամեմատութեանց. բայց վարդապետութիւն տարածի 'ի վերայ ամենայն սրբ և ի, ազգի լոր ցանկութեանց, յորս հոգին մերձաւորի մեզանէ առանց արտաքին իսկ գործոյ, եթէ կամքն հաւանեցի առ փանաբ, կամ անկարգ յաժարութիւնք, որ առատապար ցանկանի կոչի, որպէս հեշտաբառութիւն։ Զի զիտէր Տէր, թէ քանի հակամէտ են մարդիկ 'ի զգայական հեշտութիւնս, զգեհենին յաւիտենական ապառնացաւ. այնպիսի կամաւոր մեղանչական հեշտութեանց։ Ուստի հեռանալ խորհիլ ոչ ասի յամենայն առարկայից՝ որք 'ի մեզ հրապուրեն, այլ ասի զերեալ կարծեցին բնապէս կամ հարկաւոր. զոր քան մեկնեալ այլաբանութիւնք առնեալ 'ի բժշկական արհեստ, որ զնեխեալ անդամն հատանել, զի մի ամենայն մարմին ապականեսցի։ Զ 'ի մեջ բերել զաղջ ասէ, և զաղջ ձեռն իբր պատառականագոյն յանդամն. որպէս սովոր եմք 'ի մեջ բերել, յարժամ կամիմք ցուցանել զիրս զոյս առաւել սիրելիս և առաւել 'ի յարգի ունելիս։ «Եթէ ասէ քո աջ ասէ զայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա 'ի քէն»։ Զնոյն ասէ և վասն աջոյ ձեռնն, «Եթէ աջ ձեռն քո զայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա և ընկեա 'ի քէն». զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի ամենայն մարմին անկանիցի 'ի գեհենն»։ Լաւ յայտ է, թէ չէն կամք նոն մերոյ ոչաւ ուսուցանել, որպէս թէ օրէն իցէ մարդոյ կրնանալ ինքնին զմարմին իւր, կամ թէ գովելի իցէ հատանել զմի յանդամոց մերոց։ Զ.յդ օրէն է բժշկաց եւեթ, յարժամ ոչ գուցէ այլ գեղ 'ի պահպանութիւն բոլոր մարմնոյն, հատանել զմի յանդամոց. այլ 'ի պահպանութիւն հոգւոյն 'ի փոքանէց մեզաց ոչինչ օգտակ. զի ընդ կրնանալն մարմնոյ՝ մնայ փոքանէն կենդանի 'ի հոգին։ Ընդդէմ փոքանէց են այլ գեղք օգտակարք առանց հատանոն

անդամոց. այն է՝ զգուշանալ յամենայն անկարգ սիրոյ. հեռանալ յամենայն մերձաւոր առթիչ մեղաց. լինել պատրաստ կորուսանել զամենայն ինչս, և թող զուլ լքանել զմեզաւոր թեթ անձինս, ոչ լափ և սիրելի իցեն, և կամ կարեւոր՝ որպէս աչք և ձեռն, քան խորհրդածեալ կամաւք հաւանել միոյ մեղանչական խորհրդոյ։

Հայսմիայր խոռեցեալ Հոգի իբրև վարդապետ հնամարտուն, թասիլ սկսանի այսուհետև իբրև օրէնսդիր և տէր օրինաց։ Զրնդ մանիսիսի թոյլ տային, (՝ի՛ր. օրին. գլ. ԻԴ.) արձակել արանց զկանայս իւրեանց, եթէ արատ ինչ գտանիցին՝ ի նոսա. տարով նոցա զիր ապահարզանսն, յորում յայտ առնէր այսր թէ նա ոչ էս է նորա կին։ Զ.ին արձակումն կնոջ ոչ էր հրամանն, այլ թոյլատուութիւն. բայց եղեալ զարձակումն՝ տալ նոսա զիր ապահարզանսն՝ հրամանն էր օրինաց՝ ի նպատաստ կնոջն, զի ունելով զայն՝ կարող էր ամուսնանալ ընդ այլում առն. ապա թէ ոչ՝ առանց այնպիսի գրոյ՝ ամուսնանալն նորա լինէր ապօրինաւոր. և կինն բնակելով ընդ առն՝ լինէր պատժապարտ իբրև շնացօղ։ Զ.ոնոր օրէնս կարգեաց՝ ի վերայ իրացս. ա. հրամայեաց զի վասն այլ ոչինչ, պատճառի արձակեսցի կինն, եթէ ոչ՝ միայն վասն ամուսնական անհաւատարմութեան. բ. եղեալ զայս արձակումն, մի կարասցէ կինն լինել առն այլումն և ոչ այլոն առնուլ իւր զայլ կին, որպէս բառնայ զթոյլատուութիւն բազմակնութեան։ * Զ.այդ ես ասեմ ձեզ՝ եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պառնեկութեան, նա տայ նոսա շնալ. և որ զարձակեալն առնէ՝ շնայ։ Զ.յս բառք ոչ սխալեալ յայտնի ցուցանեն զայս խնայուած զոր մեք մեկնեցաք. բայց նա ինքն փրկիչն յայտնագոյն ևս ետ մեզ՝ ի միտ առնուլ զնշանարիս խնայուած նոցա. յառեալն՝ ի Ժ. գլուխ մատթէոսի. * Զ.եթէ այր արձակէ զկին իւր՝ և արասցէ այլ՝ շնայ։ Զ.ւ կինն եթէ ելցէ յառնէ իւրմէ, և եղիցի առն այլումն՝ շնայ։ Զ.յս պատուէր նպաստաւորէր երկոցուն, առն և կնոջ. առն՝ զի կինն լիցի առ նա հաւատարիմ. և կնոջն՝ զի այրն ոչ այն

պէս գիւրաշարժ լիցի արձակել զկինն. որպէսզի եթէ
ինքն զնի արձակելոցն՝ պարտաւորի մնալ անկին,
և կինն անայր։

Լ՝սա զգուշանալ արժան է չշփոթել զայս պա-
տուէր ընդ այնմ զոր ունիմք 'ի սրբազան կանոնս
եկեղեցւոյ։ Զի թէպէտ առա՛ջ ընդ հանրապէս վասն
զինչ և իցէ տեզական բաժանման կամ՝ առ ժամանակ
կեաց արձակման առն և կնոջ, այլ միայն վասն ՁԻՐՊ
և 'ի սպառ արձակման։ Լ՝ս. սին տակ բաժանումն
կամ՝ անջատումն շատ են այլ պատճառք, զորօրի-
նակ անհաւատարմութիւն 'ի կրօնի, հրապոյր և սա-
պանումն 'ի մեզ, և այլք նմանք. և այս անջատումն
ոչ այնչափ հայի յամուսնութիւն, քան թէ 'ի բնակակ-
ցութիւն և 'ի կեալ 'ի միասին. որ արդարապէս հա-
տանի վասն մեծի հոգևորական վատնգի։ Զե և
այս անջատմունք չեն կարգեալ 'ի պատիժ, այլ յոյզ
զութիւն. ուստի եթէ կինն կամիցի ուղղիլ, և ՁԻՐ-
մնարատակս ուղղեսցի, այրն ոչ կարէ արտաքսել
զնա, և զարտաքսելն պարտական է անդրէն ընդ-
ունել։

Լակ ՁԻՐՊ արձակումն՝ զորմէ խօսի ՏԷՐՆ, է պատիժ
առ. որ այրն ունի իշխանութիւն տուեալ նմա 'ի
Տ՝Էնէ. և կարօղ է պատժել զկինն հնացեալ՝ մշտին-
ջնտապէս հեռացուցանելով զնա յիւրմէ և 'ի տանէ
իւրմէ. և ոչ է պարտական ընդունելոյ զնա, թէ և
խնդարհեացի և ուղղեսցի. որպէս իշխանն ոչ է պար-
տական նեղել զպատիժն յանցաւորին, թէև զղջա-
նայցէ և ուղղեսցի։ Այնպէս թէ այրն ազատ է ընդ-
ունել զկինն յանցաւոր, նաև ոչ հեռացուցանել
յիւրմէ. զի այս արձակումն է թոյլ տուեալ, և ոչ
պատուիրեալ 'ի Տ՝Էնէ։ Այրն եղբայրական և զութ
զորավարական բազում անգամ են զօրաւոր պատճառս,
որով առաջինի այրն պահելով առ իւր, կամ անդրէն
ընդունելով զկինն յանցաւոր, ոչ 'ի վար արկանել զի-
բաւունս իւր կամ՝ զիշխանութիւն հեռացուցանելոյ
զնա յիւրմէ մշանջենապէս, որ տուեալ է նմա յայ-
դարութեամբ.

ԳԼ. Օ.

Լուսոյ ճշմարիտ երդմանց։

* Դարձեալ լուարուք՝ զի ասացաւ առաջնոցն, մի երդնուցուս սուտ. բայց հատուցցես Տեառն զերդմունս քո։ (մատթ. Ե. 33։)

Երկու մեղրութիւնք կային առ հրեայս 'ի վերայ երդմանն։ Մին այն, թէ շատ է երդնուլ ինչ սուտ կամ մեղանչական. իսկ երդնուլ վայրապար կամ ա ռանց ինչ հարկի՝ ոչ է մեղք։ Միւսն՝ թէ շատ է չարչել զանուն նոյ. իսկ երդնուլ յերկինս, կամ յերկիր, կամ յերուսաղէմ, և կամ 'ի գլուխ իւր, ոչ է արգելեալ յոյր։ Ընդդէմ այսոցիկ երկուց մեղրութեանց ասացեալ է Քրիստոս։ Լուաջին՝ թէ չէ պարտ երդնուլ և ոչ իսկ ճշմարտութիւնն անխտիր և ոչ հաճոյիս։ * Այլ ես ասեմ ձեզ, ամենևին մի երդնուլ։ Հասագ մինչեւ՝ ոչ ճշմարիտ խմացուածոյն՝ հարց և եկեղեցւոյ՝ ոչ նշանակեալ զոմ ժամանակ, ոչ թէ ոչ երբեք երդնուլ։ Օ 'ի երդումն 'ի կարեւոր ժամու և 'ի բարեպատեհ վայրի օրինաւք՝ պատուեալ զոմն, իբրև վկայութեան ճանաչելոյ զնա լինել յամենայնի, և զիսկ զամենայն, և տեսանել զամենայն. և զոչ ճշմարտութեան անբաւելի, որ ոչ կարէ վկայել սուտ թեան. և կարողութեան անչափ, որ կարէ տալ իրաւունս այնմ որ ունի զայն. և անվրէպ արդարութիւն, որ ոչ խորէ զանձինս, և ոչ առնուսակն երեսաց։ Վասն զի կոչել զոմն 'ի վկայութիւն յիրս ծանուցեալ և հարկաւորս, յորժամ գծուարին է այլազգ հաւանեցուցանել զճշմարտութիւն, է ցաւանել զգերագոյն վարկումն՝ զոր ունիմք զնմանէ։ Այսպս ուրեմն բառդ մինչեւ՝ նշանակեալ 'ի Աստուծոյ, անկանի նախ՝ 'ի վերայ ճշմարտութեան. իբրև ասել՝ այլ ես ասեմ ձեզ մի երդնուլ նաև զճշմարիտն,

յոբժամ Ծանրութիւն գործոյն, և Հարկն ոչ պահան-
ջիցէ։ Եթէ Ճանաչելոյ զնոյն անասուն Ճշմարտու-
թիւն, և ամենիմաստ, ամենակարող, և ամենոգութիւ-
արդար, պարտ է և եւս Ճանաչել զնա էակ յանառհ-
մանս գերազոյն. որ թէև զիշխանիցի մեզ կոչել
զնա 'ի վկայութիւն յիրս հարկաւորս և Ծանուցս,
այլ ոչ սոյ մեզ Համարձակութիւն կոչել և յիրս
փորձանս և յոյժ Հարկաւորս։ Եթէ ուսիկ որ յայն-
պիսի իրս ընդունս կոչեր 'ի վկայութիւն զիշխանն,
յայտ է թէ անարդութիւն առնէր նմա։ Զայս քա-
նզի առաւել անարդութիւն է կոչել զնա 'ի վկայութի-
ան պիսի մնասի իրաց։ Երկրորդ՝ Զբաղ անենին՝
յառաջիկայ բանս փրկչին՝ ասէաբերկ յերկինս և յեր-
կիր և յայլ արարածս այլ։ և այս է երկրորդ վարդ-
գապետութիւնն Զոր ընդդէմ նախադրեալ երկ-
րորդ մեղրս թէ։ * Զայլ ես ասեմ ձեզ, ամենեքին
մի երդնուլ, մի յերկինս՝ զի աթոռ է այ։ և մի
յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա։ և մի յե-
րուսաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի, և այլն։ Իբր
ասել՝ ոչ միայն գոյրապարտ լերդնուլ յանծ, այլև
զդուշանալ ամենեքին լերդնուլ ոչ յերկինս, ոչ յե-
րուսաղէմ և այլն։ Զի զի լեր դիւրին խմանալ
զպատճառս այսր պատուիրանի, (թէպէտև առ-
պահանջութիւն նորա շատ էր թէ Զոր հրամայէ,)
Հաճեցաւ ասել յաւելուլ 'ի մեր պէտս և զպատճառն.
որ է յարաբերութիւնն զոր ունին առ ած եղելոյս
ամենայն՝ իբրև արարածք նոր, և երևեցուցիչք մե-
ծութեան նորա։ Երկինքն իբր աթոռ նորա, և երկիր
իբր պատուանդան նորա. զարս և եւսայի մարգարէ
նշանակեաց 'ի ցուցանել զմեծմայելութիւնն այ։
* Այսպէս ասէ տէր, երկինքն աթոռս իմ են, և եր-
կիրս պատուանդան ոտից իմոց։ (կգ. ա.) իսկ ե-
րուսաղէմ՝ որպէս քաղաք մեծի արքայի, այսինքն
այ։ Նշանակեալ կայ և ասեմ. թէ։ Ահեմ է մեր
և արշնեալ է յոյժ 'ի քաղաք այ մերոյ՝ 'ի լեռան
նր նորա. ցնծասցէ, ցնծութիւնն ամենայն երկիր. լե-
ռինքն սիոնի, կողմանքն հիւսիսոյ, քաղաք թագաւորի
մեծի։

Այս պատճառաւ յայտ առնեն ամենայն երկիր-
զածաց, եւ առաւել ընդունուլ առանց հարկի 'ի
կոյսն մարիամ, և 'ի սրս. զի նա մայրն է ոչ. իսկ
սրբն բարեկամք նորա։ Յաւել ասել Յոգ ընդունուլ
և 'ի գլուխ մեր. և ապայ զպատճառն. զի ոչ է մեր
գործած, և ոչ զմինչ կոխեալ 'ի գոլն, այլ յոչ.
այնպէս զի չունիմք կարողութիւն և ոչ զմի մազ
գլխոյ մերոյ ապիտակ առնել կամ թուխ։ Յայսմանէ
նէ ունիմք 'ի միտ առնուլ թէ չէ օրէն երգնուլ ոչ
'ի հուր. ոչ յարեգանն. և ոչ յայլ ինչ արարած.
որք բան որում ծառայեն մեզ, ոչինչ օգտեն 'ի
հաստատութիւն Ճշմարտութեան. իսկ բան որում
արարածք են ոչ, և առնա վերարերին, երդումն
'ի նոսա՝ Հայի յանդգնութեամբ։ Լոգեցի ձեր բան, այսն՝ այո,
և ոչն՝ ոչ. զի աւելին քան զայն 'ի չարէն է։ Իրք
ասել, պարտ է ձեզ պարզապէս ասել զՃշմարիտն
առանց յարելոյ 'ի նա զերդումն. մինչ զի 'ի սովո-
րական խօսս առանց ինչ հարկի յաւելուլ զերդումն՝
է 'ի սադրելոյ սատանայի. վասն այնորիկ ասէ, թէ
այն չար սովորութիւն 'ի չարէն է։

ԳԼ. Լ.

Լուծս զի 'ի ընդդէմ՝ վասն սիրոյ սուտ երդմանց։

* Լուարուք՝ զի ասացաւ, ակն ընդ ական, և ա-
տամն ընդ ատամն։ (մատթ. ե. մինչև 'ի
վերջ գլխոյն։)

Ի դատաստանական և 'ի պատժական օրէնս
երբայեցւոց մի էր օրէնքն կոչեցեալ հատուցական.
որ դատապարտեր զանցաւորն կրել զայն ինչ, զոր արար ընկերի իւրում անմեղի։ * Լուսկուն ընդ
բեկման, ակն ընդ ական, ատամն ընդ ատամն, որ-

պէս առնիցէ որ զիսէզուիթիւն՝ նոյնպէս հաստատցի նմա ։ (զեւ. իզ. 20։) Եւ ի գիրս ՅԿ. օրինաց (ժթ. 21.) * Ի խնայեսցէ ակն քո ի նա. անձն ընդ անձին. ակն ընդ ական, առատն ընդ առատան. ձեռն ընդ ձեռին. ոտն ընդ ոտին ։ Եւ յս օրէնքս յայտնի է մեր առ հրէայս. նոքին իբրեւ ՅԱ ակաւ բառս յառաջ բերէ, ասելով ակն ընդ ական. առատն ընդ առատան. որ շատ էր առ ի յիշեցուցանել նոցա զբոլոր օրէնսն։ Եւ յս օրէնքս ոչ էր ուղղեալ առ միասնայն, որպէս թէ տալ նմա իշխանութիւն անձամբ հատուցանել միասոցին զհատուսաք պատիժ, կամ ունել իրաւունս պահանջելոյ, որոյ զի գատաւորն ի կիր արկանիցէ զայս վրէժխնդիր արդարութիւն ի վերայ միասոցին. եւ առաւել ոչ պարտաւորէր զմիասնայն խնդրել զազուկ գատաւորին եւ փնտել գատաստանաւ, եւ պատժել գատաւորական իշխանութիւն։ Եւ յս հոյլեր ի գատաւորն ուղղեալ գնա յմտաբութիւն պատժոյն, որով արժան էր պատժել զյանցաւորն բառ չափս յանցանաց։ Վասն միասնայն չունէր այլ իրաւունս բայց միայն պահանջել զհատուցումն իւրոյ միասուն։ Եւ զդ հրէայքս կամ թիւր խմանային զայս օրէնս, որպէս թէ այր իւրաքանչիւր կարող է անձամբ վարել զայս արդարութիւն. կամ մեկնել էր ի նոսա մտաւոր վարդապետութիւն, թէ օրէն իցէ առել զմիասոցն, և ոչ ով վրէժխնդրաւն ածել ի վերայ նորա զհամանման պատիժ։

Եւ ի վերայ այսորիկ զայսոքիսակ առանցեաց զիւր վարդապետութիւն։ Եւ սա ամենայն մասին որ հոյլ առ գատաւորն՝ ինչ ոչ ասաց, և զպատիժն համանման ոչ երարձ. զոր և այժմ առ մեզ առ քրիստոնեայս ի բազում յանցաւորս գոսութիւն վարեն գատաւորքն։ Եւ ըստ այնմ մասին որ հոյլ առ միասնայն, էստ զուստն մերոյ, ներոյութիւն, և կամ որ համբերութիւն, մինչև փոխարինել և բարիս ընդ չարեաց. մի կալ ասել հակառակ չարաբարին. այլ եթէ որ ածիցէ ապտակ յաջ ծնօտն, դարձուցանել նմա և զմիւսն. և որ զքո կամիցի ի դատ վարել և առնուլ զշապիկս, թողուլ ի նա և զբամ-

կանն։ Լաւ որ տարատարհակ վարեսցէ զոր՝ առաջ նորդել ինքեան կամ ուղեկցել 'ի Ղանատարհի մղան մի, երթալ ընդ նմա և երկու մղոնս։ և եթէ որ խնդրիցէ ինչ՝ տալ անխափոր նոցա չարաբարին։ և եթէ կամիցի փոխ առնուլ, մի դարձուցանել զերեսս։

Լաւմանդակութիւն այսր վարդապետութիւն զա նազան օրինակօք բացատրեալ, ընդ հանրապէս խօսելով է մի միայն պատուէր։ որով պատուիրէ մեզ զգուշանալ 'ի վրէժխնդրութէ։ և պատրաստ լինել 'ի սրտի կրել համբերութիւն, յորժամ պահանջիցէ զայն արդարութիւն, կամ սէրն, կամ ողորմածութիւնն, և կամ փառքն։ Այնմանայն խրատել ըզմեզ առ այս համբերութիւն նաև յորժամ չիցեմք Ղշդիւ պարտապան յառաջիկայ։ բայց առնել զայն է մեծագոյն կատարելութիւն, և առաւել փառք նմա։ Լաւ յայսր ամենայնի վերայ, նոքա բանեալս * մի կալ հակառակ չարի ||, այլ խոպան արգելու ընդդէմ կալ այնմ որ կամիցի փնտռել մեզ. միայն թէ դիմադրութիւն լիցի 'ի սահմանի օրինաւոր պաշտպանութէ։ Լաւ արգելու ընդդէմ կալ ոչ՝ վրէժխնդրութէ, և զորձով որ ածէ յանիրաւութէ, յանցութիւն, և 'ի մեղս։ Կրկ՝ և ոչ կալ հակառակ նաև 'ի սահմանի լափաւոր և օրինաւոր պաշտպանութէ՝ խրատ է։ զոր արարին մարտիրոսք։ և առնեն բարձրագոյն կատարելութեամբ, որք հրաժարին յամենայն իրաւանց և և 'ի բնակնոց, առ 'ի կատարել զվարդապետութիւն Ղոյ։ և զՀետ երթալ օրինակի նորա՝ ջերմ փափաքանօք քրիստոնեական կատարելութեան։

* Լաւ եթէ որ ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո, դարձո նմա և զմիւսն ||։ Լաւ և այ խրատ է, զոր ա ռաւելս ուսուցանէ։ և կամի ասել թէ 'ի կրել մեր զանիրաւութիւն յանձէն, այնպէս անխոտով լինիցիմք, մինչև պատրաստ լինել կրել և զայլ անիրաւութիւն առանց ընդդէմ դառնալոյ։ Լաւ և Ղրշմարիտ խնացուած բանին Ղոյ։ ապա թէ ոչ՝ չլինի միշտ նեղեալապէս 'ի գլուխ ասելոյ։ քանզի եթէ ընդ

կալեալ ուրեք ապտակ ի մի ծնօտ, դարձուցանելիցն և զմիւսն, ասիցուսարար առաւել բորբոքել զլարտութիւն հարկանողին, որ արհամարհութիւն և նախատինս անձին զսոն հատարի։ Զոր իւրով օրինակաւ մեկնեաց զայս վարդապետութիւն. զի յորժամ ընկալաւ ապտակ ի մի ծնօտ իւր, ոչ դարձոյց և ըզմիւսն։ այլ եկաց պատրաստ ի կրել, և կրեաց սրտանչելի հեզութիւնն և զայլ բազմապատիկ հարուածս և նախատինս։ * Լաւ որ զի կամիցի դատել և առնուլ զշապիկս քո, թող ի նա և զանձինն քո։ Սոփիսմբ ոչ արգելու Զոր զքաղաքական դատս, և զբաղաքացիսն ի դատաստան՝ ի մէջ ածելով զպատճառս մեր ի պաշտպանութեան ընդդէմ մերոց։ Լ.յայսիսի դատս օրինաւոր է բնապէս, և երբեմն գոմելի արդեաւք, յորժամ յայտնի երևի անիրաւութիւն յարձակողին։ զի մի անիրաւ Ճանապարհաւ տիրելով ընդդէմ օտարին՝ դատապարտեցցի հոգւով և մարմնով յաւիտեան։ Լ.յլ հրամայէ ոչ առել զնա, որ ի դատ վարել զմեզ, թէպէտ և յանիրաւի. և յանձն առնուլ յաւելս կորուսանել ինչ յիրաց մերոց, քան թէ մեր ի կռիւ և ի թշնամութիւն։

Օ այս վարդապետութիւն ուսուցանէ պահել և անձնական նեղութիւն հանդերձ, որպէս եթէ որ բռնի վարիցի ի գործ ինչ, պատրաստ լիցի յանձն առնուլ և՛ մեծագոյնս, քան թէ դառնալ յատելութիւն և ի թշնամութիւն. և խրատ ասայ կամաւորապէս առնել առաւել քան զոր կամի անիրաւ պահանջօղն, առ ի պահել զսէրն մեծագոյն կատարելութիւն։ * Որում խնդրէ ի քէն, տուր. և որ կամի փոխ առնուլ ի քէն, մի դարձուցաներ զերեսս։ Լ.յս և այլ և տիրապէս հրամանն՝ ասել ամ և խլել որ խնդրէ, ձրի՝ կամ ի փոխ։

Լ.յլ զի ի նախընթեաց քանս խօսեցաւ վասն դառնացուցեալ մերոց կամ ինքասարարաց, յաչ առնել՝ զի և ապա եթէ գայցին ի ծանր կարօտութիւն և դիմեցեն առ մեզ, ոչ է օրէն մեզ մերժել զնոսա յաղագս անիրաւելոյ նոցա երբեմն առ մեզ։ Լ.թէ կարօտութիւն նոցա այնչափ իցէ, մինչև պարտ առնել

մեզ ընդ ծանր մեղօք՝ օգնել նոցա, յայնժամ այս բան փրկչին է պատուէր պարտաւորիլ 'ի ձեռնտուութիւն կարեւոր նոցա։ Իսկ եթէ կարօտութիւն նոցա չիցէ ախտափ ծանր, յայնժամ է խրատ, և յորդորել այնպէս վարիլ ընդ միասարարին որպէս վարիլաք ի այնմ որոյ չիցէ երբէք մեզ միասակալ։

Հաւել Հոգ. * Ուստուք ապարէն, զի ասացաւ, սիրեսցուս զընկեր քո, և ատեսցուս զթշնամին քո։ Այլ ես ասեմ ձեզ. սիրեսցէք զթշնամիս ձեր. օրհնեցէք զանիծիս ձեր. բարի արարէք ատելեաց ձերոց. և աղօթս արարէք 'ի վերայ այնոցիկ՝ որ լլկեն զձեզ և հալածեն։ Օ՛ի եղիջիք որդիք հօր ձերոյ՝ որ յերկինս է. զի զարեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց. և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց։ Օ՛ի եթէ սիրիցէք զսիրելիս որ սիրեն զձեզ, զի՞նչ վարձք իցեն, ա՞յ ապարէն և մաքսաւորք զնոյն գործեն։ Եւ եթէ ապրցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց, զի՞նչ աւելի առնէք, ա՞յ ապարէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն։ Լրջ՝ եղերուք կատարեալք. որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։

Պէտք է յամենայն ճշմարիտն զիրս մանրախնամ օրինաց գտանել, թէ ուր հրամայիցի ատել զթշնամիս։ Մերկաս Հայիցի բանս 'ի գոլիլին յայն ատելուն կամ 'ի խորշումն, որով հրամայիւր խրատիլացուց թշնամենալ է հեթանոս, այսինքն խորշիլ և գարշիլ 'ի կռապաշտից իբրև 'ի թշնամեաց այ Աշխարհի, որք միշտ պատրաստ էին խոտորեցուցանել զնոսա 'ի կռապաշտութիւն, եթէ առնէին ընդ նոսա բարեկամութիւն և ընտանութիւն։ Կամ թէ Հայիցի և 'ի պատերազմական ջերմութիւն, որ անկ է զինուորաց յորինուած պատերազմի. զի յայնժամ են նոքա պաշտօնեայք վերնիմնդիր կամ փոխարինական արդարութիւն, որ իրաւամբք պատշաճի թագաւորին։ Ոչ երմութիւն ասեմ պատերազմական, և ոչ եթէ ատելութիւն. զի որպէս այժմ օրէն է զինուորին՝ որ կարգեալ է 'ի թագաւորէ, յարգաք պատերազմի ապատանել և վնասել զհասարակաց թշնամին, բայց չէ օրէն ա-

տել առանձնական առելութիւն, նոյնպէս և յայտնամ
լեր օրինաւոր այդպիսի առանձնական առելութիւն.
ուր զպատերազմական ջերմութի՝ մանաւանդ ընդ-
դէմ քանանացւոց, ի բազում տեղիս հին կտակա-
բանաց գտանեմք որպէս հրաման գլխովին՝ վասն ի
բաց ջնջելոյ զկռապաշտութիւն։ Այս յայտ է թէ
չգոյր օրէնք կամ հրաման առելոյ զոք առանձնական
թշնամութիւն. բայց ի պատերազմի անտի սիրելոյ
զընկերն հետեւեցուցանէին հրեայք, թէ որպէս բա-
բեկամն է բան ինքեան սիրելի, նոյնպէս և թշնա-
մին բան ինքեան առելի։ Այս թէ ոչ՝ ի նմին խակ
օրէնս յայտնի առանդի և պատուէր՝ որ հրամայէ
զգործ սիրոյ առ առանձնական թշնամին. * Այ թէ
պատահեսցես սակ եղին թշնամւոյ քոյ, կամ իշոյ
նորա մոլորելոյ, դարձուսցես և հասուսցես զնա
առ նա։ Այ թէ տեսանիցես զգրաստ ընկերի քոյ,
(լատինն ընթեռնու՝ առելոյ քոյ) անկեալ ի բե-
ռամբ, մի զանց առնիցես զնովաւ, այլ յարուս-
ցես զնա ընդ նմա։ Այս ինչ ասացեալ է, զի հրեայքդ՝
որպէս զպատուէր սիրելոյ զընկերն ամփոփէին յազ-
գայինս եբրայեցիս և ի՝ նոյնպէս և խղճէին առել
միայն զհրեայս. իսկ զայլ ազգս ամենայն պարզապէս
թշնամիս առգնէին, ուստի և առելիս առանց խղճի։
Այդ տերն մեր ի կատարեալ վիճակ վերածեալ
զօրէնս սիրոյ, զամենայն առանձնական առելութիւն
թշնամութեան յայտ արար լինել մեզանական. և
պատուիրեաց սէր ունել ընդհանրական առ ամե-
նեսին յինչ ազգի և իցէ և ի վիճակի՝ որպէս և ա-
ստեացեն նոքա զմեզ, և զլպարտեացեն, և հալա-
ծեացեն։

Օ առելութիւն և զսէր պարտ է ասա խմանալ՝ որ-
պէս ի վերոյ մեկնեցաք զբարկութիւն, ոչ զայն բնա-
կան շարժումն և զյուժարութիւն՝ զոր մարդ զգայ
ի սրտի իւրում ընդդէմ նեղչաց իւրոց. այս կիրք
զրգռութիւն ուրախ և ասատիկ իցէ, և ծանր ծանր
վրէժխնդրութիւնս թեշադրեսցէ յերեւակայութիւն,
ոչ տակաւին է մեղք, այլ փորձութիւն մեղաց. և
յորքան կամին մնայ տարատամ, է վտանգ մեղաց. ա-

պա եթէ կամքն սրիտքար և հաստատուն ընդդէմ կացցէ բորբոքման իւրում, յաւելու վարձս և պակաս անձին իւրում։ Լաւելութիւնն բան որում է լոկ կիրք բնական ոչ ազատ ի մեզ, է յօժարութիւն կամելոյ զբար. բայց ոչ՝ զի զգայ զոր ի սրտի յօժարութիւն կամելոյ, նովիմբ և կամի. որպէս և ոչ՝ զի զգայ զոր զծարաւ՝ նովիմբ և հաւանի ընդել։ Ի չգնելոյ միտ այսմ վարդապետութիւն, ծնանի սխալումն նոցա, որք ասեն թէ պահպանութիւն պատուիրանի սիրելոյ զԹշնամիս է անկարելի. զայս ասեն, զի զիտիցէ առնուն յանձինս, թէ որչափ և ջանայցեն՝ ոչ կարեն զայս շարժումն առելութեան կամ զրգռութեան խոպառնանել ի սրտէ. և արծարծել ի նմա գոնէ զփոքրիկ ինն կայծակն զգայական սիրոյ։ Ա՝ ասն որոյ դարձեալ առեալք՝ ասէ. կաղինոս, պատուէրն ՉՅոի արգելու զմեղութիւնն, և ոչ զկիրս առելութեան, որ և դժկամակութիւն ասի. և հրամայել զառաքինութիւնն բանական սիրոյ՝ գերբնական օրինակաւ, և ոչ զկիրս սիրոյ կամ զզգայական սէր։ Լաւելութիւնն արգելեալ՝ է կամիլ զբար. որ ոչ կարէ լինել առանց կամաց. իսկ կամքն բան որում է և անձնիշխան ընդդիմանալոյ այլ ամենայն կրից, նոյնպէս ազատ է և սէր ընդդիմանալոյ նաև կրից առելութեան։ Զգաս ի սրտի ընդդէմ ուժիք առելութիւն այնչափ առատիկ, մինչ զի բնութիւք թուի քեզ թէ կամիցիս պատառել զնա. ի լսել զՇնաս ինչ նորա վաղվաղակի զարթնու ի քեզ շարժումն ինն հաճութեան. և ընդհակառակն. ի լսել զյաջողութիւն ինչ նորա՝ նոյնչեւասն զգաս ի սրտի քում դժկամակութիւն և տրամութիւն։ Զայս վայր ոչ անցեալ զպատուիրանաւն սիրելոյ զԹշնամին, միայն կրեա զչիրութիւն առատիկ. ուստի պարտ է քեզ խնդրել օգնութիւն ի Նմանէ. և ներգործութիւք կամաց պատերազմիլ ընդէմ բնական յօժարութեանդ, և պինդ ունել զայս առաջագրութիւն՝ ոչ կամիլ առնել չար ինչ նմա. և վկայել առաջին ոգի, զի թէ ի ձեռս քո էր ազատել զԹշնամին քո ի ծանր ինչ ձախողութենէ, մնադիւր սիրով ազատէիր. և եթէ ի ձեռս քո էր արգելուլ զյաջո-

զուարթուն նորա, ոչ արգելուիր։ Լինի այսպիսի է կամք քո, ոչ անասցէք հակառակ կրից, ուստի և ոչ մեզաք։ և ասվին յաղթութիւն ունիցիս յոյժ վարձս բազում։

Գրական սէրն պատուիրեալ ի Աստուծոյ ոչ է զգայական յաժարութիւն՝ զոր ունիմք ի սիրելն զբարեկամն։ Սէրն հրամայեալ է կամիլ զՀնարաւորիս բարի ամենայն մարդոյ բանական ներգործութիւն կամաց։ վասն որոյ և յառաքեալն անդ դիպոյս ՝ի ժամանակին և բան առեալ՝ պարտի լինել գործունեայ, այսինքն ոչ լոկ կամիլ, այլև առնել զբարի։ * Բարի արարիք առեալեաց ձերոց։ մանաւանդ պակս ՝ի ձերմ աղօթիւք։ * Զօթս արարիք ՝ի վերայ այնոցիկ՝ որ լցին զձեզ։ և Հաստատեցին։ Այլ այս պատուէր ոչ պարտաւորէ զմեզ բարեբարել թշնամեաց, յորժամ յայլ գլուոց չունիցիմք պարտս առ այն։ Ընդհանրապէս պարտական եմք առնել թշնամւոյն զոյն բարի, զոր օրէն է առնել և այլոց որոց և իցէ՝ որք ի նոյն պարագայս գտանիցին՝ ըստ ուսուցանելոյ արդարութեան, կամ գթոյ և ողորմածութեան, կամ սիրոյ, և կամ այլ ինչ ծանր պատշաճաւորութեան։ և յայնպիսի դիպուածս ոչ կարեմք ՝ի բաց հանել ՝ի բարեբարութենէ մերմէ զթշնամին՝ վասն լինելոյ նորա մեր թշնամի։ Պարտական եմք ոչ ՝ի բաց հանել զնա յաղօթից անտի, զոր առնեմք վասն ամենեցուն։ և թէպէտ չիցեմք պարտական խորհիլ յայնժամ զնմանէ որոշաբար, որպէս և չեմք պարտական որոշաբար խորհիլ զնոցա՝ յորոց ոչ երբէք ՝ի մեզ ինչ կրեցաք, բայց ոչ կարեմք մատուցանել նոյ զաղօթս ընդհանրապէս վասն բնակիչս այնպիսի կամաց՝ թէ մի լիցի հաղորդ այնմ թշնամւոյն մեր։ Սակայն հնար է թէ դիպեսցի պարտաւորութիւն որոշաբար աղօթս առնել վասն թշնամւոյն, յորժամ այլազգ ոչ կարիցեմք յաղթել բուռն փոքրութեան առելութեան ընդդէմ նորա։ Բնութեամբ զայլ բարեբարութիւն, և զայլ ջերմ աղօթս ոչ է պատուէր, այլ խրատ։

Բա կատարումն պատուիրանիս և խրատուս զերկու պատշաճաւոր բերի Աստուծոյ։ առաջին է նմանիլ հօր

մերոյ Եկեղեցւոյն. որ ի հաստատակաց բարեբարեաց իւրոց, որպիսի են բարիք արեւու և անձրեւի, ոչ ի բաց հանել զնոցա որք դառնացուցանեն զնա, և թշնամի են նոցա։ Օ այս ահաւասիկ ասել և փոփաթելի որդիս թիւ՝ պարա է մեզ խնդրել յամենայն սրտէ. եթէ կամիցիս որոշ որդիս սիրելիս՝ թէ և որդեգրուիս, մանաւանդ ի ժառանգաւորութիւն ոյ, և ի ժառանգակցութիւն միածնին։ * Օ ի եղկելիք որդիք հօր ձերոյ որ յերկինսն է. զի զարեգանն իւր ծագէ ի վերայ չարոց և բարեաց. և ածէ անձրեւ ի վերայ արդարոց և մեղաւորաց։ Լրկիրդ պատճառն է վարձին. զոր ոչ լինի սատանայ բնական սիրով առ սիրելին մեր. զի այն սեր հաստատակ է և մեղաւորաց և հեթանոսաց. այլ գերբնական սիրով, որով սիրեմք զամենեսին. զի ամենքիսն ոյ արարածք են, և առհասարակ պատուական արեւամբն քան զնեալս, և կարգեալս որպէս զմեզ միաբան թագաւորել ընդ նմա յաւիտեան յերկինս. իսկ թէ անհաւասար և անգիջ մեղաւորք անձամբ զամենիսն զրկին, մեր փութացուք ածպաշտութիւն և սիրով զամենիսն ապրեցուցանել։ Զնոսա զամենեսին զմեզ ջանալ լինել կատարեալ յայս սեր ընկերին, որպէս հայրն մեր երկնաւոր կատարեալ է։ Լեր դնել մեր առաջի օրինակ, առ որ ոչ երբէք կարելիք հասանել. որպէս զի ի զրօնս այսր սիրոյ ոչ երբէք շատացեալ մեր՝ միշտ յառաջադէմն նկրտեսցուք. * Լդերուք դուք կատարեալք. որպէս հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։

Զմանիք՝ ընդ որս և կաղմեսս, համարին թէ սատանայապատ Զ զվարդապետութիւնն զոր ասաք ի վերայ լերին. և թէ մեացեալ բանքն նշանակեալք սատանոյ ի վեցերորդ և լեւոմներորդ գլուխս առաքելոյն ոգին մատթէոսի՝ խորհրդով կցեալ են ի նոր աւետարանին, առ ի միացուցանել զամենայն զգլխաւոր վարդապետութիւնս զոր ասաք Զ ի բարեկարգութիւն և ի կանոնաւորութիւն վարուց մերոց յայլեւայլ ժամանակս. որոյ թէ իցէ կցուրդն այն՝ մասն այլուամ քարոզուէ, զոր խոսեցաւ Զ այլ

անգամ՝ 'ի լաւ համբերն ժողովրդեան՝ * 'ի տեղի մի տափարակ ||, զորմէ խօսի զուկաս. (գլ. Չ. 17.) Լու-թէկիա մարթի է տափարակ տեղեաւն իմանալ ըզ-հարթի և զհովտաձև դիրս ընդարձակ լերին, և պիտակս 'ի մի ժամանակ ձգել զգրեալսն 'ի մատթէա-ոէ և 'ի զուկայ, այլ կամելով մեր պարզել զկարգ մեկնութենն կացինսսի՝ հարկիսէք իմանել առ ժամն ընդ յոմ 'ի լեռնէն։

ԳԼ. Բ.

Լուծչիութեան բարոյի 'ի Յն։

* Լայ իբրև եկ 'ի լեռնէ անտի, գնացին զնմի հոգ ժողովուրդք բազումք։ Լու. ահա մատուցեալ բորոտ մի երկիրպագանէր նմա ||. (մատթ. Ը. 1. մինչև 'ի 5.)

* Գայ առ. նա բորոտ մի, աղաչէր 'ի ծունր իջա-նէր ||. (մարկ. ա. 40. յգիրքդ գլխոյն։)

* Լու. եղև 'ի հասանելն նորա 'ի մի քաղաքացն, ահա այր մի լի բորոտութիւբ իբրև եռոս զնա, անկեալ 'ի վերս երեսաց աղաչեաց զնա ||. (զուկ. Ե. 12. 17.)

Յա բժշկել զբորոտ մի, զոր միաբան պատմին երե-քին աւետարանիչք. մատթ. մարկ. զուկ. այլ ըզ-ժամանակն մատթէոս միայն գրէ, յասելն. * Լայ իբրև եկ 'ի լեռնէ անտի ... և ահա մատուցեալ բո-բոտ մի երկիր պագանէր նմա և ասէր ||։ Յայտ արարեալ թէ Հն յետ ուսուցանելոյ զարշակերտսն 'ի վերայ լերին որպէս առաք, իբրև եկ 'ի լեռնէ անտի՝ ունելով զնոսա իւր զբազմութիւն ժողովրդեան, ահա մատուաւ այր մի տառապեալ, յոմից մինչև ցգլուխն հարեալ զաղիր բորոտութիւբ. որ 'ի ծունր իջեալ երկիրպագանէր նմա և ասէր ցաւագին. տէր, եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել։ Լայ ազէրս հա-

մեռաւ՝ այլ Ձոխ հաւատով՝ բուսական եղև շարժել զանձնապու

լսել զվարդապետութիւնն նորա, և մնասուցանել առնա զամենայն հիւանդս իւրեանց, մինչ ոչ ևս կարող լինել նմա յայտնապէս 'ի քաղաք մտանել. այլ սակս անհամար բազմութեան՝ որ կսխոտէին զմիմեանս, և բազու

թու անցանել նմա ընդ արտաքսայս, ոմանք յաչս կկերտաց նորա քաղցեան, և սկսան հասկ կորզել, շփել ընդ ափ և ուտել։ Դատան անդ ոմանք ի փա-բիսեցւոց, որք միշտ հետամուտ էին Յիսի գտանել ինչ ի նմա, զի շարախօսեսցեն զնմանէ. որքա ցու-ցին զայնմանիկսն զգործ՝ որպէս հակառակ օրի-նաց շաբաթու, և ոմանք յայնմանէս ասասին ա-շակերտացն՝ թէ զինչ գործէք. այլք մեղադիր լի-նէին վարդապետին թէ զիարդ թոյլ տայ նոցա առ-նել զոր չէ արժան ի շաբաթու։ Ասէ զայրանան ընդ կորզել աշակերտաց հասկս յանդոց օտարի. քանզի կարի յայտնի էր ճոխային օրէնքս, որ թոյլ տայր ի պահու անցանելոյ ընդ այգիս և ընդ անդս այլոց՝ ուտել ի խաղողոյ այգւոյն, և հասկս յանդոց. բայց ոչ քաղել և տանել. և ոչ դիտմամբ երթալ առ ի ուտել, այլ միայն ի բերել ճանապարհի ընդ այն անցա-նելոյ. վասն այսորիկ ասացաւ չպատել ցանկալ զայ-զի և զանդս առ ի խափանել զանցս։

Լուրդ փարիսեցիք զկորզելն զհասկ և զշփել ընդ ափ յաւուր յայնմիկ՝ սոգտանեն իբրև գործ ընդդէմ պահպանութեան շաբաթու։ Պատասխն Յիսու առ ի բան-նալ զզայրանալսն նոցա՝ ոչ պատուիրեաց աշա-կերտաց իւրոց մի և այլ կորզել հասկ յաւուրս ազ-նից, այլ կամեցեալ ցուցանել թէ լուսնի տեղի այն նախանձայուզութիւն նոցա, յուր արար նոցա նախ զօրինակ դաւթի, որ մտեալ ի տունն այ անս և ե-կեր, և եւ ընկերաց իւրոց ուտել զհացն առաջաւո-րութեան, զոր չէր օրէն ումեք ուտել, բայց միայն քա-հանայից։ և երկրորդ՝ զօրինակ քահանայից՝ որք ի տաճարին պղծէին զհասարակ օրէնս շաբաթու, և ոչ մեղանչէին. վասն զի այնպէս կամիր առ ի փառս իւր նա, որ նոր է շաբաթու։ Դու յաւել, բայց ասեմ ձեզ, զի մեծ քան զտաճարն է ասա. եթէ գիտէիք թէ զինչ նշանակէ ասացեալն մարգարէին՝ զողորմութիւն կամիմ և ոչ զզոհ, ապա ոչ դատապարտէիք զանպարտս զայսոսիկ։ Տ՝ աբաթի վասն մարդոյ եղև, և ոչ էթէ մարդ վասն շաբաթու. որ է որդի մարդոյ և շաբաթու։ Զայսոսիկ ասելով յայտնի կա-

ցոյց, թէ ինքն իսկ է, որ որպէս ասէ՝ ոչ զոլով շաբաթու՝ թոյլ տայր քահանային 'ի շաբաթուն զործել զործս բազումս 'ի զոհս առ 'ի փառս իւր, և այժմ եւ նովին իշխանութիւն թոյլ տայ աշակերտաց իւրոց կորզել զհնակ, և չիթել ընդ ափ։ Լոյս այնպէս պատանձեցոյց զփարիսեցիս։

||Բ՚ն ՝Ի ուիկաս ասէ թէ այս եղև * 'ի շաբաթու երկրորդումն առաջնոյն ||. որ գժուարիմաց ինն է։ Հաստատ ասեն թէ երկրորդ շաբաթ առաջնոյն կոչի ուխերորդ օր հրեական ածոից. այլք թէ առաջին օր յետ զատկին. ոմանք թէ ամենայն շաբաթք անմիջապէս զՏեառն եկեալք ամենայն ածոից. ոմանք թէ է մի 'ի փոքր ածոից, որպէս են ասասցուսիք. ոմանք թէ է առաջին օր, ոմանք թէ երկրորդ օր. ոմանք եւ թէ ուխերորդ օր պէնտեկոստէի. բայց ամենեքին գժուարութիւն մեծ կրեն 'ի հաստատեցուցանել զկարծիս իւրեանց։ Բայց ամենայն մեկնութիւնս յանկարգոյն թուեցան մեզ մեկնութիւնն կաղենոսի. զոր բացատրել այսպէս։ ՝Լսեր՝ ասէ հաստատի հաստատիմ, թէ այս շաբաթ երկրորդ առաջնոյն՝ ոչ էր որպէս և իցէ օր ածոի. այլ յատկապէս շաբաթ օր. վասն զի ասորեւ 'ի 6. հանդէր ասէ. * Լոյս եղև 'ի միւսում շաբաթուն ||. յորմէ յայտ է թէ խօսի զուցա վասն Ճշմարիտ շաբաթուց։ Լրկրորդ հաստատի հաստատիմ ասէ, թէ այս շաբաթ երկրորդ առաջնոյն ոչ անկանէր, եթէ ոչ յամին միանգամ։ Բայանի երևի զի աւետարանիչն կամի ցուցանել որոշ զօրն, յորում եղև այս բան. և ոչ լինէր որոշ օրն, եթէ յամին բազում անգամ անկանէր։ Լրրորդ՝ հաստատական համարիմ թէ էր առաջին շաբաթ զկնի ասնի պէնտեկոստէին։ Լարի հաստատելի է թէ երբայեցիք 'ի ածոացուցն իւրեանց զշաբաթս բուռ ասեմ հաստատեցեալ թէ, ՝ի որում մեր թուեմք զկիրակէ զկնի զլեառ ածոից. զորօրինակ ասեմք առաջին, երկրորդ, երրորդ կիրակէ զկնի զատկին, զկնի պէնտեկոստէի։ ||| ։ Լրրայեցիք զամն եկեղեցական ինամեալին 'ի զատկէ. և յետ զատկին բուռ ածադիր օրինաց թուէին եօթն եօթնեակս 'ի կա-

տարել զտան պէտեկոստէի։ * Լսօմն Եօմնեբորդս
համարեսցիս քեզ՝ ի սկսանելոյ մնդգաղի քո յոՀ.
(թ. օրի. ԺՂ. 9.) Վասնայդ զտաուցեալք յայլ
և այլ դասակարգութիս, ի շաբաթու մտանելին ի
տաճարն յեօթնօրեակ պաշտօն իւրեանց. և այս թ
ամն ողջոյն։ Լսպա հաւատի է, թէ կարգաւ ինն
թուելին զշաբաթս. և կարի հաւանելի է թէ սկսա-
նելին թուել ի գլխաւոր տօնից. սկսեալ ի զատկէ՝
ասելին շաբաթ առաջնոյն երկրորդ ԿԲ մինչև ցեօթ-
նեբորդ։ Լսպա զկնի պէնտեկոստէի գարձեալ սկսա-
նելին թուել. և փոխանակ ասելոյ առաջնին, երկրորդ,
երրորդ շաբաթ զկնի պէնտեկոստէի, ասելին՝ որպէս
երևի ի բանէ ոստի զուկասու, շաբաթ երկրորդ
առաջնոյն. այսինքն գարձեալ առաջնին, գարձեալ
երկրորդ, գարձեալ երրորդ ԿԲ. մինչև ցտան տաղա-
ւարահարաց. և յետ այնորիկ ասելին շաբաթ եր-
բորդ առաջնոյն, երրորդ երկրորդին ԿԲ. այսպէս
բարեխելին զտան եկեղեցական։

Լյս մեկնութիւն գեղեցիկ միաբանի ընդ բանից
աւետարանին. վասն զի ի կափառնաուամ ուր էր յայն-
ժամ ՀՆ՝ իսմ՝ ի վերջին հիւսիսային մասին հրեաս-
տանի, գժուարին էր յատաջ քան զպէնտեկոստէ,
ցորէնոյ արտօրէից այնպէս ատաբանալ, մինչև կա-
բելի լինել որոշել զհատս ի մշեղից. որպէս զկնի
պէնտեկոստէի։ Վ ասն որոյ երևի թէ այն անցք
եղին յերկրորդում շաբաթու զկնի տօնի պէնտե-
կոստէի։

Լ. յաջորդ, կամ որպէս ասէ սրն զուկաս, ի մի-
ասում շաբաթու՝ եմուտ ՀՆ անդ ի կափառնաուամ՝ ի
ժողովրդանոցն, ուսուցանել զիւր ածային վարդա-
պետութիւն։ Լսւ էր անդ այր մի, որոյ աջ ձեռն գո-
ասցեալ էր. փարիսեցիք որք ի նախընթացս շաբա-
թու յանդիմանեցին զաշակերտսն վասն կորզելոյ
հասկս յաւուր յայնմիկ, գիտելով զգութ ՀՆի ա-
այսպիսի սխալանաց, ոչ կարէին հաւատալ թէ
հանդուգնաբարեսցէ թողուլ զեղկելին յայն տաղաւարտս
մինչև զյաջորդ օր. ուստի ասասէին տեսանել եթէ
բժշկիցէ զնա ի շաբաթուն, առ ի չարախօսել ըզ-

նմանել՝ թէ լուծանել զաղբաթս։ Եւ՝ յանդգնեցան իսկ հարցանել նենգաւորքն, եթէ պարտ իցէ՞ ի շաբաթու բժշկել. եթէ ասէր Յիսուս այո, զպարտութիւն գնա՝ զենդգէմ օրինաց ուսուցանել. իսկ եթէ ասէր ոչ, դատապարտէին զնա, թէ զայն ինչ առնէ, զոր ինքն խոստովանի թէ չէ օրէն։

Եւայց կարի յանդուգն և մարդկային չարութիւն, մինչև կարծել զէմ ունել ածային խմատաւթեն։ Եւակ Յիսուս հեղգաբար էառ նոցա պատասխանի փոխադարձ հարցմամբ. զինչ արժան է ասել գործել՝ ի շաբաթու. բարի ինչ առնել, եթէ չար գործել. ապրեցուցանել՝ եթէ կորուսանել. նոքա քաջ տեսանելով՝ զի գովելի է բարեբարեաւ ընկերին՝ ի շաբաթու. ուստի չդիտելով թէ զինչ պատասխանիցին, լռեցին։ Յիսուսժամ ասէ յիւրոցդեսուն. արի, յաւանջ մնասիր, և կաց ասա՝ ի մէջ. և հայեցեալ շուրջ զամենեքեանսն զայրագին՝ տրտմեալ վասն կուրութեան սրտից նոցա, ասէ պատկառեցուցիչ բարբառով. ձգ է՝ ի ձեռն մարդ, որոյ իցէ ոչիսար մի, և դէպ լեցի նեղին անկանիլ՝ ի խորխորատ՝ ի շաբաթու. մի թէ ոչ փութացցի բռնն հարկանել, և հանել զնա՝ ի վեր։ Եւակ արդ արտաքոյ և առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է՝ ի շաբաթու բարիս գործել։ Եւ դարձեալ ասէ ցնա իշխանաբար, ձգեա զձեռն քո, և նա ձգեաց. և առժամայն բժշկեցաւ. և եղև ողջ իբրև զմիւսն։ Փարիսեցիք՝ ի յայտանաւելիս պանդեղեաց ասան փոխանակ գառնալոյ և ճանաչելոյ զնա մեծիս Ճշմարիտ ոճ և մարդ և երկիրպագանելոյ նմա, առաւել՝ ի խոստովանութիւն կրթեալ՝ լի չարանախտոնձ մտածութեամբ էին արտաքս, և ժողովեցան՝ ի խորհուրդ հերոդիանոսաց հանդերձ, թէ զիարդ կորուսցեն զյիս։

ԳԼ. ԺԲ.

Յս բժշկի զբաղմունս. յոր ի պիտանութիւն գ իսրայելացւոյ։ Այսուհետև պիտանիանան։ Մանաւանդ ի գործս։

* Լու Յս իբրև գիտաց, մեկնեցաւ անտի, և գնաց ցին զՏէր նորա Ժողովուրդք բազումք. և բժշկեաց զամենեսին ‖ ՚ԼԸ. (մատթ. ԺԳ. 15. ցվերջ գլխոյն։)

* Լսակ Յս աշակերտաւքն խրատուք գնաց 'ի Ծովեզին. և բազում Ժողովուրդք 'ի գալիլեացւոյ երթային զՏէր նորա և 'ի Դեկապատանէ և յԵրուսաղէմէ ‖ ՚ԼԸ. (մարկ. Գ. 7. 20. ցվերջ գլխոյն։)

* Լու հանեալ զեռ մի համբ ‖ ՚ԼԸ. (զուկ. ԺԵ. 14. մինչև ց37։)

Յս իբրև բժշկեաց զձեռն գօսացեալ, ել 'ի քաղաքէն կափառնաումայ, և որոկս ունէմք 'ի սիրն մարկոսի՝ գնաց աշակերտաւքն խրատուք 'ի Ծովեզին, այն է Ծովակն գալիլեայ. ցուցանելով զՏեղուանէ իւր նախագուշակեալ յեսայեայ մարգարէէ. (ԽԲ. 1.)

* Լնդա մանուկ իմ զոր ընտրեցի, և սիրելի իմ ընդոր հաճեցաւ անձն իմ, ‖ այլովք հանդերձ. զոր սատ նշանակէ սիրն մատթէոս։ Լազմուէ յոյժ Ժողովրդք գնան գնացին զՏէր նորա. և զամենայն հիւանդս որք էին 'ի նոսա բժշկեաց Յս. և պատուիրեաց զի մի յայտնեսցեն թէ ուր իցէ։

Յայնժամ մատուցաւ առ նա այր մի կոյր, համր, և դիւահար. և կենդանարար բժշկեաց զնա առժամայն յերից անտի մեծամեծ չարեաց. զդէն եհան, և եհատ նմա տեսանել և խօսել։ Օ արմացան ամենայն ժողովուրդքն. և որք տակաւին ոչ հաւատային 'ի նա, ասէին, միթէ սա՞ իցէ մեսիան որդի դաւթի

որում ապաստանին։ Իսկ փարիսեցիք իբրև լուան զայն, եւ առաքել կամացեցան, եւ սկսան հաւաքել զնա խորհրդակից ելեղբարդայ իշխանին գիւաց. որպէս թէ նորա զօրութիւնն իշխէ ի վերայ դիւաց։ Եւ զամենայն տիրական արանցելոցս օծուածոց որ հնար չկար յանձախել՝ եւ բան զեւ հաստատանին գլխիմեան, ձգեաց առ փրկիչն ի ծայրէն անդր զանհամար ժողովուրդ յամենայն ազգաց՝ յերուսաղէմ, յայնկոյս յորդանանէ, եւ ի կողմանցն տիւրոսի եւ սիդոնի. և մնասցու առ նա այլ ոմն գիւաւոր, որ ոչ էր կայր, այլ միայն համբ։ Զոր եհան զգեան, և նոյնժամայն բռնեցաւ համբն, և զարմացաւ ժողովուրդն. բայց գասն և անդ ոմանք, որք նոյնպէս հայհոյէին զնա իշխանաւն գիւաց հանել զգեան, մնասանդ գպիրքն որք յերուսաղէմէ եկեալ էին։

Եւ նա, և այլ այսպիսի զրոյցք յիմարութիւն թէ գեղ գոյ ի նմա, կամ թէ և ինչն իսկ մոլեգնեալ իցէ, այնչափ սփռեցան ի թշնամեաց նորա, մինչև եհան և յանկնիս իւրոց ազգականաց, զորս որ գիրն բան իւրում սովորութիւն եղբարս կոչէ. որք և եկին հանել զնա ի միջոց բազմութիւն ժողովրդեանն, զի մի անպատեհ ինչ գիպեսցի նմա։ Եկին ոչ նոքա և ամենեքեան մայր նորա, բայց ոչ այնպիսի մոլար կարծեաք, այլ փարիսեցւոյ սեանեալ գնա, պաշարեալ, և բանեալ զնոցանէն մարդապետութիւն նորա։ Յայնմանէ էին առաջի Հոգի ամենայն զաղանիք խորհրդոց և արարչի. և գիտէր զի գպիրք և փարիսեցիք գուն զարծեին հաւանեցուցանել զինքեանս և զայլս թէ զօրութիւն իշխանին գիւաց հանել զգեան, խայտառակեաց առաջի ամենեցուն զլեռին առութիւն գատաղանութիւն նոցա, արիութեան թագաւորութիւն, քաղաքի, և տան. յորս եթէ անկցի երկպառակութիւն և բաժանումն, բակտին և կործանին։ Զոր ասէ և ասէ, թէ առանձնոյ գաստանոյ հանել յանձն իւր բաժանեցաւ. արդ զիարդ կացցէ թագաւորութիւնն նր։ Եւ եթէ ես բ ելեղբարդաւ հանեմ, ուստակերաք իմ որդիք խարդեալի որք առ ձեզ ծնան, և ծանոթք են ձեզ՝ ոյր զօրութիւն, կամ յոյր անուն հանեն զգեան,

ոչ ասպաբէն լոկ կուսմամբ անուանն իմոյ. վասն այնր-
բիկ նորա եղիցին գաստատարք և գաստատարաղ-
հայհոյացք, որք զրպանելիս իմ՝ բիւրեղբուղոյ ընծայ-
էք։ Այլա եմեն հոգով ոչ հանեմ զդեռ, պարտ է
ձեզ ի միտ առնուլ թէ հասեալ է ազբայութիւն ոչ,
այսինքն մեսիայն թագաւոր եկեալ է. և ի միջի ձե-
բուն բնակի. որ եան իսկ եմ։ Օ խորդ կարելի ես
վանել զատանայ, և յափշտակել զաւուր նորա,
եթէ չէի հղօրագոյն քան զնա։ Ոչ ոք կարէ որ
մատանել ի տուն հղօրի, և կողոպտել զկարասի նո-
բա, եթէ նախ չկարիցէ կապել զհղօրն, և ապա ըզ-
տուն նորա յափշտակիցէ։ Զուրբ փարեսեցիքդ իբրև
զիտակք օրինաց և մարգարէից՝ նախ բան զայլս պարզ-
ատական էիք հաւատալ յիս, և միաբանիլ ընդ իս.
արդ որ ուրեմն զայսպիսի պարտս և ոչ միաբանի,
թշնամի է և հակառակող, որպէս ինձ՝ նոյնպէս և
մեմնարատութիւն. ուստի և ցրուող՝ որ ոչ միաբանի ընդ
իս ի ժողովել։ Զսէրդ ձեր զօրհանապարհ, թէ զ-
բուրեալ այսոցն պղծոյ իցէ իմն նշանագործութիւն, և
ջանայն ձեր զնոսն ուսուցանել և այլոց՝ զի ասատ-
նայի ասացին զայսոսին և զլուսաւոր սրանելիս՝ զորս
յայտ յանդիման ցուցանեմ գործել հոգւով սրբի, և
հայհոյութիւն անուանելի։ Զայլ մեղք և հայհոյութիւնք
առ հասարակաւորս տարս նեռելի են, և նոցն իսկ հայ-
հոյութիւնն ընդդեմ մարդկութիւն իմոյ՝ նեռելի գասանի
առ հասարակութիւն հայհոյութիւն ընդդեմ հոգւոյն
սրբոյ։ Զայսոսիսն ոչի հայհոյութիւն, և այսպիսի մեղք
ընդդեմ հոգւոյն սրբոյ ոչ թողցի ոչ յայսմ աշխարհի,
և ոչ ի հանդերձելումն։ Ինձ է յոյժ չարութիւնն
ձեր, և այն ինքնամարտ հակառակութիւն։ Զթէ զրանս
չելիս իմ խոստովանիք բարի, ապա բռնադատիք
խոստովանիլ թէ ի հոգւոյ բարւոյ յառաջ գան, և
ոչ ի չարէ, որ է իբրև ծառ որ բերէ զպտղոսի բարի
պտուղս. ապա թէ գատապարտիք զծառն, ասիպիք
գատապարտել և զպտուղս զրպանելիս իմ։

Զասակ անդ նոն, * Զմենայն մեղք և հայհոյիք
թողցին մարդկան. բայց զհոգւոյն հայհոյութիւնն մի
թողցի։ Զա որ աք ասիցէ բան զորդւոյ մարդոյ՝

թաղցի նոնս. բայց որ զՀոգւոյն սրբոյ ասիցէ՝ մի թաղցի նոնս. մի յայտմ աշխարհի և մի ի հնոյն կերպութենէ. չէ պարտ այնպէս ասել, ոչ թէ ոչ որ յայտիցանէ՝ որք երբեմն բանս Հայոց թարգմանեն զՀոգւոյն սրբոյ, կարող իցէ այնու հետև փիլիսոփայել զասելոյ։ Ի հաւատոյ է, թէ մեզ ազատութեան նաև յետ այնպիսի ծանրոց մեղաց՝ կարէ զառնալ, և պարտական իսկ է զառնալոյ. և ոչ պակասին նոնս եղաստոյ առ. ի զարձ. և զառնալով որպէս արժան է, առանց անդրէն զնորն. և հաստատուն մնալով ի նոնս մինչև ի մահ, փրկի։ Զինա, որ հարք և մեկնիչք յայն միտս են, թէ և ի զգալոց անտի և ի փաթեանցուց Հայ հոյլայց եղեն ասանք՝ որք յետոյ զարձան առ Աստուած՝ քարոզութիւն փրկչին, կամ առաքելոյ։ Հաւատի է թէ Ոչ այսպէս խօսէր առ նոսա ի Աստուածութիւն փրկութիւն նոցա։ Այլ զայսպիսի բանս պարտ է խմանալ՝ ոչ բան միտրան հաւատութիւն սրբոյ հարց խմանալ որ եկեղեցի՝ քարոզական ընդ հանրականութիւն, թէ յայսպիսի հայհոյլայց կարի տակաւ լինին, որք Աստուածապէս զառնայցին և փրկեսցին։ Այլ մեզ ընդ մեջ մնասն մեծագոյն անդիտութիւն, և տակաւ մտադրութիւն։ մեծագոյն ակարութիւն, և նուազ արհամարհութիւն սրոյ։ որպէս ոչ այնպէս ամբարիշտն դարձեալ զարդանութեանն սրոյ. այլ ոչ ինչ հայհոյութիւն, և ընծայել ատանայի զոր յայտնապէս զարձել հոգին նոր, ոչ ընդունելի զայսպիսի պատճառաւս։ Հայհոյութիւն է մեզ լոկ ի չարութիւն. որ զարձի կատարեալ մտադրութիւն, և ծայրագոյն արհամարհութիւն սրոյ. ուստի և ցուցանել ի հոգին այնպիսի կարութիւն, և այնպիսի խառնարարութիւն, որ հակառակ կոյ ամենայն ազգաբանական եղանակից ուծայնին գերբնական նախախնամութիւն. վասն որոյ և գժուարին է յոյժ թէ այսպիսի հոգի զառնայցէ, և փրկութիւն հասանիցէ։ Ի՞նչ պատարատ է ասալ զՀոգութիւն, նաև այսպիսեաց, եթէ Աստուածութիւն զզջմանէ խնդրեսցեն. բայց ամենարարաբար ոչ ասայ, զի ամենարարաբար ոչ խնդրեն Աստուածութեան ապաշաւանաց։

Ա՛ինչեա զայս խօսեալ Ոչ, կին մի ի բազմութենէ

անսի ժողովրդեան ձայն եբարձ լի՝ որ իմն բղձակա-
նութիւն և ասէ. երանի է որովայնին որ կրեացն զդ-
քեզ, և սուսանցն որ զիեցուցին զքեզ։ Կիսն զՀՐՇ-
մարիան ասաց, որով և թէշտամիք ոմն զասմեթի հա-
բեալ՝ զերկիր նշմարելին կորանօք. այլ Հա՛ ոչ կամե-
ցաւ, զի ունկնդիրքն իւր դարձուցեն զկարհուրդ իւ-
բեանց առ այն երանութիւն, որում՝ ոչ էրբէք կարելին
հասանել. ուստի դարձուցեալ զնա յունկնդրութիւն
իւրոց ուծայնին բանից, ասէ. նա՝ երանի այնոցիկ է,
որ լսեն զբանն նոյ և առնեն. և շարունակեալ զփաբ-
դասկուութիւն իւր՝ յաւել զարժանաւոր յանդիսա-
նութիւն առ չարաբիրտ գպիրս և փարիսեցիս. Ծնունդք
իժից ասէ, ոչինչ են զարմանք՝ թէ դուք հանապազ
չարիս խօսիք զինեն. զի որպէս կարիցէք բարիս խո-
սել՝ լի գոլով չարութիւն. քանզի ի յաւելուածոյ
սրտի խօսի բերան։ Մարդ բարի ի բարի գանձուց
սրտի իւրոյ հանէ բանս բարիս։ Մարդ չար ի չար
գանձուց սրտի իւրոյ հանէ բանս չարս։ Լայց ասեմ
ձեզ, զի յաւուր դատաստանին նոյ հաշիւ ունին
տալ մարդիկ ոչ միայն վասն չարաբանութեանց, և
հայհոյութեաց, այլև ընդ ամենայն դատարկ բանի,
զոր խօսիցին. և դատապարտեսցին կամ պսակեսցին
ոչ միայն վասն գործոց, այլև վասն բանից։ Սովին
սուգ բանիս ազգազգոյն նշանակեաց, թէ որպէսի
սանձ դնել պիտի բերանոց։

Յայտնի վայրի ամենք ի գոլոյս և ի փարիսեցւոց
յայլ հնարս ձեռնարկին. քանզի յաւուրս մատու-
ցեալ՝ ձեռանան որպէս հաւանեալք ընդ բանս նորա,
բայց պահանջին և նորանշան արդիւնս իւրք անհրա-
ժեշտ հաւանեցուցիչս վարդապետութեանն. այս է
ասելն, վարդապետ՝ կամիմք նշան մի տեսանել ի քէն։
Լաւ զի լիրբք էր ձեռ բանից նոցա, խոտիս արար
նոցա պատասխանի տրն. ազգ չար ասէ և շնացող,
այսինքն խորդացեալ ի դատաւորութիւն Հնմարիա խո-
բայելացւոց, նշան խնդրէ. ոչ՝ ոչ ասցի դոցա նշան
բան քանց նոցա. բայց միայն հասանելանն անցից
յոնանա մարգարէին՝ ի կշռատրանս ամպարշտու-
թեան նոցա։ Այն յոնանա ի փոր կիսին գերիս

տիւս և զերիս գիշերս՝ նախանկարելիք զԷն, որ մնալոց էր ի սիրս երկրի զերիս տիւս և զերիս գիշերս. մնացեալսն ի գերեզմանի, և հոգւոյն ի լիմսս։ Այլ այն լոյսն անժխտելի նշան, թէ զպիրքն և փարիսեցիք վաւերապոյն են քան զնեռուեցիս, և ի վերջին դատաստանին նոքա եղիցին ամբաստանողք զսոցանէ, զի ինքեանք զդէցսն և զարձան ի քարոզութենն յայնմանէ. իսկ սոքա ոչ դառնան ի քարոզութենն իւրում, որ անհամեմատ օրինակաւորն է քան զյայնմանէ։

Ի վերայ էած նոցն և զօրինակ դէպ ի հարուց, այսինքն տի կնոջն սորայ. որ ի հեռաւոր աշխարհէ եկն լսել զիմաստութիւն սղոմոնի և ասանել ի նմանէ. իբր զի և նա ի վերջին դատաստանի լինիցի ատոտիկ կշռամբիչ դատս, որք ինչ ոչ չահին ի քարոզութենէ մեռեալին, որ յանբաւս գեր ի վերայ է քան զսղոմոնն։ Այլ ի խորիր ասէ, թէ դուք կրթեալք օրինաւք՝ անասարակայս արդարանայցեք առաջի այ քան զՀեթանոս անգէտս օրինաց. զի որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ի նմանէ։ Եւ լաւագոյնքն յոգեկոյն լինին, յորժամ ասն մեռս ասանայի։ Այլ զայս պարզաբանեալ առակաւ ասանայի արտաքսելոյ յանձնէ ուրուք իբրև ի տանէ իւրմէ։ և ապա դարձելոյ անդրէն ընդ այլոց եօթն չարագոյն դիւաց, երբ մարբեալ և յարդարեալ երևէր տունն այն. որով յեռմին մարդոյն այնորիկ լինի չար քան զառաջինն։ Զատ նմին օրինակի ասէ եղիցի և հրեից. յորոց ի ձեռն հաւատոյ Հնմարիա այն խարսիլն մերժեալ էր գեւ մի, այսինքն գեն անհաւատութեան։ և նին յարդարեալ և զարդարեալ՝ որ օրինաւք և վարդապետութիւնք ուծային գրոց. այլ յեռոյ ի ձեռն չար նախանձու իւրանց և հոպարատութեան ապատամբեցան, և եռուն մեռս քաղմութեան դիւոց։

Մինչդեռ խօսեր Էն առ ժողովուրդսն՝ ազգականք նորա, որք ըստ որում ի վեր անդր ասացաք՝ հոգւոյն յաղագս զարարատութեանցն որք հնչեին զնմանէ, եկին առ ի հեռացուցանել զնա ի վտանգէ

հալածմանաց զարոյց և փարիսեցւոց. ասասկելով չէ
բնել առ ժամանակ մի ի մէջ բազմութեան, մինչև
չիջցի հուրն վառեալ ընդ գէմ նոցա։ Եւ դիրն եղ-
բարս կոչէ զազգականս մերձաւորս բառ սովորութեան
երբայեցական անդ։ Եւ ընդ նոսա և մայրն Յիսուս.
բայց այնչափ բազմութեան խռնեալ կային առ զբան
սանն՝ ուր խօսէր Յս, զի ոչ կարացին մուտ գտա-
նել, և հասանել առ նոսա. վասն որոյ ի ձեռն այլոց
հաւն ազգ առնել, թէ մայրն քո և եղբարք քո կան
արտաքոյ, և խնդրեն խօսել ընդ քեզ։ Յս ետ պա-
տասխանի ասեմ զ ասացն. ով է իմ մայրն, և ով
են իմ եղբարքն. և ձգեալ զձեռն՝ ցուցանելով զաշա-
կերտս իւր՝ ասէ. ահա սորա և նմանեալք սոցա են
մայրն իմ և եղբարքն իմ, զի ամենայն որ առնիցէ ըզ-
կամն Հօր իմոյ որ յերկինս է, նոա է իմ եղբայրն և
քոյրն և մայրն։

Լոյս պատասխանի ոչ նախատեցեալ առնէր զայրս
քան զմայրն իւր, և քան զյակօրեա, զիմն և զյա-
դա զազգականս իւր։ Լայ էր խրատս, թէ զհոգեւոր
սէրն պարտ է նախատեցեալ ունել քան զսէր արեան
և ազգականութեան, և թէ ինքն Յս ի սիրել անդ
զիւր ազգականս՝ առաւել սիրէր զնոսա, զի առնէր ըզ-
կամն Հօր նոյ, քան թէ զի ազգական իւր էին։ Այն-
պէս և վասն մնջն ասայ խմանալ, թէ առաւել սի-
բէր զնոա, զի սէր էր ամենեքին, և կամնկատար նոյ
բոլորովին, քան թէ լոկ զի մայրն իւր էր։ Մինչև
այս պատգամ ազգականաց հասեալ էր առ Յս,
յոմեմ միջոցի՝ կամ յետ այնորիկ շարունակեալ նոն
զնախընթացս իւր վարդապետութեամբ, յաւել ասել
առ Ժողովուրդսն։ Երբեմն ոգի և սիրտ մարդոյ ի
յայտ գայ ի ձեռն արտաքին գործոյ իրրև զնշան.
զոր ոչ լուցանեն զի թաքուցանեն զլոյս նորա, այլ ի
վերայ աշտանակի դնեն. զի ամենեքեան որ ի տանն
իցեն՝ լոյս տեսանիցեն։ Լայս Ճշդագ է ասէ աչք
մնաց մարդոյ. որ եթէ անչարութիւն մարմնոյ և յլա-
սակ հայեցիցէ դիտեսցէ զգործս և զբանս նորա՝ զոր
յիսն տեսանէ, բոլոր հոգին այնպիսոյն լուսաւոր
եղիցի. ապա եթէ չարակենացէ՝ բոլոր հոգին խա-

սարսին եղիցի։ Լաբդ՝ զդէզ լեր ասէ. մի գուցէ այդ կարծեցեալ Ճրագ որ 'ի քեզ է՝ խաւար իցէ. այսմիսն ներբին յօժարութեամբ արարիր 'ի չարն բերիցի։ Լաս վերջ առաւել ՀՅոմ վարդապետութեամբ խրատ, յետ արձակելոյ զարդմանութիւն՝ ետես զմնայրն և զազգակոնս իւր, և սփոփեաց զնոսա. այլ չետա յանձն երթալ ընդ նոսա. զի կամէր շահել զփոարիւնեցին, որ հրաւիրեաց զնա այն օր Ճաշել 'ի տան իւրում։

ԳԼ. ԺԲ.

Լուրն Հոգի 'ի Ճաշ փարիսեցւոյն. զարդ խնդալ ծածկոփէտն զիարդեամ խարնարդս հաց նորա, յանանէ իւրաս օփա-
նար 'ի դէս փարիսեցւոյ առ հասարակ։

* Լաւ մինչդեռ խասէր զայս, աղաչէր զնա ոմն փարիսեցի, զի Ճաշ կերիցէ առ նովա. և նա մտեալ բազմեցաւ։ (զուկ. ժա. 37. մինչև ցվերջ գլխոյն։)

Լաս որք հանարին թէ փարիսեցին այն չարամիտ սուտիր հրաւիրեաց զՀՅս 'ի Ճաշ ընդ իւր, զի գացէ ինչ 'ի նմա սագատանայ արժանի. բայց այդ կարծիքն անհիմն է. փարիսեցիքն թէպէտ ընդհանրապէս խաբեալք չարաբարքն եին և չարամարտանք, բայց գտանեին և 'ի նոսա բարեմիտ և անկեղծ անձինք՝ ուսումնասէրքն և Հշմարտասէրքն։ Հնարաւոր փարիսեցիքն խորամանկութիւն և նենգութիւն վարեին զՀՅսի, ասելով զարդմիջոց սովորաբար յայտնի նշանակին զայդ։ Լիայոյ զայն, զի փարիսեցիքն անմարդիքն ընդ տեսանեին, զի ՀՅս զանցանէ զառանցութիւն իւրք իւրեանց, նոյնժամայն բերանարիր մեղադիր լինէին նմա և բամբասէին զնա. բայց փարիսեցիս այս ոչ արար

ամենայն. ուստի չունիմք հին կասկածելոյ զնմանէ թէ չարամտութիւն հրաւիրեալ իցէ զնոսն։ Զնոսին ի՛ թէ զարմացաւ ի՛ այն, զի Յն նախ ոչ լուացաւ յառաջ քան զբազմիլ ի Հաց. այլ ոչ եթաց զրեբան իւր խօսել ինչ ընդդէմ։ Յն որ զիտէր զամենայն զաղանի խորհուրդս՝ եւ պատասխանի ոչ առ ի զգոն փարիսեցւոյն որ լուռ կայր, այլ առ սիրա նորա, որ խոսեր յինքեան։ Լոյս զիտելով զնոս ունկնդիր բանից իւրոց՝ հմանաձակ խրատել և յանդիմանել ի զէմս նորա և զայլս ի փարիսեցւոց։ Լուսաւ փարիսեցիք ասել այդչափ փութաջան էր ի սրբել զարտաքին բաժակին և զմեակին, և ասկայն նեարքինն ձեր լի է յափշտակութիւն և չարութիւն։ Նմանապէս, ոչ ա պաքէն նոցն ոճն է, որ արար զարտաքինն և զնեարքինն, բայց ազէ յեա այդչափ փոյթ ցուցանելոյ յանդիմանեա իւր, փոյթ կալարուք կատարել և զարժանն պահել զպատուիրանս այդ, և առնել զայն զոր պարտական էք խղճիւ. դարձուցէք զանիրաւ յափշտակուելս, ցրուեցէք զչարաչար ստացեալս. ուստ ոգորմութիւն, և ամ ինչ նոր լինի վասն ձեր։ Լալ վայ ձեզ փարիսեցւոց, զի զպատուիրանապահութիւն ձեր դնէք ի տատանորդել զանանուխ և զփեգենայ և զամենայն բանջար. այսինքն հանել և ի դուռնս քեայ իրացս տատանորդ այդ. և ասկայն անխոիր անցանէք զիրաւամբք և զսիրոյն այդ. բարի է վճարել զտատանորդս. բայց մեծ է ա՛ր արդարութիւնն և սէրն առ ոճ։ Լալ այդ ձեզ փարիսեցւոց, զի սիրէք նախագահն բազմել ի ժողովրդանոցս, և խոնարհք գյարգասէն ողջոյնս ի հրապարակս։ Լալ այդ ձեզ, զի էք իբրև զգեզեցկաշէն գերեզմանս անոյշաս, ի վերայ որոց գնան մարդիկ, և ոչ տեսանեն զնեարքինն նեխեալ փաուլթիւն։

Լինն ի սեղանի անդ և ասանք յօրէնսգէտս վարդապետաց. որոց մի ասն խնամեալ՝ զի ապառնալիսն Յսի և ի նոսա հայէին, ասէ ցնոս. վարդապետ զայդ բանս ասելով՝ և զմեզ թշնամանես։ Լա՛ նա ասէ. և ձեզ վայ օրէնսգէտք, զի բառնայք ի խիղճ մտաց այլոց բեռինս ծանուցեալս և գիտարա-

ղաքն անդ Յեմ իցէ նա մեզաւոր։ Լա ինքն ամե-
նախոնարհ ապաշխարօղն անձամբ հրապարակեաց
զանձն մեզաւոր զոյ՝ իւրով վերհանձն արիական և
յայտնի ապաշխարութիՅ։ Լւ եթէ զայնմակղանիք
իւր յառաջ էին բազմաց ծանուցեալ, կամեցաւ զի
և զդարձ իւր գիտացին ամենեքեան։

Լայսիսի զարձ հանդիսական, այսպիսի զէրա-

զանց խոնարհութեան, և այլևս մի ծամեծ առաքինութիւնք միմեանսն ցուցեալք ի նոսին ասեն՝ հնագոյնքն կատարեալ սիրով արժանացուցին զնա մնանել ի խուսք բարեպաշտ կանանց, մանաւանդ թէ լինել առաքին ի նոսա՝ որք զհետ փրկչին շրջէին։ Լոպա յասել Դեմ ցնա, * Լրեալ ի խաղաղութեան, ոչ հեռացայց զնա յիւրմէ. զի չէ հնար ջերմ ապաշխարող զի հեռանալ ի Դեմ, և ունել խաղաղութեան. այլ էր քաղցրութիւն արձակել զնա ի մանկ անտի առանց արտաքսելոյ յիւրմէ Հանապարհակցութենէ։ Լաւ արժան իսկ էր թոյլ տալ նմա Դեմ զհետ շրջիլ նորա ի քարոզութեան իւրում, քանզի եղև մնագաղենացին որպէս զքոյր ազնուական իւրոյ ազգութեան, և լոկ տեսութեան նորա բաւական էր յապաշխարութեան հրաւիրել զմեղաւորս։

Վասն ասելոյ աւետարանին, * Վայր յեռոյ առաստ նորա։ մեկնիչք և նկարիչք այլև այլ տարբերակս գիրս բազմելոյ ընծայեցին Դեմ, որպէս զի մնագաղենացին յեռոյ կացեալ՝ կարիցէ մերձենալ առաստ նորա։ Վասկոյն հասարակ կարծիքս այս է, թէ նստեալ կամ ի վերոյ սեղանոյ, կամ ի վերոյ բարձի, կամ գորգոյ։ Լաւ զի ի Հնչ անպէս գլխաւոր կոչնականն էր Դեմ. չիք տարակոյս թէ զառաքին տեղին չիցեն առեալ նմա, և ոչ որ այլ կից առ նոսին իցէ բազմեալ. որով յերկուց կողմանց մարթի էր մատչել առ նոս. և այնպէս կիներն ապաշխարող անարգել մերձեցաւ առ նոսա Դեմ՝ ոչ ի թիկանց, այլ կողմնակի փորք մի յեռոյ առ պատկառանաց, և մարթեցաւ համբուրել թանալ և օծանել։

Լոպա Դեմ ցկիներն. * Հաւատք քո կեցուցին զքեզ։ Լոպա վարդապետութեամբ համբարէն որոց հարց, և ժողովոյ և ընդհանուր եկեղեցւոյն՝ լոկ հաւատն չէ բաւական առ արդարանալ. ուստի և Լոյս զարդարանալ որոյ ապաշխարողին սիրոյ նորին ընծայեաց. թողեալ լիցին ասէ սմա մեղք իւր բազումք. ոչ ասէ, զի հաւատաց, այլ զի յոյժ սիրեաց։ Լեթէ հաւատայր միայն՝ այլ ոչ սիրէր, ոչ արդեօք ընդունէր զթողութեան և ոչ արդարանայր։ Լոպա նմա Դեմ, * հաւատք

քո կեցուցին զքեզ։ որպէս սովորութի է ասել վասն երբակ հատանելոյ հիւանդին 'ի դէպ ժամու, թէ այն ողջացոյց զնա. զի թէպէտև այլ դեղք յոլովք 'ի կիր արկանին, առանց որոց լոկ հատմամբ երակին մեռանէր հիւանդն. սակայն և այնպէս այնմ ընծայեմք զառողջութիւն. իբր զի անտի սկսաւ դառնալ 'ի լաւութիւն, և նովաւ տրամադրեցաւ ընդունել առողջարար դեղս հարկաւորս։ Ասա այսմ ասաց և Ինչ ցասաշխարհն, թէ հաւատք նորա կեցուցին զնա. վասն զի այն էգև սկիզբն հարկաւոր, յորմէ յետոյ այլ նեղդործութիք եղեն շահաւորք և փրկարարք։ Հաւատաց, յուսացաւ, սիրեաց և ապաշաւեաց։ Ա։ կարէր ոչ յուսալ, ոչ սիրել և ոչ ապաշաւել 'ի փրկութիւն. եթէ ոչ հաւատայր. * Ինչնար է առանց հաւատոց հաճոյ լինել այ։ Հաւատն որով հաւատաց զԻնչ Ճշմարիտ ՈՒԾ յանսահմանս ողորմած, և կարող, և սիրելի, պատրաստեաց զնա 'ի յոյս, 'ի սէր և յապաշաւ որք, հարկաւոր էին առ փրկութի նորա։ Ա։ ասն այսորիկ ասաց զնա Ինչ * հաւատք քո կեցուցին զքեզ։

ԳԼ. ԻԳ.

Վասն ընդ քաղաքս մտանելոյ. և սատակ տերմանց.

* Լու եղև յետ այնորիկ և ինքն շրջէր ընդ քաղաքս և ընդ գեղս քարոզէր և աւետարանէր զարքայութիւն այ ։ (զուկ. ՇԸ. 1. մինչև 'ի 19։)
* Յաւուր յայնմիկ եղեալ Յս 'ի տանէն, նստաւ առ ծովեզերսն ։ (մատթ. ԺԳ. 1. մինչև 'ի 14։)
* Վասնզեալ սկսաւ աւանդանել առ ծովեզերսն ։ (մարկ. Դ. 1. մինչև 'ի 26։)

Յս զկնի զարձի մեզդաղենացւոյն՝ յորժամ ելեալ 'ի նոյնն քաղաքէ՝ շրջէր ընդ քաղաքս և ընդ գեղս քարոզել և աւետարանել զարքայութիւն այ երկոտասանիւք հանդերձ, երթային զՏեառն նորա բազում կանայք բարեպաշտք ընչաւէտք. յորոց ամենեքեան էին բժշկեալ յայսոց չարաց. մի 'ի նոցանէ էր նշանաւոր ապաշխարօղն նորոգ դարձեալ, որ կոչէր մարիամ մեզդաղենացի. * յորմէ եօթն դևն եղեալ էր ։, ասէ զուկաս. և մարկոս, * յորմէ հանեալ էր (նոյն) եօթն դևն ։. որով տան իմանալ՝ թէ էին սուրբն դաւանալոյց յեօթնն գլխաւոր մեզայ (որպէս ամենք ասել կամեցան). Միշտասակին ասա և յովանա կին բուզայ հաղարապետին Հերովդի, և շուշան, իբրև երևելիք յայն խուռնն կանանց. Վասնզի Յս զի քարոզումն ու լինի ամենայն գիւղաքաղաքս և ընդունելի, յորժամ քարոզիչն Ծանրանայ 'ի վերայ ժողովրդեանն. մարդիկ հեշտասու զանց առնեն զպատուխանական բարեաց, յորժամ վասն կրեն 'ի ժանտնակեանն. իսկ ազգատոհմն յոժարութիւն դիտի 'ի լուր բանին այ, յորժամ նպաստաւորի 'ի կարօտութեան խրատ պատրաստաւոր ազգութիւն։

Յս այս անգամ շրջէր ՝ ի գալիլեա հանդերձ բազմութիւն առաքելոց և աշակերտաց . չէին նմա կամք կերակրել զնոսա հանապազորդ սրանչելեաւք , բայց միանգամայն կամէր՝ զի արդեամբք տեսցեն , թէ թէպէտև թոյլն զամենայն , բայց և այնպէս զինչ պակասէր նոցա ։ Ա՝ ան այսորիկ զիջաւ , զի կանայք ոմանք ընտանեաւք և բարեպաշտք գՀեռ շրջիցին նոքա , և ծառայիցեն ՝ ի դարման իւր և իւրոց ընթացակցաց զայն հարստութիւն , զոր այլք ամենաբաւ յանդգնութիւնս վատանեն ։ Ա՝ յնպիսի և էին այն ոք կանայք , զի հաճեստութիւն , խոնարհութիւն և ջերմ սիրով առեալ՝ կարէին լինել քարոզ և գործակից ՝ ի դարձ և ՝ ի հրահանգս այլոց կանանց ։

Հաւանելի և թէ ասրա հանդարտակութիւն առեալ իցեն շրջիլ գՀեռ Յսի , և պաշտել զնա և զոր ընդ նմա լրջոյց իւրեանց՝ ՝ ի լսելոյ զՀաճութիւն նորա ընդ գործ մտոց գաղնեացայն , զոր ասրաբ ՝ ի ասն փարիսեցւոյն ։ Ա՝ ինչև ցայսժամ և այլ կանայք բազումք բարեբարեալք ՝ ի նմանել՝ հաւատացեալ էին ՝ ի նա , այլ թէրևս նոքն իսկ զերազոյն յարգութիւնն զոր ունէին առ նա , սակաւն իմն և երկիւղ յարգելն արկանէր ՝ ի սիրտ նոցա . ուստի և ոչ իշխէին մերձենալ առ նա , և ընծայել զանձինս ՝ ի սպասաւորութիւն ։ Ա՝յլ իբրև եռեռս մտգաղնեացին զայնպիսի քաղցր զիջուն նորա և զՀաճութիւն՝ զոր հրապարակաւ եցոյց ընդ օծումն ոտից , նոյնպէս և այլ կանայք որք զիտացին զիրսն , համարձակութիւն առին մերձենալ , և զամենայն պէտս զնորայն և զնորայոցն մատակարարել յընտից իւրեանց ։

Ա՝յսպիսի ուղեկցօք գնաց փրկիչն քարոզել ընդ քաղաքս և ընդ գեօղս գալիլեացւոց ։ Ի՝ քարոզութիւն իւր յաճախ ՝ ի մէջ արկանէր առակս , որք էին շարունակեալ այլաբանութիւնք կամ նմանութիւք ասացեալք առանց մեկնողական մանրկանց ՝ ի բացայայտութիւն նմանութեանն . ուստի և մթին էին , եթէ ոչ յաւելցի ՝ ի նոսա բացատրութիւն , որպէս և Յս սովորաբար ոչ յաւելոյր , որպէս զի որոնեցին զայն նմանաբանութիւս որք զիւրաւ տարաւորին ՝ ի յիշո-

զակամն, և ինդրեսցեն զկնիչ զիմաստս նոցա։ Ի քարոզութեան նորա ընդմանային ունկնդիրքն ակսեալս. ամենք լանին անկեղծ սրտիւ և փափաքանաք շահելոյ. ասցա ուրեմն ՀԻՍԱՍԸ մեծութիւնն, մանաւանդ թէ նպաստակը. զի պարտեալ ի մեր զառակն ասէ՝ թագ հնին զոյն, և գայլին հարցանեին ցՆՆ և ցառակեալսն նորա, և լուսաւորեին. որով և այն Հնմնաստութիւնքն լաւ ևս ասպնդային ի միտս նոցա։ Ապա հպարտաբար արդեալս բանագիտաբ անկարողաբ. և ուրեմն էր ՆՆ ի չիմանալ ասցա զառակս, զի ամենեսցեն. և եթէ կամ միցին խմանալ, ասիրեսցին խանարհիլ զիմել առ վարդապետն։ Ապա չարամիտաբ ընդվայրաբնեալք. որք թէպէտ լսէին ի նեմանել պարզ և բացայայտ վարդապետութեան, և տեսանէին զարծել արանելիս մեծամեծս, ասկայն և այնպէս ոչ հաւատային ի նա. և ոչ գային ի քարոզութիւն նորա առ ի շահիլ, այլ առ ի քննել և ստգտանել. վասն ասցա ևս չէին կամք ՆՆի՝ զի խմացին, կէս մի ի պատիժ չարամտութեան նոցա, և կէս մի ի գեղ բժշկութեան. զի ինքն միշտ պատրաստ էր պարգել նոցա զառացեալս իւր երբ և իցէ ի գիմել նոցա խանարհութիւնք և անկեղծ սրտիւ առ նա և հարցանել։ Պատմէաս և մարկոս ի մի հատաւնն զբազումս յառակաց անտի, զոր ՆՆ յայլ և այլ ժամանակս ասաց. մեք ասա նշանակեսցուք ըստ կարգին՝ որով առանդին։

Եղ սերմնացան սերմանել զսերմանիս իւր. և ի սերմանել իւրում էր որ անկաւ առ ճանապարհս. վասն որոյ և կէս մի քարեցան ի թռչնոց, և կէս մի ասից կոխան եղեն. այլն անկաւ յապառաժի ուր ոչ գոյր հող բազում արմատակալ արմատս ի խոր, ուստի և վաղվաղակի բուսաւ. այլ զի չէր բարւոյ արմատացեալ, առ ի չգոյն հիւթոյ երկրին, ի ծագել արևու տապացաւ. և զի ոչ գոյին արմատք, չորացաւ. այլն անկաւ ի մէջ փշոց, բուսան ընդ նոսա և փուշքն, և եղին հեղձուցին զնա. այլն անկաւ յերկիր բարի և պտղաբեր. և նա պտուղ՝ է որ հարիւրաւոր, է որ վեցտասնաւոր, և է որ երեսնաւոր։ Օ ասա ասայեալ՝ կնքեաց ՆՆ և ասաց. որ

ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ. որ է բան յորդորա-
կան առ ի խորհել իւրաքանչիւր ի միտս իւր
զուսանն յօգուտ անձին։ Վասն որ Յն զի ամենք
արհամարհեսցեն զբանն այդ. բազումք լսիցեն՝ բայց
սակաւ շահեսցին. այլք թեպետ շահեսցին, այլ առ
սուղ ժամանակ. այլք ոչինչ քնաւ շահեսցին։ Լաւ
որպէս ինքեան, նոյնպէս ունի զիսիլ և իւրոց պաշ-
տեանցից ի քարոզս թէ աւետարանին։ Սոփին առա-
կաւ կամեցաւ Յն ցուցանել թէ պակասութիւն կամ
ինեանն ոչ է ի բանէն այլ ըստ ինքեան. ոչ յիւրմէ որ
քարոզէր, և ոչ յիւրոց պաշտօնեից որք առ յա-
պայն քարոզեսցեն. ինքն յիւրն կոչմանէ քարոզէ,
և կամի զի քարոզեսցի ամենեցուն անկեղծ սրտիւ
յօգուտ ամենեցուն։ այլ զանազան արամադրութիւք
լսողաց խոտիանեն յանցանօք իւրեանց յամանս
զպատուղ. յամանս զաւանանութիւն. և յայլս զառա-
տագոյն պտուղ։ Օ այս մեկնութիւն ինքեանն է ասեն
ի խնդրել աշակերտաց մեկնել նոցա զառակն. որ-
պէս ասացի զկնի։

Վասնզի զկնի քարոզութեանն իբրև արձակեցաւ
բազմութիւն ժողովրդեանն, խնդրեցին աշակերտքն
մեկնել նոցա զխորհուրդ առակին. միանգամայն և
հարցին՝ թէ ընդէր մինչեւ առակաւ խօսի ամբոխին։
Յն հաճեցոյց զնոսա ըստ երկուցն եւս։ Զի երկրորդ
հարցումն զայս ասաց. ձեզ տուեալ է գիտել յայտ-
նի զիսորհուրդ արքայութեան երկնից, և նոցա չէ
տուեալ եթէ ոչ առակաւ. զի այլ դուցէ, տացի
նմա և յաւելցի. և այլ ոչն դուցէ, և զոր ունիցին՝
բարձցի ի նմանէ։ Զատ այսպիսիկ տուն առակաւ
խօսիմ, զի տեսանեն և ոչ տեսանեն, և լսեն և ոչ
լսեն. զի ոչ միտ դնեն, ուսի և ոչ խմանան. որ-
պէս կանխաձայնեալ էր և եսայեայ մարգարէի,
* Լսելով լուիջիք և մի խմացջիք ։ եւ։ Զայս երանի
տայ աչաց նոցա զի տեսանեն, և ականջաց նոցա զի
լսեն. քանզի բազում մարգարէք և արդարք ցան-
կացան տեսանել զոր տեսանեն նոքա, և ոչ տեսին.
և լսել զոր լուան նոքա, և ոչ լուան. և ապա մեկնել
զառակն սեմմանացանին։ Զ.ՅԼ զի յայտսիկ բան

փրկչին զաստի ինչ ինչ գժուարիմաց, հարկ է նախ պարզել զնոսա, և ապա անցանել յառաջ։

Բ։ասց ցաշակերտսն։ * Զեզ տուեալ է գիտել զխորհուրդ արքայութեանէ երկնից, և նոցա չէ տուեալ։ Որն օգուտինս ի բազում տեղիս ի կիր արկանէ զայս բան, ի նշանակ որդւոց փրկութեանէ, և որդւոց կորստեանն։ որպէս թէ ոմանց հաղորդին խորհուրդք արքայութեանէ երկնից, զի են նախատահմանեալ։ և այլոց ոչ, զի են անարգեալ։ Օ այս մեկնութիւնն՝ ասել կաղինոս, չէ գիւրին հաստատել։ վասն զի ոչ ամենայն առաքեալք էին նախատահմանեալ։ զի ընդ նոսա էր և յուդա։ և ոչ այլ համբերն ունեցեալքդ նոքա էին անարգեալ։ Որոն իւրաքանչիւր, մին հերոնի մա, բեղա, թէոփիլակտոս, եւթիմիոս, և այլք մեկ նեն՝ ասելով, թէ առաքեալք արժանի էին առաքելագործն գիտութեանէ։ իսկ այլք չէին արժանի։ նոքա արժանի էին զի շահեցան ի լսելոյ, և խնայան, և յանկացան լսել և խնամել առ ի շահիլ։ և անկեղծ արտիւ խնդրէին զի լուսաւորեսցին։ իսկ այլք անարժան էին, զի կամ ոչ շահէին, կամ գէթ ոչ խնդրէին լոյս զի խնայցին։ Բ։յս լաւ ևս ծանիցի յորոց ունելոյ ասել զկնի սակաւուց։ Բ։ն այժմ ասեմ, թէ նաև յայլոց ոչ ծածկէին այն ծանօթութիւնք։ այլ հաղորդէին մ մին առակաց։ ուստի և ազատ էին խնդրել, և եթէ խնդրէին՝ ընդունէին զմեկնութիւնս։ Օ այս քաղեմք առաւելագոյնս ի մաթկոսէ և ի զուկայ։ զի ասի, մաթկ։ դ։ * Բ։այց նոցա որք արտաքինքն են, ամենայն ինչ առակաց լինի։ և ի զկ։ է։ * Զեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեանն՝ այլ, բայց այլոցն առակաց։ Իբրզ ասել՝ նաև այլոց տուեալ է գիտել, բայց առակաց։ Զարկ զուկաս։ * զի տեսցեն և մի տեսցեն։ և լուիցեն և մի իմացցեն։

Բ։ազումք ասատ ի կիր առնուն զկանոնս՝ զոր գրոց՝ ուր շաղկապդ էր, ոչ միշտ նշանակէ զվերնականն պատճառ, այլ երբեմն զհետևականն՝ ունելով զգրութեանէ շաղկապիդ [illegible], բայց ի վերայ բերէ կաղինոս, կանոնն ճշմարիտ է, այլ ասատ ոչ զ-

քն։ Կամն զի առ այն հարցուած աշակերտաց, * Ընդդէմ առակաց խօսիս ընդ նոսա ։, ոչ 'ի գէպ զայ պատասխանել, * վասն այնորիկ տեսցին և մի տեսցին ։. այլ քաջ յարմարի շաղկապդ էր, բան նշանակութեան դրդեա՛ էր, կամ ՝Լուռ էր. այսինքն վասն այն առակաց խօսիմ ընդ նոսա, որպէս զի տեսցին և մի տեսցին. կամ վասն զի չանէին տիրապէս միտ դնել, 'ի վերս անդր նշանակեցուցս զպատգամս՝ յոյր սակս ՝Ցս խօսէր առ ամբոխն այնպէս զի մի իմասցին. զմին 'ի պատգամաց անտի տայ մատաղեալս, յասելն. * Օ՛ի տեսանեն և ոչ տեսանեն. և լսեն և ոչ լսեն. և ոչ առնուն 'ի միտ ։, արդ՝ պատիժն այսր մեզաց՝ յառաջ բերեալ 'ի զուսկայ, յոյր սակս տուեալ լինէր նոցա Ծանօթութի մեծին առակաց, * զի տեսցին ասէ, և մի տեսցին ։ ։Յս վասն այսորիկ իսկ յառաջ բերէ ՝Ցս զբան եռայեալ մարգարէի, և նովաւ պարզէ զմեծութիւն. * ։Յս կատարի ասէ առ նոսա մարգարէութիւն եռայեալ. որ ասէ, լսելով լուիջիք, և մի իմասջիք. և տեսանելով տեսջիք, և մի տեսջիք ։ Օ՛ի Թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ. և ականջաւք իւրեանց ծանրանս լուան. և զաչս իւրեանց կապուցին՝ զի մի երբեք տեսցին աչաւք, և ականջաւք լուիցեն, և սրտիւք իմացին. և դարձցին և բժշկեցից զնոսա ։ ։Դադարումն ասէ՝ և ոչ իմանալ, բազումս տեսանել, այլ որպէս թէ ինչ ոչ տեսանել, ոչ այլուստ եղեցի, բայց միայն վասն մեզաց ժողովրդեանս այսորիկ. զի Թանձրացաւ սիրտ նոցա. ծանրացուցին զականջս իւրեանց, և կապուցին զաչս. և զայն արարին ինքնակամ զի մի տեսցին, և մի լսիցեն, և մի իմասցին, և այնպէս ինքնին կուրացան և խստացան և խորշեցան սրտիւ, զի մի գուցէ դարձուսցին և բժշկեսցին յինէն, եթէ միտ դնիցեն և իմանայցեն զայն զոր տեսին և զոր լուան։

Այլ արժան է 'ի միտ առնուլ և ես. ։։ Զերկիրն խօսեցաւ առ ամբոխն և առ բազմութիւն ժողովրդեան առանց մեծութեան պարզ և յայտնի զայն ամենայն, որք առաւել հարկաւոր և պիտանի էին

առ փրկութիւն։ Քանց զանձնէ լինել ճշմարիտ ուժ և ճշմարիտ մարդ. և թէ հարկ է հաւատալ 'ի նա. և թէ հաւատ, յոյս, սէր, և գործք բարիք, և մխիթարական համբերութիւն հարկաւոր են առ փրկութիւն։ Լուայց պարզապէս զպարտս ներելոյ թշնամեաց, առնելոյ զգործս ողորմութեան, զդուշանալ մի առ մարդկան հանձոյից անկանելոյ յանհաւատութիւն կամ 'ի մեզս։ Լուցեաց մարգարիտապէս զմեզս յապաշխարութիւն. ծանոյց յայտնի զիարդ մարդ յարութիւն, զմահ և զվերջին դատաստան. և զծանոյց հանապազ զոր անդ տալոց են զիարդ հրեղեն, զքանցառութիւնս, մինչև զդատարկ բանից անգամ, թազ թէ զգործոց մեզաց։ Ոչ ասեայց և զարբայութիւնն յանանական երանութիւն՝ յոր վայելեսցեն արդարք. և զդժոխս անհրաման տանջանաց, ուր տանջեսցին մեղաւորք. և զվարդապետութիւն իւր հաստատեաց սեթիս և ակնոյանի տեսանելի և անժխտելի արանչելիւք։ Լակ ծանութիւնքն զոր տայր մարթին առակաք, ոչ էին հարկաւոր. այլ պիտանի առ աւանդել լուսաւորութիւն և 'ի կատարելութիւն այնոցիկ, որք չահեին յայլ հարկաւոր վարդապետութեանց։ Հայտնեալ յայտ է թէ բաբգ ղ Գ գրքին, Ի ԲԺԵՆԵՑՆ ԸՆԱ, ոչ նշանակեն թէ Հոգ խօսեցաւ մարթին առակաք, որպէս զի մի գաղանցին ունկնդիրքն. որոյ հետև այնչափ ինչ ասաց և արար վասն գարձի նոցա. այլ նշանակեն զխոտորութիւն նոցա, որք ոչ կամին տեսանել և խոկալ զիրս յայտնիս, զոր տեսին և զոր լուան. և ոչ կամին խորհիլ զայնցանէ, զի յամառեալ զնոցեալ 'ի մեզս իբրեւանց երկնչելին թէ գաղտեսցին. և այնչափ յարեալ եին 'ի չարութիւն իբրեւանց, զի և մինչ գնել անգամ լուսաւոր վարդապետութեանց երկեսցին բժշկին ոչ կամին. զի երկնչեին թէ բժշկեսցին։

Ճ. Փրկիչն մեմնելով զառակս իւրոց աշակերտաց՝ ոչ արգել մնասս հաղորդել զմեկնութիւնն և այլոց, որք դիմեսցեն առ նոսա և խնդրեսցեն լու և ս խնդալ. և այս է՝ որպէս ինձ թուի՝ այն զոր ասաց Հոգ, * Եւ ծածուկ ինչ ոչ խօսեցայ։ Նա՝ այլաւ յայտ

նի հրամայել։ * Օ՜ որ լսիցէք յունկնսն, քարոզեցէք 'ի վերայ տանեսաց։ Լու յայս և յայլ անգամ 'ի խօսել նորա ընդ աշակերտսն միայն, ոչ զաղա կամ 'ի ծածուկ խօսեցաւ ընդ նոսա. զի Թոյլ տուեալ էր նոցա ասել և պատմել որոց ցանկային գիտել զաստուծուն առ նոսա 'ի Քրիստոս։

Ի. Քանել աւետարանեալս * Թէ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա։ ոչ կամին ասել Թէ Քրիստոս միայն խօսէր. այլ Թէ յամենայն քարոզս և 'ի վարդապետութիւնս 'ի մէջ արկանէր առակս։

Լրդ՝ մնայ մեկնել և զայն բան նոսն. * Օ՜ ի այր գուցէ՝ տայցի նմա և յաւելցի. և այր ոմն գուցէ՝ և զոր ունիցի բարձցի 'ի նմանէ։ Օ՜ այս խորհրդաւոր առաած ասաց Քրիստոս զմեզնել զառակն, որպէս ընթեռնուսք առ մատթէոսի. և յայտժամ նշանակութիւն անկանի 'ի վերայ հրեից. զնոսն կրկնել և զքնի մեկնելոյ զառակն, որպէս ունիսք առ մատթէոսի, և առ զուկասու. և յայտժամ նշանակութիւն անկանի 'ի վերայ աշակերտացս։ Լաածն Հշմարիտ է և յայտնի, մեծատանդ աուետաւ լինելն և յաւելանայ. զոր տեսանելոյ յիշխանս և 'ի մեծամեծս, զի առ նոսա հաւաքին հարկք և տուրք և ընծայք, և յաւելուն. իսկ յաղքատաց պէսպէս անուամբք պահանջ մանց քառնի և ստանան այն զոր ունին։ Յմին նմանս, և աշակերտաց՝ որք հարուստ էին ծածկին ծանօթութիւնքն վարդապետութեանց Քրիստի, յընդունելն նոցա սիրով յաւելոյր նոսն և եւ նորանոր ծանօթութիւնս մեկնուր առակաց, ուստի և յաւելցին և Հոխանային գիտութիւնքն առաւել քան որչափ ինչ Հոգիս հարկաւոր էր առ փրկութիւն։ Լայց հրկայք՝ թէպէտև գիտաւոր կարծեցեալք, որք աղքատ էին 'ի ծանօթութենց առաւել կարեւորաց և պիտանեաց, զի ոչ կամէին շահիլ նորօք՝ ոչ միայն ոչ ստանային զայլ նոր ծանօթութիւն. այլև կորուսանէին զտուացեալն. վասն զի 'ի նախանձուն և 'ի հպարտութենէ և յայլոց ախտից և 'ի մոլութենց այնպէս ամբիսեալ էին միտք նոցա, զի և այն տակաւ լոյս զոր ունէին՝ բարձեալ լինէր 'ի նոցանն։

Այս յաւել։ Եւ մանրամասն և զեղեցիկ մեկնել աշակերտաց զասակ սերմանցն։ Սերմն ասէ բանն ոյ է՝ անկեալ ի ճանապարհս։ Ինկալեալն յոտնոն և եթ կամ՝ ի յիշողականն՝ է որպէս ցորեան անկեալ ի վերայ ճանապարհի, որ յափշտակեալ ի թռչնոց, կամ՝ կոխեալ յանցաւորաց՝ ոչ բուսանի։ այսպէս սատանայ յափշտակէ ի մտաց այնպիսեաց, և չար սիրտ և կիրք նոցա կոխեն և ոչ տան բուսանել։ Ինկալեալն վերք ի վերայ՝ այնպէս է, որպէս ցորեան արկեալ յապառաժուտ տեղի։ ուր առ ի չգոյն հողոյ արկանել արմատս ի խոր, ի հասանել ջերմ շողոյ հալածանաց, կամ նեղութեանց, վաղվաղակի չորանայ, և ոչ տայ պտուղ։ Եւ որպէս փուշք յինքեանս ձգելով գիրեի երկրի, զցորեանն սերմանեալ ի մէջ նոցա հեղձուցանեն և ոչ թողուն աճել, այսպէս մեծութիւնք և զբաղմունք և հոգք աշխարհիս խափանեն զուշ և զիսյի՝ զոր պարտ էր ունել ի վերայ բանին ոյ։ ուստի և ոչ պտղաբերել։ Իսկ որք լանն զբանն ոյ ուղիղ սրտիւ, և որձանն զայն, տան պտուղ արդեամբք, է որ հազար, և է որ աւելի քան նմանութեանն բարի և պարարտ երկրի, որ տայ ընդ մեոյ երեսուն, ընդ մեոյ վաթսուն, և ընդ մեոյ հարիւր։ և որպէս բարի սերմն արկեալ յերկիր բարի՝ աճէ և տարածանայ և հասուցանայ կատարելապէս, այսպէս և սորա կան մեծն հասատուն ի բարին, և հասանեն ի կատարածն ցանկալի։

Օ մեկնուի առակիս կիրեն ոչն այլով յորդորակու առ ամենայն աշակերտսն։ որպէս զի մատուցուք լսիցեն և քաջ ի միտ առցեն զբանն ոյ, զի ինքեանք կարգեալ են յայտնել և քարոզել զայն նաև այլոց։ Լուստ իրք տանն ասէ թաքուցանին ընդ կարասեաւ, կամ ընդ մահճաւք։ իսկ ճրագն լուցեալ դնի ի վերայ աշտանակի, զի լոյս տացէ որոց մտանեն։ Եւ ես տամ ձեզ զլուսաւոր վարդապետութիւնս իմ ոչ զի ծածուկ կալջիք ի ձեզ, այլ զի ի ձենջ հրատարակեսցի ընդ ամենայն տուն տիեզերական։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Զաջ զիսասոջիք, զի

զինչ և զիւրդ լսէրդ, զպատ է ձեզ զգաստանալ առնել. զի և նովին չափով, որով ունիցիք նախանձ քարոզելոյ զգանա իմ այլոց, չափեսցի և ձեզ վարձք ձեր, նա՝ բազում առատելութիւն։ Որ որ ունիցի տայցի նմա. և որ ոչն ունիցի և զոր կարծէ ունել, բարձցի ի նմանէ։ Որովհետև առածիս ազգ արար նոցա, զի թէ այժմ հարստանան ծանօթութիւնքդ ոչք յայսնեին նոցա, յետոյ տացին և և այլ յայտնութիւնք. այլ եթէ անփոյթ լիցին զայսցանէ, զոր այժմ ունին, կորուսցին և զոյն լոյս՝ զոր հանաբերին ունել։ Այս վարդապետաւն հարկաւորք է մեզ ամենեցուն. ուժ կանխել և տայ մեզ զլոյս իւր ներքին ազդեցութիւն. եթէ ընկալցուք և բան այնմ գործեսցուք, յաւելցէ տալ մեզ մեծագոյն և աւելորդս, և միշտ հարստանայցէ հոգի մեր. ապա եթէ անփոյթ արասցուք զսցանէ, գուցէ այլևս ոչ ունիցիմք. և նոր մեզոյ կորուսանիցեմք և զոյն փոքր բարիս, զոր կարծեմք ունել։

ԳԼ. ԼԱ.

Այս [illegible] ի [illegible] ի [illegible] ի [illegible]։

* Լոյս տաէր այսպէս է արքայութիւն նոյ, որպէս զի այր մի արկանիցէ զսերմանիս յերկիր։, են։. (մարկ. դ. 26. մինչև 33.)

* Այլ առակ արկ առ նոսա, են։. (մատթ. ժգ. 24. մինչև 53.)

Յն շարունակէր քարոզել ի գալիլեա, առաւելապէս առ եգիպտիս Ծովուն գալիլեացւոց. ուր ինքն նստէր ի նաւի, իսկ ժողովուրդն սփռեալ տարածեալ էին ընդ Ծովափն։ Ի բացի քարոզէր ի պատմութեանս բազմութեան, որք խուռնիրեալ գիմէին ի լուր

ՀՈՅԺԱՅԻՆ բանից նորա. սովորաբար ընտրէր զԵՍովեզեբեայ և զանգործ տեղիս, որք յաւետարանի կոչին անապատ. զի մի մշակեալ տեղիք ոմանակոխ լիցին 'ի ՀՈՅԱ տեսից իւրեանց։ Ասուցեալ էր կանխաւ, թէ զիարդ պարտ է լսել զՀՈՅԺԱՅԻՆ բանս՝ ցուցեալ 'ի նախագրեալ առակս սերմնացանի զպակասութիւն և զբարի պտղաբերութիւն լսողաց, որք խոտիանն կամ յաջողէն զգաւուն։ Հայժմս առակի ցուցանել զներգործութիւն նորա. զի յետ ընդունելոյ 'ի սրտի՝ թէ և քարոզիչք լուսոցն, և ոչ գործեացն և ոչ մատակեցցն, բանն գործէ 'ի սրտի, և տայ զպտուղ իւր. որ 'ի ժամանակի հնոց, այսինքն մեհուն ժողովի ՀԸՆԵՐՄԱՐԱՆն արբայութիւն։ Զայս ասասելս գրեաց յասելն. նման է արբայութիւն երկնից, այսինքն բանն ՀՈՅ՝ սերման, զոր այր մի արկանիցէ յերկիր. և ինքն անդուհետև ինչ ոչ խորհելով զայնմանէ՝ ննջիցէ զգայդ, և յառնիցէ զգերեկ յայլ գործս իւր, առանց այլ և ա ինչ միակուութիւն։ և ահա առանց գիտելոյ կամ հոգալոյ իւրոյ, սերմանիքն բուսանին և աճին. և երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտս, և ապա զՀասկն, ապա զցորեանն ատոր 'ի հասկին։ և առաքի մանգաղ յորժամ հասեալ են հունձքն։

Դարձեալ ընդ անուանէ արբայութեան երկնից զգինուորեալ եկեղեցի իւր նմանեցոյց ազարակի, ուր այր մի սերմանեաց սերմն բարի։ Զայլ այն ինչ 'ի քուն լինելին ասմենեքեան, եկն թշնամին նորա, և ցանեաց 'ի վերայ որոմն 'ի մէջ ցորենոյն և գնաց։ Իսրև բուսաւ խոտն ցուցանել զպտուղ, երևեցաւ և որոմն. ապա մատուցեալ ծառայք տանուտեարանն՝ ասեն ցնա, տէր ոչ սերմն բարի սերմանեցեր յազարակին քում, արդ ուստի ունիցի զորոմն։ Նա ասէ, այր թշնամի արար զայն. ասեն ցնա ծառայքն, կամիս զի երթիցուք քաղեսցուք զայն 'ի քաց. ասէ նոքա. մի, զի գուցէ մինչ քաղիցէք զորոմն, և զցորեանն ընդ նմա 'ի քաց խլիցէք։ Թոյլ տուք երկոցունց աճել 'ի միասին մինչև 'ի հունձս. և յայնժամ ասացից ցհնձողսն, քաղեցէք նախ զորոմանդ

և կապեցէք զայդ խրձունս առ 'ի յայրել. և զցորեանն ժողովեցէք 'ի շտեմարանս իմ։ Յայլում նուագի նշանակեաց զենդաբձակ ծաւալումն եկեղեցւոյն 'ի փոքրիկ սկզբանց, նմանեցուցանելով զնա հատոյ մանանեխոյ, որ 'ի կարգի սերմանց փոքրագոյն հանդիսանալ է. այլ յորժամ աճիցէ, մեծ է քան զամենայն բանջարս և լինի ծառ, մինչև գալ թռչնոց երկնից և հանգչել յոստս նորա։ Օ այս ծաւալումն եկեղեցւոյ յայտնաբանեաց և նմանութիւնք խմբոյ. զոր առեալ կնոջ խառնեաց 'ի գրիւս երիս ալիւր, և խմբեցաւ ամենայն։

Լ. յաջիկ և այլ ևս անբաւ առակք էին խորհրդաւորք՝ անպակաս 'ի կիր արկեալք յերկնաւոր վարդապետէն 'ի քարոզութիւս իւր. որով և ընդդէմ ասացեալն 'ի մերդարէէն. (տաղմ. հէ.) * բացից առակաւ զբերան իմ. և խօսեցայց զառակս 'ի սկզբանէ։ զոր մատեալս փոքր մի պարզելով բերէ. *բացից առակաւ զբերան իմ. բղխեցից զծածկեալսն 'ի սկզբանէ աշխարհի։ Լ. պա զամենայն մեկնեալ պայծառաշաւղեալս՝ յորժամ առանձին լինեալ ընդ նոսա։ Լ. յլ գիտելի է, զի յայսոսիկ՝ որպէս և յայլ առակսն՝ զորս բան տեղւոյն հանդերձեալ եմք յառաջ բերել, չէ պարտ յամենայն բառսն խնդրել խորհրդաւոր նշանակութիւն և խորհուրդ. որպէս թէ մերձեցուցանել զմի մի յայս կամ յայն իր. զի ինչ ինչ յառակսն են գոյացեալսն, յորս է բոլոր զօրութիւն առակին. և ինչ ինչ 'ի զարդ միայն և 'ի վայելչութիւն պատմութեանն։ Լ. յայսմ է յամենայն նմանութիւնս. զորօրինակ եթէ որ կամիցեալ ցուցանել՝ թէ զմեծութիւն աշխարհիս չէ մարթ ունել առանց բազում հոգոց և տառապանաց, ասիցէ. հայեցարուք 'ի վարդն ոսկեփունջ պատկեալ, ծիրանիս զգեցեալ, 'ի գահ կանգուն զմիխտագոյն բարձրացեալ. ով որպէս գեղեցիկ է, որպէս անուշահոտ. բայց եթէ կա միջոց քաղել, գամանս զնա սպառապինեալ խոցոտիչ փշովք։ Եւ պատկն ոսկեփունջ, ծիրանին, նա, են զարդ. բովանդակ զօրութիւն է փուչն խոցոտիչ։ Լ. 'ի գիտել թէ յորմէ իցէ բան զօրութիւնն,

պարտ է հայել թէ յինչ միտս կամ առ ինչ ասաց-
ցան ՝ի Տէրէ։ Ասպարէս յուսալոյն սերմանացանին,
* եւ սերմանացան սերմանել զսերմն։ Եւ. չէ հարկ
խնդրել՝ թէ օրպէս ուստի եղ։ Եւ զինչ է անդ ե-
լանելն։ զի զօրութիւն առաքին հայի ՝ի զանազան վի-
ճակս կամ ՝ի բերս սերմանց բուսս զանազանութեան
երկրի՝ ուր անկան. այսպէս մեկնեաց Եւ Տէր ՝ի վե-
բայ բանին այ բուսս զանազանութիւն լսողաց։ Ասաց-
պէս՝ Եւ ՝ի քուն լինել տանուտեառն, զօրուէ առաւ-
կին ոչ հայի ՝ի նմինէն. վասն զի թէպէտ եւ արթուն
լինէր տանուտէրն, սակայն թշնամին կարէր ցանել
զօրուն, եթէ չէր պահպանեալ ազարտին. նոյնդ
եթէ կին եւ եթէ այր արկեալ էր զմարն, միապէս
խմորէր ամենայն ալիւրն։

Օ այս վարդապետուն քաղեմք յօրինակէ փրկչին. զի ՝ի խնդրել աշակերտաց մեկնել նոցա զա-
ռակ որոնեացանին՝ զկնի գառնալոյ ՝ի ծովեզերէ ան-
տի ՝ի տուն, զիրս իրս զոր ասացեալ էր նորա յասա-
կի անդ, ոչ յիշեաց իրք ոչ պատկանեալ առ խոստ-
թիւն առաքին։ Եւ յիշեաց ասեմ զասել տանուտ-
տեառն ցնառայսն, * թոյլ տուք երկոցունց աճել ՝ի
միասին։ Եւ. զի ոչ դիտէր արդեալ բառնալ՝ թէ
հնար իցէ՝ զգայիակցութիւն։ Եւ ՀՆՆԵԼ Եւ խլել սա-
մանարի որչափ կարելի իցէ զնորաբոյս հերետիկո-
սութիւն։ այլ միայն ուսոյց թէ սերմանողն ինքն է որ
սերմանէ սերմն բարի. այսինքն զնաձոյին բանս. ա-
գարանն աշխարհս է. պտուղ բարի արդարքն են.
որոմն մեղաւորք են. թշնամին սատանայ է. Ժամա-
նակ հնձոց կատարած աշխարհս է. Եւ հնձողքն
հրեշտակք են։ Եւ. որպէս տանուտէրն առաքէ
զհնձողս քաղել զորոմն Եւ կապել խրձունս, Եւ արբ-
կանել ՝ի հուր Եւ այրել, այնպէս Եւ ինքն ՝ի կատա-
բածի աշխարհս առաքեսցէ զհրեշտակս իւր, Եւ ժո-
ղովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղու-
թիւս, Եւ զամենեսին ոչք գործեն զանօրէնութիւն.
Եւ արկցեն զնոսա ՝ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ Եւ
կրճել ատամանց։ Յաւէլ նոքա՝ յայնժամ արդարքն
փայլեսցին իբրև զարեգակն յարքայութենէ երկնից։

Որով յորդորէ զաշակերտսն ՝ի նոսա ունկնդրութիւն, թէ ամենայն ինչ առնելի է առ ՝ի ժամանել յոյս արքայութիւն։

Օ այս ՀԻմարտութիւն յայտնապէսն նմանութիւն մարդոյ, որ գիտելով թէ յագարակի ուրեք ծածկեալ կայ գանձ մեծ, երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, և գնէ զագարակն զայն։ Կամ վաճառականի, որ գտեալ պատուական մարգարիտ մի, վաճառէ զամենայն զոր ունի, և գնէ զայն մարգարիտ։ Զայս գաղտնայ և մեկնէ ՝ի նոսա թէ յերկրի սատանայն են բարիք և չարք. այլ ոչ այնպէս և յերկինս, ուր թագաւորեսցեն միայն արդարք. և զայս մեկնէ նմանութիւն ուսկանի, ուր մոռանին ՀՀունք բարիք և չարք. այլ յետոյ հանեալ ՝ի ցամաք, զբարի բարին ոլորեն և ժողովեն յամանս, և զիսատանն ՝ի բաց ընկենուն։ Զայնպէս եղիցի ՝ի կատարածի աշխարհիս, ելցեն հրեշտակք և մեկնեսցեն զչարս ՝ի միջոց արդարոց. և արկցեն զնոսա ՝ի հնոց հրոյն, և անդ եղիցի լալ և կրճել առատմանց։ և զայս վՀՀառակալի յայսմ համառօտ բանի կրկնէ երկիցս, զի լաւ և ապաւորեսցի ՝ի միտս նոցա։

Զեռ այսպէս պայծառ մեկնէլոյ զառակ որոնեցանին, հարցանել ցաշակերտսն թէ իմացա՞ն զայն ամենայն զոր ասաց։ և յանել նոցա՝ այո, յորմէ Զիս, վասն այսորիկ, այսինքն ասել զի քաջ իմացին բանին՝ ամենայն դպիր, այսինքն վարդապետ քաջահմուտ ՝ի գիտութիւն երկնայինս, նման է առն տանուտէրն որ հանէ ՝ի գանձէ ՀՀ ՝ի հանդերձարանէ իւրմէ զնոր և զՀին ըստ պիտոյից ընտանեաց իւրոց։ իբրև ասել։ քաջ վարդապետն յիրս հոգևորս եթէ կամի գիւրել իմացողութիւն աշակերտաց, չէ պարտ նոնա ՀՀնել զնոսա միշտ նոր և անլուր վարդապետութիւն, այլ ընդ նորս խառնել երբեմն և զՀինս այլ անգամ լուսաւոր և ծանօթս։ որով ոչ այնչափ ծանրացեալ յիշողութիւն, և ոչ կարի վատատակեալ մտացն իմաստնոյ զամենայն։ Զի առացեալ էր աշակերտաց իւրոց զվարդապետութիւն ծանուցեալս ՝ի հին կտակարանս, զորօրինակ զենդհանուր յարութիւն և զհատուցումն

'ի կատարածի աշխարհիս, և զհարկաւորութիւն զգուշանալոյ 'ի պատժոց դժոխոց, և հասանելոյ յերանութիւն արքայութեան. այսոքիկ ծանօթ էին նոցա, զի կան և 'ի հին կտակարանս. սակայն և այնպէս կրկնեալ նոցա 'ի մեկնելն զնորոգ առակին, որ նոր էր նոցա։ {Եւ առ 'ի քարոզիչս յարդարել զաշակերտսն՝ ուստոյց նոցա 'ի վարդապետութիւնս իւրեանց առ ժողովուրդն 'ի կիր արկանել մարգարէութիւնս և վարդապետութիւնս 'ի հին կտակարանաց. այս է * հանել զհին ||. և միանգամայն մեկնել զնորս, զոր ինքն եբեր յաշխարհս, և հազարդեաց նոցա. և այս է * հանել զնոր ||։

{Վերայ սասի ցայս վայր ասացելոց՝ ուսանիցիք, թէ պարտ է մեզ միտ դնել ճանապարհանից անկեղծ փափաքանաւոր շահելոյ 'ի նոցանէ. և ասէպ խոկալ և խորհիլ և պահել 'ի յիշողութիւն և 'ի սրտի. որպէս զի պատուոյն լիցի հաստատուն և բազում։ {Եւ թէ չէ պարտ մեզ քրթմնջել զանճանչն նախախնամութիւն. որ թոյլ տայ այնչափ մեզաւորաց և հերետիկոսաց գայթակղեցուցչաց կալ խառն ընդ բարեաց և արդարոց. և թէ երբեմն տայ ժամանակեան յաջողութիւն և երջանկութիւն նոցա, և տայա վիշտ և նեղութիւն։ Պարտ է յուշ ածել, թէ արդարքն 'ի բազում արդեանց զուրկ մնային, եթէ չարքն չտային նոցա պատճառս 'ի վար արկանելոյ զառաքինութիւնս իւրեանց. առ ժամանակայ երջանկութիւնքն և վիշտքն անցանեն ընդ ժամանակին. աշխարհ ամենայն գառեալ և մնցել 'ի գառատատն ոչ, և փոխեսցին վիճակք յայնմ առնելոյ. նա եղիցի անդ մեծ, որ է սատ մեծատուն հաստատուն, և նոր գործով. ամենայն աղքատ ատատապեալ՝ բարեբաւութիւնք վարուց իւրոց կարող է պատրաստել անձին պատկ յաւիտենական. իսկ մեզաւորքն թէպէտ և լեալ իցեն մեծամեծ իշխանք յաշխարհի, եղիցին յաւիտեան թշուառք 'ի դժոխս։ Օ ամենայն փոյթ 'ի մեջ առնուլ պէտք են՝ ատանալոյ զայն բարի, և ազատելոյ 'ի չարէ անտի։

ԳԼ. Լ.Օ.

Եւ որչափ գաւառեալս տարածել ի գրչութիւն զԵ. Աւետարանս. և ինչ չեռ գեղարուեստն մարդն անցանէր ի նազարէթ, որ գաւառիր լինին նմա ի ջուր։

* Լուս ելեալ քարոզէին՝ զի ապաշխարեսցին. և դեւս բազումս հանէին. և օծանէին իւղով զբազումս հիւանդս, և բժշկէին զնոսա ։ (մարկ. ԺԲ. 12. 13։)
* Լուկին առ նա մայրն և եղբարքն իւր ։ (զուկ. ԺԲ. 19. 20. 21։)
* Լուս եղև իբրև կատարեաց Յիսուս զառակս զայսոսիկ՝ փոխեցաւ անտի և եկեալ ի գաւառ իւր ։ (մատթ. ԺԳ. 53. 54. մինչ ի վերջ գլխոյն։)
* Լուս ասէ ցնոսա. ապաքէն ասիցէք առ իս զառակս զայս ։ (զուկ. Դ. 23։)

Զ Ուկիկտեւ յայտնի է, զի սէր կոյս ՅԱծամայրն ստէպ տեսանէր զմիածինն ի տան և ի քարոզութեանն, այլ զմտնաւոր գալուստ նորա ընդ անուանեալ եղբարս նոցա, զոր ի վերջ անդր նշանակեցաք, կալինաս կրկին երկրորդել՝ իբր նոյնօրինակ հանդիպեալ, ասելով. մինչդեռ կայր Յիսուս և քարոզէր, եկին առ նա Լ՚Ծամայրն և ազգականքն Յ՚նմա. այլ այնչափ բազմութիւն խռնեալ կային անդ ի լուր քարոզութեան նորա, զի ոչ կարաց անցանել և մերձենալ առ նա։ Լ՚Զգ արարին նմա թէ մայրն և ազգականքն իւր կան արտաքոյ և խնդրեն տեսանել զնա։ Յիսուս ոչ արհամարհելով զայցելութիւն մարդն, այլ պատասխան առնեալ անտի, որպէս արար և այլ անգամ, ուսուցանել թէ ոչ զչափ մեծ համարէր և սիրէր զնոսա որք յաժարանք լսէին և կատարէին զգործս զորս ասայ, ետ պատասխանի. ամենեքեան որ լսեն և առնեն զբանս ասայ են մայրք իմ և եղբարք իմ։ Ամբ միտ բա-

նին և, թէ որպէս լինել մայր և եղբայր Յոյն բերէ զանձուկ միութիւն արեան, նայնպէս նա որ լսէ և առնէ զբանն ոչ, ասանայ ընդ նմա զանձուկ միութիւն սիրոյ։ Եթէ գիրն չասէ ներգործութիւն թէ մայրն և այլ ազգականք իւր մուծան առ նա. վասնզի այս ինքնին խմանի առանց ասելոյ պատմագրին։ Լուսաւորման լինի կաղինոս, թէ առ կարի նմանութիւն այսր այցելութիւն, զոր պատմի զուկաս, ընդ այլում՝ զոր պատմին մարկոս և մատթէոս, բազուկք միացուցանէն զերկոսին 'ի մի. այլ ինքն յաւելու, թէ նշան ժամանակին զանազանէ զնոսա։ Լ՚ամ անգամ և կեալ էր ասէ մայրն, մինչ Յոյ յանդիմանելոյ զզբպարաւութիւնն փարիսեցւոց, որք զբանելիս նորա հայհոյութիւն տային գործակցութիւն գիւաց. իսկ այս անգամ եկն մինչ Յոյ քարոզելոյ ժողովրդեան նախագրեալ առակօք։

Մանաւանդ 'ի կրկին նուազս բաժանել կաղինոս զառաքումն առաքելոց 'ի քարոզութիւն. վասն որոյ ասէ՝ թէ յաւուրսն յոյնոսիկ վերստին առաքեաց Յոյ զառաքեալսն քարոզել 'ի շրջակայ քաղաքս։ Լ՚ս այս քաղի ասէ անտի, զի գտանեմք զառաքեալսն ընդ նմա, յորժամ եկ 'ի նային քաղաքն. և ապա գառնան զնի մահուն յոլհանեսու մկրտչին։ Լ՚թէ գառնան, ապա մեկնեալ եկին։ Լ՚ըդ երբ և իցէ՝ առաքեալքն քարոզելին ապաշխարել, և դեւս բառնումն հանելին. և օծանելին իւղով զբազում հիւանդս, և բժշկելին զնոսա։ Լ՚մանր յայն կարծիս էն, թէ այս օծումն տակաւին յայնմ ժամանակի չեկեր խորհուրդ տարմանեալ 'ի Լ՚նէ, և կարգեալ 'ի յաւելուլ զարբարար ընարս 'ի հոգիս հիւանդաց՝ որք իցեն 'ի ծանր վանդ մահու, այլ լոկ ապաքաղութիւն ինն, և նշան ապտարին գործեմ՝ որով առնելին զբանելիս։ Լ՚ս զայս կարծեն ցուցանել. ա. զի ոչ գտանեմք ասեն, թէ խորհուրդ վերջին օծման կանխաւ իցէ կացուցեալ. ապա չէր մարթ մատուցանել զայն։ բ. առաքեալք չեն էին քահանայացեալ. ապա ոչ կարէին մատակարարել։ գ. և դեալ թէ քահանայ էին, ոչ գտանեմք թէ Լ՚

պաշտեալ իցէ զայդ խորհուրդ ումեք. ապա և ոչ առաքեալքն կարէին պաշտել. Զ. չէ օրէն տալ զայն եթէ ոչ միայն հիւանդաց որք են ի վտանգ մահու. արդ եթէ ընդհանրապէս օծանէին զամենայն հիւանդս, ապա էր ստրծոյ մեծի ինն՝ որ զայնչ նշանակէր, և ոչ էր խորհուրդ վերջին օծման. Է. խորհուրդ վերջին օծման թէպէտ է խորհուրդ կենդանեաց, և յառաջին կացուցմանէ իւրմէ կարգեալ է յաւելուլ զնորս. սակայն երկրորդական վարձան նորա է բաւել և զանչայտ մեղան, զոր ոչ Ճանաչէ հիւանդն, բայց գոնէին իրօք ի հոգեւոր յայլ յայտմ մահին գոլով նորա յանցաղթելի ապաւաւթեն, ուստի և չունելով յիւրմէ զդրական անպատրաստութեն, բերէ և զառաջին հնորն։ Այսպէս է զի ձև այսր խորհրդոյ նշանակէ զթողութեն մեղաց, զոր հայցէ վասն հիւանդին քահանայն պաշտօնեայ Աստուծոյ, և սէն յակոբոս խօսելով վասն հիւանդին՝ որ ընդունի զայն, յայտնապէս ասէ. * Եւ եթէ մեղս ինչ իցէ գործեալ, թողցի նմա ։ Արդ աւետարանչին թէպէտ ասէ թէ բժշկիցէ զհիւանդս, այլ ոչ ասէ՝ թէ թողութիւն զմեղս նոցա։ Զ. զվերջին օծումն չէ պարտ տալ այնմ որ չիցէ մկրտեալ. զի մկրտութիւն է գուռն որ մուծանէ յեկեղեցի. ապա ոչ է ընդունակ խմբի խորհրդոյ այն որ չէ է մկրտութիւն մուծեալ յեկեղեցի։ Աւաքեալք օծանէին զհիւանդս նաև զոչ մկրտեալս. ապա իւղոնն այնուիկ ոչ տային զվերջին օծումն։

Սակայն և այնպէս ասէ կաղիստոս, թէ բաւական նշանակեալք յաւետարանին մարկոսի, * Եւ օծանէին իւղով զբազում հիւանդս ։, ցուցանէն թէ առաքեալք բազում հիւանդաց տային զվերջին օծումն։ Այս վարդապետութեն է սոյն ժողովոն որ ի գլուխ առաջին չորեքտասան գլուխն ասէ. * Սահմանեցաւ այս նոր օծումն հիւանդաց իբրև Ճշմարիտ և տիրապէս խորհուրդ նորոյ կտակի ի Աստուծոյ նոսին մերմէ առ մարկոսի աւանդեալ կամ մուծեալ, և ի ձեռն յակոբայ առաքելոյն եղբօր նոցն՝ հաւատացելոց յանձնեալ և հրատարա-

կեալ։ [illegible]։ Եւ զի ոչ ասել յանդգնել, [illegible]
առ մարկոսի, զոր կամս պարտս էր ասել, եթէ օձուն
զրամի խօսի մարկոս էր լակ ձև և լակ նշան խորհր-
դոյ վերջին օձման։ այլ ասել աւանդեալ, կամ մեր
ձեալ։ որ է ասել թէ առեալ լինեալ յառաքելոց
առ կենդանութիւն Աստուծոյ։

Յուցանի այս Ճշմարտութիւն տրամաբանութեամբ։
Աստուածայ՝ ի կիր արկանելին զիւրն ոչ որոշ զբժիշկս
՝ի գեղ բժշկութեան մարմնոյ հիւանդութեան։ ապա թէ
ոչ՝ կարի սակաւք կարելին ողջանալ այսպիսի գեղով։
զոր կամ և պաշտօն նոցա կամ գործ ոչ էր բժշկել զա-
օրինի բժշկաց, այլ առաքելաբար՝ աբանելովք, և
ոչ բնական գեղոք։ Եւ առնելին զայն իբրև ձև կամ
նշան աբանելեաց, կամ ածային մարգարէութեան,
և կամ խորհրդոյ որ յետոյ հանդերձեալ էր տարմա-
նիլ։ զի կամիր Աստուծոյ նոցա պայծառ և յայտնի
աբանելովք վկայեցին աւետարանին, զոր քարո-
զելին։ ապա չէր կարելի զայն նոցա իբր եղանակ
իմն, որ առ բազումս ընդ երկրայութիւն արկանէր
զաբանելիս։ ապա չէր պատուիրեալ տալ զառաղ-
ջութիւն մարմնոյ զորութիւն իւրոյ ահեղ։ ապա թէ
ոչ՝ անհաւատք հաւակելին ի ժողովրդեան, թէ ա-
ւաքելոյ՝ ի բժշկութեան հիւանդաց ունին զգաղտնի
իմն գեղ ծածկեալ յայտ իւր։ Եւ և եթէ այն
լեալ էր արարազութիւն իմն պատուիրեալ նոցա՝ ի
Աստուծոյ առ՝ ի բժշկել զհիւանդս, ոչ երբէք զանց առ-
նէին։ և սակայն գտանեմք զբազում բժշկեալ՝ ի
նոցանէ առանց այնր օձման։ Այլ ասեալ ասել, թէ
զայն օձումն առնելին իբրև խորհուրդ նոր օրինաց
պատուիրեալ նոցա՝ ի Աստուծոյ անուն մերմի։

Ապայսպիսի եղեալ՝ առ առաջին ընդդիմութիւնն
տայ պատասխանի կալցնս։ ապաքէն և ոչ զայն
գտանեմք ասել, թէ այս խորհուրդ չիցէ ցայժմամ
տարմանեալ։ բայց թէ յայժմամ զառաջինն տարմա-
նեցաւ, ցուցանի, զի գտանեմք թէ յայժմամ
տային զայն։ Այնմանպէս ոչ գտանեմք թէ Աստ-
տարմանեալ իցէ զայն օձումն՝ եթէ ենթադրեացի
թէ ոչ է խորհուրդ։ և սակայն ոչ ոք ուրացի թէ

'ի նմանել եղև սահմանեալ. առ որոյ հաստատութեան շատ է տեսանել զի առաքեալք 'ի զորձ արկանէին զայն։ Ներկայ երևի թէ Յն զայս խորհուրդ սահմանեաց, յորժամ ուսուցանելով առաքելոց զգործս պաշտաման իւրեանց, ասաց. * Զիւանդս բժշկեցէք ||. իբր զի յուսուցանել յայնժամ զեղանակ բժշկութեան հիւանդաց, սահմանեաց և պատուիրեաց նոցա պաշտել զայս խորհուրդ հիւանդաց իւրով։

Զ. երկրորդն ասէ. Զի այնպէս հաստատի թէ առաքեալք չէ էին յայնժամ քահանայ։ Զ. յլ պահելով զհաստատակաց կարծիս, ասելի է՝ թէ կարօղ էր Յն և յառաջ քան զքահանայութիւնն տալ նոցա իշխանութիւնս ինչ. զոր յետոյ միայն քահանայից կամեցաւ տալ։ Զ. թէ առաքեալք կարգեցան քահանայ միայն 'ի վերջին ընթրիս, որպէս ասի 'ի բաղմաց, ապաքէն և յառաջ քան զայն ասացեալ էր Յն։ Ես առ նոսա. (մատթ. գլ. ԺԸ. 18.) * Զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս||. ապա կարէր տալ նոցա իշխանութիւն մատակարարել զնորհուրդ վերջին օծման յառաջ քան զելանել նոցա 'ի քահանայութիւն։

Զ. երրորդն ասէ. որպէս տեսաք յիւրում տեղւոջ Յն ոչ միրտէր, սակայն աշակերտաց նորա միրտեին միրտութիւնք զոր ինքն սահմանեալ էր։ Այնպէս թէպէտ Յն չիցէ ուրեք տուեալ զվերջին օծումն (որ չէ յայտ), առաքեալքն կարէին տալ։ Յն սովոր էր բժշկել զանմնայն հիւանդս, որք մատչէին առ նա, և եթէ կամէր թոյլ տալ ուրեք 'ի նոցանէ մեռանել, գիտէր զվիճակ հոգւոյ նորա, և կարէր առանց այնր խորհրդոյ տալ զթողութիւն մեղաց և զարբարար ընարհս. բայց ոչ նոյնպէս առաքեալքն։

Զ. չորրորդն ուրանայ թէ առաքեալք օծանէին զամենայն հիւանդս. աւետարանն ասէ. * Օծանէին իւղով զբազում հիւանդս||, այսինքն զնոսա որք էին 'ի վիճակի ընդունելոյ զայն խորհուրդ։ Զ. ոչ իսկ

ասէ աւետարանն, թէ ամենեցուն սոցա թողութիւն լինիցի մեզաց. զի մարթի էր ոմանց ի նոցանէ անպատրաստ գտանիլ. և առաքեալք չունէին հաստատուն զգիտութիւն ձանաչելոյ զԾածուին սրտի։ Լ։ կարծիք հաւանելի, այլ ոչ հաւատի, թէ խորհրդով վերջին օծման թողութին գազանի մեղք զոր ոք անպատրաստելի ապիտութիւն ապիտանացեալ ունել ի հոգին։ Լ։թէ Ն.մարիա իցէ այս կարծիք, և եթէ չիցէ, սակաւին լռելն աւետարանին թէ մեղք թողեալ լինիցին, ոչ ցուցանէ թէ ոչ լինիցին թողեալ. որով լուծանի հինգերորդ ընդդիմութիւնն։ Ալ և բաւական ապացոյց առ ի հեռաւեցուցանել թէ ի չիրէլոյ զգործն, չիցէ մերձեցուցեալ պատճառն. մարկոս խօսի զպատճառէն, և ոչ զգործոյն. զի ի Ծանօթութէ զոր ունիմք ի հաւատոյ՝ բան բաւական հաւատի եմք, թէ այս գործ ասոյգ է ի նոսա՝ որք մեզաք իւրեանց ոչ գնեն արդելս։

Լ։ մերերորդն՝ որպէս առ չորրորդն ասէ. ո՞ ասոյց հակառակորդաց՝ թէ առաքեալք օծանէին զհիւանդս նաև զոչ մկրտեալս։ Պ։խոսեմք զի բազումք յոյժ ընկալան զմկրտութիւն Պ։նի. և չէ ինչ մեծ, թէ բազումք ի նոցէ հիւանդացեալ գտան ի վասնզ մահու. և աւետարանն ոչ ասէ ինչ աւելի՝ ի գրելանդ, թէ * օծանէին իւղով զբազում հիւանդս։ Լ։ եթէ չէին ամենեքեան յառաջագոյն մկրտեալք, նորին իսկ առաքեալք նախ քան զպաշտել նոցա ըստ խորհուրդ վերջին օծման, մկրտէին զնոսա. որպէս և այժմ եթէ եպիսկոպասուքք յառաջ քան զտալ զկարգ կղերիկոսաց, զիսաստացեն՝ թէ նոքա չեն տակաւին ընկալեալ զիսորհուրդ դրոշմին, նախ պարտին դրոշմել, և ապա ձեռնադրել։ Լ։ յուսափ ինչ առ այս։

Յայժմ առաքեալք շրջէին ի մերձակայ տեղիս և քարոզէին, Յն գնաց ի նազարէթ. որովհետև ասէ կաղինոս, զի ոչ ի գնալ նորա, ոչ ի մնալ, և ոչ ի մէնիլ նորա ի նազարէթէ՝ գտանի ինչ յիշատակ զերկոսասանից, և զաշակերտաց, երևի թէ գնաց առանց նոցա։ Լ։ատ նորին կաղինոսի՝ այս էր.

բորդ անգամ է զի Յիսուս մկրտութեան իւրոյ գնաց
'ի Նազարէթ. զառաջինն գնաց անդ վասն վաղվաղակի
զկին քառասնօրեայ պահոց, եւ զուկայ։ Երկրորդ անգ-
ամ գնաց անդ մինչեւ եր ընտրեալ զառաքեալս,
բան մարկոսի։ Այս երրորդ անգամ գնաց զկին ա-
ռաքելոյ 'ի քարոզութիւն զառաքեալսն։ Այս երիս
Հանապարհորդութիւս իւր 'ի Նազարէթ՝ կամեցաւ Յի-
ուսուցանել մեզ, թէ քարոզութիւնք և հոգեւոր մեծ-
կութիւնք լաւ եւս յաջողին և առաւել պտղաբերին
արտաքոյ հայրենեաց՝ քան 'ի հայրենիսն։ Զոյց ան-
սեամբ իցէ զմեզ 'ի հասակի մանկութեան, հատարակ-
ութեան ոչ բերին մեծ ինչ համարումն ունել զմինչ, որ
պէս նորա՝ որ միանգամայն 'ի չափահասութեան եկեալ
տեսանեն։ Զթէ նուաստասոցին իցէ քարոզին, որ
համարէի վասն նուաստութեան տոհմի իւրոյ. իսկ եթէ
մեծասուն յաջնուական զարմի իցէ՝ լինի նպատակ
նախանձու և ատելութեան։

'Ի քարոզել և յուսուցանել յոմն 'ի Նազարէթ,
առաջին անգամ հաճեալ թէն ցուցին նմա և գովե-
ցին. երկրորդ անգամ սակաւ քան զայն. իսկ յեր-
րորդումն չարաչար վարեցան ընդ նմա։ Արիանին
զհաչակ անուանին մա զանազելեաց զոր տարար յերու-
սաղէմ և 'ի գալիլեա. և դարձեալ զարմանային ընդ
քարոզութիւնն՝ զոր սկսաւ անդրէն առնել 'ի լուր նո-
ցա. զի * Երբև կատարեաց Յի զառակս զայսոսիկ,
փոխեցաւ անտի, և եկեալ 'ի գաւառս իւր քարոզէր
և ուսուցանէր 'ի ժողովրդեանցս նոցա։ Զոր փոխ-
նակ օգտելոյ 'ի նմանել՝ երկրորդելին առ նախանձու-
մն ուստի՝ իցէ այս խնամութիւն և զօրութիւնք։ Զոր
գնաւատութիւն տան և ազգատոհմին 'ի մէջ բերեալ,
փոխանակ ասելոյ՝ թէ չէր մարթ նմա ունել զայն ի-
մաստուն և զօրութիւն, եթէ ոչ յոյ, * գայթակղէին
'ի նա։, այս է անգոանէին զնա անմոռութիւն։

Զոր իրրև օր քան զօր առաւելաւ նախանձ նոցա
և չարութիւն, գիտելով յոմն զչարախորհուրդ միտս
նոցա, ասէ ցնա. * ապաքէն ասիցէք առ իս զառակս
զայս, բժիշկ բժշկեա զանձն քո։. իբր ասէ. զու
փեղէն խնամ ասր ջեղ և քոյոցդ. քեզ՝ առ ապրե-

ցուցանել զանձն քո ի ձեռաց մերոց, և քոյոցդ՝ ոյսմիրն Հայրենեաց։ ուստի ոչուտ սրանչելիս լուսաբ զի արարեր ի կախառնուտս, արա և առա ի քում գաւառի։ Լակ ՀՅ նախ զայն յուշ արար, թէ չի մարգարէ ընդունելի ի քաղաքի իւրում։ վասն որոյ ի զուր է առաջի ձեր առնել սրանչելիս, զի ոչ ընդունիք և ոչ հաւատայք։ ԼՀ ապա ի վերայ հաց, ապաքէն բազում այրիք էին յաւուրս եղիայի ի մէջ խորայելի, յորժամ փակեցան երկինք զերիս ամս և զվեց ամիս, և եղև սով մեծ ընդ ամենայն երկիրն՝ և ահա և ոչ առ մի ի նոցանէ առաքեցաւ եղիա՝ եթէ ոչ ի սարեփթա քաղաք սիդոնացւոց հեթանոսաց առ կին մի այրի։ ԼՀ առ եղիսէիս մարգարէի բազում բարոյք էին յիսրայելի, և ոչ որ ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն սատրագին նեեմանն ասորի։ ԼՀնկարացեալ լսողաց տալ ինչ պատասխանի առ օրինակսն որք էին ի յանդիմանութեան նոցա, այնուամենայնիւ կատաղեցան, զի առժամայն հանին զնա ի ժողովրդականաց անտի ուր խօսէր, և ի քաղաքէ իսկ իւրեանց։ և ածին յարտեւան լերինն առ որոյ լանջաց քաղաք նոցա շինեալ էր, գահավէժ առնել զնա։ ԼՀ յաւուրն ի միտ թէ նա առաւել է յոյժ քան զլակ մարդ։ որ իւրով անելանելի զօրութիւն ի գերև հանէր զանձնայն զօրութիւն և զանձնայն ձիգն նոցա։ Օ ի այն ինչ անմիտք կառեալ կային ի ծայրս գահանդին՝ փակել զնա ի թիկանց, այլք ձգեալ զձեռս մղել զնա, կէսք այսպէսքն՝ զի մի փախիցէ, ՀՅ հանդարտաբարձալ ձեռքով թողեալ զնոսա յիւրարանչիւր տեղիս ուր կային՝ էանց ընդ մէջ ամենեցուն նոցա, ոչ իբր փախստական, այլ իբր այն որ զնոյ վստահաբար զանձնապարհ իւր՝ առանց ուրուք հետամուտ լինելոյ նմա։ և էջ ի կախառնուտս։ * ԼՀ նա անցեալ ի մէջ նոցա, գնայր։ Ամենեք հաստատեցին թէ անելանելի արար ի նոցանէ զանձն։ բայց պատասխանիւն աւետարանչին յայտնապէս տայ խնդալ՝ թէ տեսանելի մնաց, բայց անարգանելի։ և յայտ իսկ էր սրանչելիքն ածային կարդալոյ նորա։ ԼՀ այսպէս ետ ՀՅ ճանաչել զինքն փոքրիկ ամենա-

կարօղ ՝որ. որոց ոչ կամենայն ընդունել զնա փրկաբար վարդապետ։

ԳԼ. ԻԼ.

Գլխաւորեան սէրն Յովհաննու հրաւէր՝ առ անխոնջեմ խոսմանն հերովդէ, և նա զարթօղն խոսրմանն։ Լուա տիրոջ գոռանն ՝ի տարաբնէ. և Յոյ՝ ոչխ զնոս յանապատ ի՞սր մի հանիցուք առանոյ։

* Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրորդապետ զլուր Յսի ‖ եւ. (մատթ. ԺԴ. 1. մինչև ՝ի 13։)
* Լու լուաւ Հերովդէս, քանզի յայտնի եղև անուն Նորա (Յսի) ‖. և այլն. (մարկ. Զ. 14. մինչև ՝ի 33։)
* Լու լուաւ Հերովդէս չորրորդապետ զգործսն ամենայն. և զարմանայր ‖ եւ. (ղուկ. Թ. 7. մինչև ՝ի 11։)

Մինդեռ առաքեալքն՝ երկրորդ անգամ՝ ի կարծեաց կաղինասի՝ առաքեցան ՝ի Ինոն և չրջելին քարոզել և՝ ուսուցանել ՝ի մերձակայ գաւառս, արեամբ նահատակեցաւ ՝որն Յովհաննէս մկրտիչ։ Լսին ա մինք իբր վեշտասանք, զի Յովհաննէս կայր փակեալ ՝ի բանտի հրամանաւ Հերովդի արքայի՝ ոչ այնչափ ՝ի շատացուցանել զդժոխսին որակալութիւնն Հերովդիադայ, որչափ արդեօք ՝ի պատհասել զկեանս նորա յանօրէն ցասմանէ կատաղի կնոջն. որ զայրանայր ընդ իրաւացի յանդիմանուն ՝որն առ Հերովդէս՝ թէ կինդ այդ ոչ է քո ըստ օրինաց։ Շ զնայր որք կապեալ ունէին զ Յովհաննէս, կապեին և զձեռս Հերովդիադայ, զի մի կարիցէ տալ յարձակ վայրի բերել ՝ի սպանութիւն Նորա. որմունք որք փակեին զնոսա Յովհաննու, արդ ելուն զմուտ արեանարբու

սրիկայից նորա. պահապանը որը խոփանէին զաղա-
ատիթիւն յոյժանուտ, պարտականէին զկնեանս նորա։
Սակայն և այսպէս յաջողեցաւ ժանտաժուտ կնոջն
հասանել չար կամաց իւրոց կատարման, ոչ 'ի ձեռն
արիւնռուշտ սիկարեանց, այլ 'ի ձեռն կաքաւիչ
աղջկան։

Ի անգի յոր ծննդոց հերովդի արքայի՝ յորժամ
ընթրիս տայր նախարարաց իւրոց և հազարապետաց
և մեծամեծաց գալիլեացւոց, մուծաւ 'ի տաճար
անդր իսրայէանուն գուտար հերովդիադայ որ 'ի չար-
արուեստս կապուս ոտից իւրոց յինքն ձգեաց զսիրտս
համբոյն բազմականաց և առաւելանչ զսիրտ թագա-
ւորին. մինչ զի նոյնժամայն խոստացաւ տալ նմա զոր
ինչ և կամիցի մինչև ցկէս թագաւորութեան իւրոյ.
զոր և երդմամբ հաստատեաց բազում անգամ։ Ինձ
վրիպակ է առն մեծի՝ դնել դաշն առանց զմտաւ ա-
ծելոյ թէ ընդ ո՞մ լինի դաշնադիր, և խոստանալ
առանց գիտելոյ՝ թէ զինչ խոստանայ։ Հերովդէս
քնաւ ոչ կարծէր թէ յայտնի աւուր խրախութեան լսի-
ցէ խնդիր ազգ, և տեսանիցէ 'ի զուարթագին սե-
զանի անդ գլուխ մեռելոյ։ Այլ պարտական էր
զմտաւ ածել՝ թէ աղջիկ մի ժանտաղանիա կարէր
խնդիր ինչ առաջի առնել լի անխորհրդութիւն։ և անա-
գան էր յոյժ ապաշաւել, յորժամ երդմամբ հաս-
տատեալ էր՝ յառաջ քան զլսել զխնդիրն։ Լրևի
թէ աղջիկն էր դեռահասակ և տհաս մտաւ. ապա
թէ ոչ՝ չանսայր քնաւին անարժան խրատու մտին,
խնդրել զգլուխ մի մեռելոյ, ուր կարօղ էր ժառանգ
լինել կիսոյ թագաւորութեան։ Այլ տակաւին աղջիկ
մի տխմար առաւել խորհեմութեան եղոյց քան զարքայ.
զի սա խոստանայ առանց գիտելոյ թէ զինչ խոստա-
նայ. իսկ նա գիտելով թէ ինքն չէ բաւական ընտրե-
լոյ զլուսն՝ դիմէ առ մայրն, ակն ունելով առնուլ 'ի
նմանէ խորհուրդ զպատշաճագոյն խնդրել։

Այլ վրիպեցաւ ողորմելին. զի հերովդէս ընկրդ-
մեալ 'ի սէր իւր աղջկանն, մնացաւ զլինել իւր
թագաւոր. իսկ հերովդիադա ընկղմեալ յոխակա-
լութեան իւրում, մնացաւ զլինել մայր. ոչ հայեցաւ

յերջանկութեան գտանէն, այլ հայեցաւ գտանել ժամ դիպող առ՝ ի զլուխ տանել զգազանային վերժիմն զրութեան իւր։ Զինչ փոյթ կալաւ կեաս թագիւ զարդարել զգլուխ գտանէն. վասն զի բարձմամբ կենաց յուսիանուս մկրտչի՝ համարեալ ունել՝ ի ձեռին զոլոր թագաւորութեան։ Յորչափ վատանուն հնուն ունէր զանուն կնոջ թագաւորի, առաւել էր քան զթագուհի. զի ինքն էր նոր թագաւորին։ Կայց միշտ էր՝ ի միտս կատարածոտս, թէ ցորչափ կենդանի է յուսիանէ՝ նա հնարի հատանել զայն վատանուն ազգատիրոջ ամուսնուն. որ եթէ միանգամ յաջողէր, ինքն առ թագուհին՝ ի վերհ անել լինէր գահավէժ։ Զատի առաց ցդուտարն, գնաց վարդապետի և խնդրեաւ զգլուխ յուսիանուս մկրտչի։ Ա ասն որոյ ասի, * Լսէ մնեալ անդրէն փութանակի՝. քանզի ամենայն ստիպով փութացոյց զնա հերովդիադա, առ՝ ի չթողուլ ժամանակ հերովդի զզջանալ և յետս դարձուցանել զխոստումն. միանգամայն առ չդատանելոյ և անշէկանն միջոց մտախոհ լինելոյ յանձն իւր և փոխելոյ զիրն դիրն, ասելով՝ ի միտս, զինչ շահեցայց ես՝ ունելով՝ ի ձեռին զգլուխ մեռելոյ։ Լսէ այսպէս անխորհրդաբար արագ արագ եմուտ և խօսեցաւ աղջիկն առ հերովդէս այսպիսի եղանակաւ, որ յայլ հատակաչափ աղջիկ՝ անշուշտ երևեալ լինէր յանդուգն լրբութեամբ, այլ յայն մատաղ հատակ՝ այն իշխանական համարձակութեան նորա թուեցաւ անուշակ ինն շողմանութեամբ. * Կամիմ ասէ զի այժմ տացես ինձ վաղվաղակի այսր՝ ի վերայ սկսեալ զգլուխն յուսիանուս մկրտչին։ Զանզի այս բառս՝ ի մտքին եդան՝ ի բերանն ելանելս, որպէս հատանելի երևի, խրատեցաւ՝ զի ասիցէ ֆամ, առ բառնալոյ՝ ի հերովդէէ զամենայն յոյս փոխելոյ զինդիրն։

Եթէ հայցէր իբրև ազատաւոր՝ ցուցանէր մեծագոյն յարգութիւն, բայց փոքրագոյն և թոյլ պատճենումն ոչ շատացաւ խնդրել զմահ, այլ զգլուխն կամեցաւ, առ՝ ի բառնալ զամենայն կասկած խաբէութեան. զի չէր պատեհ հերովդիադայ անձամբ երթալ տեսանել զդէն՝ ի բանտն. այլ ապահովանայր

թէ չէ խաբէիշ, յորժամ զգլուխն հատանէիր ի մարմնոյ տեսանէր ի ձեռս գոտեր իւրոյ։ Լ՚սաց՝ տալ զիրքն-գրելին Վռվեղեանի. առ չտալոյ Հերովդի ամենեին պա-բատ՝ խորհել և գտանել պատրուակ և փախուստ։ Լ՚սաց՝ ոչ, յայտ տեղւոջ. որպէս զի թէ կամիցն զակասել ի խոտանանել, ամենեսցէ ի բազմակատաց անտի։ Լսնգրեաց ի Ներոյ գրեշ. զի մի պատճառա-նաք գազարելոյ հոսման արեանն՝ յամենայնի բերել զգլուխն, երբ մեռացուցեալ արեան կարէր կալ յսկաեղ։ Լաբ ևս փութայոյց ամբարտաւանն Հերովդիադա բերել ի տաճար անդր խրախութիւն զգլուխն զայն՝ իբրև յաղթանակ՝ առ ի ցոյց սիրատենչաց իւրոյ ի վերայ առնն, որում ապահովանայր թէ ամենեին ոչ որ յընտանեաց Հերովդի, և ոչ ի մեծամեծաց որ իշխեսցէ խօսել ինչ ընդդէմ անարկն ամենանուն իւրոյ, ի տեսանել նոցա զգլուխն զայն հատեալ լոկ վասն անարգելոյ զամուսնութիւն իւր։

Հերովդէս ի խոր խոցեցաւ ընդ այն անտեսանելի խնդիր, և սրբեցաւ ընդ երդումն, ոչ այնչափ վասն այլոց պատճառաց, որչափ զի կարի դժպատեհ երևեցաւ յաւուր անդ ծննդոց իւրոց և ի հանդիպ սի խրախութիւն, յորում արժան էր առնել հնարս և յանցաւորին, գատապարտել զանմեղն և զարդարն առանց քննութիւն, առանց ամբաստանողի լոկ առ ի հաճեցուցանել զկին մի. քանզի գիտէր՝ թէ այդ և յետին վատթարութիւն և տկարութիւն անարգ և անարժան իւրումն մեծութիւն։ Կատարեալ զնանեան ընդաւ-բոյս բնաւորութիւն անձին, թէպէտ պաշտամ՝ այլ ոչ արեանարբու. և եթէ անասնոյ բնութիւն մնէր զնա ի վատաղ ցանկութիւն, այլ ոչ ի բռնաւորութիւն։ Լե-էր հրեայ, բայց և ոչ անուն. և եթէ կամաւոր կու-թիւնք խղճի մտաց՝ կարծէր, թէ ուժ նեղեսցէ ան-պարկեշտութիւն իւրոյ, ոչ կարծէր թէ չլինիցի սր-գաբ վրեժխնդիր անպիծութիւն իւրոյ։ Բ՚աջ գիտէր զի երդումն իւր ոչ պարտաւորէր զնա. զի ոչ բնաւ խոր-հէր թէ անիրաւ ինչ խնդրեսցի ի նմանէ. և թէև գիտացեալ էր, սակայն գիտէր և զայն թէ այնպիսի երդումն խառնելի է, և ոչ զարծով կատարելի։

Լ. Յլ Յայրագոյն տագնապ սրտին Հերովդի այն էր, զի երդուաւ առաջի բազմակցաց, և տեսանէր զամենեսին հակառակս 'ի կողմն աղջկան. գուցէ ապաշեցեալն էս զնա հաճեցուցանել զաղջիկն, և չարձակել զնա տրամեալ։ Վասն որոյ զի այն ինքեան 'ի մտին էր. և ոչինչ փոյթ էր նոցա թէ բանտարկեալ մի մեռանիցի, եթէ զարձակեցեալ 'ի մահնոցա՝ գացէն շնորհս առաջի Հերովդիադայ, որ էր հրամանատարքոլոր թագաւորութեան։ Հերովդէս ոչ զօրեաց տրամեցուցանել զաղջիկն յայտնի հանդիսի. և ընտրեաց լինել արիւնահեղ բռնաւոր վասն մարդկային ակնածութեան. * Ամն երդմանցն և կոչնականացն ոչ կամեցաւ անտրտել զնա, և հրամայեաց տալ նմա։ Լուաբեաց վաղվաղակի զմի 'ի զինուորաց իւրոց. ա բոյ գլխատեալ զյովհաննէս 'ի բանտին, երեր ըզգլուխն սկտեզն, և առաջի արար Հերովդի և ամենայն կոչնականացն։ և Հերովդէս ետ ցաղջիկն։ և նա տարաւ ետ մօր իւրումի։ Լսեալ մեծեղէան ոմանք զարծուածս, զոր ակամայ կամօք հարկ համարեցաւ գործել Հերովդէս. յորմէ ամենայն ոք պարսի առնուլ խրատ և ուսումն մեծ՝ արթուն և զգաստ լինել 'ի խոստմանս, և զգոյշ 'ի մարդկային ակնածութեան, որք զօրեն ածել զմեզ ընդդէմ կամաց մերոց յանհնարին անպարշտութիւն։ Շակերտքն յովհաննու ընկալան զպատուական մարմին վարդապետի իւրեանց, և եդին պատուով 'ի գերեզմանի. և եկեալ պատմեցին Յիսուսի։

Նմին ժամանակի դարձան և առաքեալքն 'ի քարոզուէ 'ի կոփառնաումա առ Յիս. և պատմեցին նմա զամենայն զոր ինչ արարին և զոր ուսուցին։ Ցեսեալ Յիսուս զնոսա վաստակեալս յոյժ, և զյոգս վարդն որք գունդագունդ զօրէն տեղատուեանն և մանկութեացութեամբ ծովու երթային և գային, մինչև հաց անգամ չներէին նոցա ուտել, ասա զնոսա և տարաւ յանապատ տեղի առանձին՝ փորք մի հանգիստ առնուլ։ Ուստի յայտնապէս ունիմք խնամատարել, թէ յովհաննէս գլխատեցաւ սակաւ աւուրքք յառաջ քան զպատիին։ Անդի այս անգամ յերթալ

Հոգի յանապատ աշակերտաբար հանդերձ՝ արար զբանդելիս բազմացուցանելով զՀնոգ նկատակն. այն՝ որ ի յովհաննու առեւտրանքին (գլ. Ի.) եղև մերձ առ երրորդ զատիին քարոզուն Հոգի. յովհաննէս արկաւ ի բանտ իբր չորիս ամսոք և ասկաւ ինչ յառաջ քան զերկրորդ զատիկ քարոզուն Հոգի. որպէս տեսար անդ, ուր Հոգ դարձոյց զկինն սամարացի. ապա գլխատեցաւ մերձ ի զատիին զկնի իբր վեշտասան ամենան իւրոց բանտարկութեան։ Ա՝ ասն այնորիկ հայաստանեայցս եկեղեցի զնիշատակ զԸլխատման նոցն միաբանին կատարել ի շաբաթու որ յառաջի բան զնոր կիւրակէն. զի նախընթաց աւուրբ զատկին գրաւեալ են ի յիշատակ շաբաթանոց փրկչին։ Ա՝ ասն սարին պատճառաւ և արեւմտեան եկեղեցի փոխադրեալ է զայս ասն ի 29. ( )դատասի. և կատարել ի միասին ընդ գիւտոյ գլխոյ նոր։

